

Ալեքսանտր Սարուխան Յուշեր



Ինչպէս եզրափակու եկայ
և
Ինչպէս երգիծանկարիչ եղայ

Ալ. Սարուխան

Ալեքսանտր Սարուխան • Յուշեր

Ալ. Սարուխան

Երբ մարդ յետադարձ հայեացքով խորամուխ կ'ըլլայ իր անցած կեանքին վեր իվայրուժներուն թէ հարթութիւններուն, իրեն հրամցուած խաբէութիւններուն հոգածութեանց, բացասական թէ դրական անակնկալներուն, պարտադրուած կորուստներուն թէ արդիւնաւետ ճիգերուն...:

Եւ երբ մարդ իր բարեկեցութեամբ, լուստեցութեամբ, իտեպիզմով դիմաւորած կ'ըլլայ կեանքի հրամցութիւնները եւ իր կեանքի ամբողջ այդ կայտը ինք կը գնահատէ ծայրիտով քան կսկիծով, խնդրով քան ոխով, մեծահոգութեամբ քան դառնութեամբ...
...Եւ երբ մարդ այդ անցեալ կեանքին ամբողջութեան մեղրն ու մրուրը կը մատուցէ գրաւոր երգիծանկարչութեամբ, կը նշանակէ որ մենք տրովելիք ունինք Ալեքսանտր Սարուխանի երգիծանկարչութենէն, բայց մանաւանդ արժեհամակարգէն:

Դոկտ. Անդրանիկ Տազեւան

Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Տնօրէն

Սարուխանի այս հրատարակութիւնը իր ողիսական է մեր ազգային լինելութեան բախտորոշ շրջանին:

Անշեղ ուղեգիծն է ան վճռական անհատի մը, որուն նշանաբանը եղած է չուսահատիլ, անվիատ պայքարիլ ձախորդութիւններու դէմ, քսալ ամուր կառչած իր իտեպիւն, որ երգիծանկարչութիւնն է, նուիրական կոչում մը՝ որ տաղանդին համապատասխան սէր է «կիրք» կը պահանջէ, եւ որմէ հեռանալ համագոր է ինքնադաւաճանութեան: Հայ երգիծանկարչութեան այս մեծագոյն դէմքը, որ եզրիտական հոչակաւոր երգիծաթերթերուն մեծահամբաւ երգիծանկարիչը եղած է, ձգտած է ազատ ապրիլ կիրարկելու համար իր հզօր արուեստը. «քննադատել, բայց ոչ մեղսել, ուղղել, բայց ոչ կոտրել», միշտ «թունագերծ», ինչ որ կը բացայայտէ իր այնքա յն մարդկայնական եւ ազնուական նկարագիրը:

Գրիգոր Քեօւեան: Արուեստարան

Այլ Սարուխանի յուշամատյանը կը ըմբռնենք շնչասպառ:

Մա հետաքրքրաշարժ շարժապատկերի համար պատրաստի սցենար է: Ընթերցելիս ոչ թէ կ'ըմբռնենք իր երգիծանկարիչ դառնալու մասնագիտական և արհեստավարժական գաղտնիքներուն, այլ կը բացայայտէք մարդու մարդ դառնալու և մարդ քսալու գերմարդկային ուժի ձեռքբերման գաղտնիքները որուն յետոյ միայն երգիծանկարիչ Սարուխանը:

Վրէժ ՔԱՄՈՒՆԻ

Երգիծանկարիչ, գեղանկարիչ, կինո ռեժիսոր, անիմատոր



Չախեն ագ: Ապտէլ Քասրէր Շենաուի, Ալ. Սարուխան- Գահիրէ, Օգոստոս 1924

Ալեքսանտր Սարուխան

Ինչպէս Եգիպտոս Եկայ

և

Ինչպէս Երգիծանկարիչ Եղայ

Երկրորդ հրատարակութիւն

Գահիրէ, 2024

«Անչափ ուրախ եմ գտած յաջողութեանդ համար: Կը նախանձիմ անոնց, որոնք այսօր, իմ փոխարէն կը վայելեն պտուղները այն ծառին, զոր ես ձեռքովս տնկեցի այս երկրին մէջ...»

Ապտէլքատէր ԷլՇեննաուի

«Տաղանդը լաւ բան է: Բայց կիրարկուած ճիւղին հանդէպ կիրքը ատելի լաւ է: Կարելի է ըսել, թէ լաւ է նուաճ տաղանդ ունենալ, բայց սէր ու կիրք ունենալ գործի մը հանդէպ, քան մեծ տաղանդ ունենալ, բայց չսիրել ընտրուած ճիւղը»:

«Մի մոռնաք մէկ բան: Մարդս որքան ալ երկար ապրի, մինչեւ իր կեանքին վերջին ժամը նոր բան կրնայ սորվիլ: Ամէն մէկերնիս իրարու փորձառութենէն կրնանք օգտուիլ»:

Ալեքսանտր Սարուխան

Կենսագրական

Ալեքսանտր Սարուխան ծնած է 1 Հոկտեմբեր 1898-ին՝ Կովկասի Արտանուշ օւանը: Երկու տարեկանին, ընտանեօք կը փոխադրուին Պաթում՝ Վրաստան, ապա 1909-ին Պոլիս, ուր կը յաճախէ Փանկալթիի Վիեննական Մխիթարեան Հայրերու Լիսէն:

Համաշխարհային Ա. պատերազմին պատճառաւ Ալեքսանտր Սարուխան ու իր եղբայրը՝ Լեւոն, որպէս գիշերօթիկ սաներ կը մնան Մխիթարեաններուն մօտ, մինչ ընտանիքը կը վերադառնայ Արտանուշ:

Մխիթարեաններուն մօտ մնալը փրկած է զիրենք Մեծ Ջարդէն, որովհետեւ Լիսէն կը վայելէր Թուրքիոյ դաշնակից՝ Աւստրիոյ հովանաւորութիւնը:

1922-ին, երբ նոր վտանգ կը սպառնայ Պոլսոյ հայութեան, Սարուխան ու իր եղբայրը կը միանան Պելճիքա գտնուած իրենց հօրեղբօր՝ Առաքել Սարուխանի, որ նախկին տնօրէնն էր «Մանթաշէֆ» ընկերութեան: Այսպիսով այլեւս վերջնականապէս կը բաժնուին իրենց ծնողքէն ու քոյրերէն:

Նկատելով իր եղբօրորդոյն նկարչական տաղանդը, հօրեղբայրը զինք կ'ուղարկէ Վիեննա, ուր ան կը հետեւի գեղանկարչութեան ու վիմագրութեան արուեստին, զոր կ'աւարտէ երկու տարի ետք:

1924-ին ընդառաջելով եգիպտացի ուսանողի մը առաջարկին, որպէս երգիծանկարիչ աշխատելու իր

հրատարակելիք թերթին մեջ, կու գայ Գահիրէ: Դժբախտաբար, թերթը միայն երկու թիւ լոյս տեսնելէ ետք, կը խափանի: Իր ապրուստը ապահովելու համար Սարուխան գծագրութեան ուսուցիչի պաշտօն կը ստանձնէ Գալուստեան Ազգային Վարժարանին և Պէրպլերեան Բուլճին մէջ:

1925 Յունուարին, Սարուխան կը յաջողի իր կեանքին երազը իրականացնել՝ հրատարակել «Հայկական Մինեմա» երգիծական ամսաթերթը, որ նիւթական դժուարութիւններու պատճառաւ, ցաւօք, կը խափանի 50 թիւ լոյս տեսնելէ ետք:

1927-ին, Մուհամմէտ Էլթապիի առաջարկին ընդառաջելով, ան որպէս քաղաքական երգիծանկարիչ մաս կը կազմէ անոր խմբագրած «Ռօզ Էլ Եուսէֆ» շաբաթաթերթի անձնակազմին: Այսպէս է, որ ծնունդ կ'առնէ իր գործակցութիւնը Եգիպտոսի արաբական մամուլին հետ: Ան կը նկատուի Եգիպտոսի քաղաքական երգիծանկարչութեան ռահվիրան մինչև իր մահը՝ 1 Յունուար, 1977 թ.:

Իր իւրայատուկ ստեղծագործութիւններէն է՝ «Էլ Մասրի Էֆէնտի» կերպարը, որ մարմնաւորած է ժողովուրդին հանրային կարծիքը:

Ան իր բեղուն կեանքին ընթացքին մասնակցած է հաւաքական ցուցահանդէսներու եւ կազմակերպած անհատական ցուցահանդէսներ՝ Եգիպտոսի, Հայաստանի, Գանատայի, Միացեալ Նահանգներու, Սուրիոյ, Լիբանանի և Ֆրանսայի մէջ:

Աջակցութիւնը բերած է տարբեր արաբական թերթերու եւ պարբերաթերթերու, ինչպէս՝ *Ռօզ Էլ Եուսէֆի*, *Ախէր Սաայի*, *Ախպար Էլ Եօմի*, *Ալ Կատիտի*, *Ալ Մօսդաքպայի*, *Ալ Քաշքուլի*, *Սաուա Ալ Շարքի*, *Ալ Սարխասի*, *Ապու Ալ Հօյի*, *Ալ Օթումօպիլի* և *Ալ Ուաթանէյայի*:

Սարուխան ծիծաղ բաշխած է նաեւ Եգիպտոսի մէջ լոյս տեսած, ֆրանսերէն թերթերու՝ *La Bourse Egyptienne*,

Images, Le Progres Egyptien, Le Journal D'Egypte: Ան ստեղծած է ֆրանսատառ *La Caravane* ընկերային, քաղաքական և երգիծական շաբաթաթերթը՝ 1939-էն սկսեալ:

Աշխատակցած է նաեւ անգլիատառ թերթերու՝ *Review of reviews, Punch* և *The Manchester Guardian*: Անոր երգիծանկարները լոյս տեսած են Ռ.Ա.Կ. մամուլին մէջ, ինչպէս՝ *Արեւ, Զարթօնք, Պայքար* թերթերուն մէջ:

Սարուխան հրատարակած է շարք մը գիրքեր, որոնց մէջ ամենէն նշանաւորն է *Cette Guerre (Այս Պատերազմը)* ալպոմը, որ լոյս տեսած է Համաշխարհային Երկրորդ պատերազմի աւարտին՝ ֆրանսերէն և անգլերէն լեզուներով:

Իր իրայատուկ ստեղծագործութիւններէն են՝ «*Տես Խօսքերդ*», «*Վասն Եօթն ու Կէսից Կարծեցեալ, Մեղաց Մերոց*», «*Խռֆունի*» և «*Մենք Մեր Ակնոցով*» գիրքերը, նաև զաւելտախաղեր, որոնցմէ աչքի կը զարնէ՝ «*Մենք Հայերէն Ձենք Գիտեր*»-ը, որուն մէջ ան կը քննադատէ «Հայկական»-ը ստորադաս նկատելն ու «Եւրոպական»-ը կիրարկելու բարդոյթը:

Նկարագարդած է Երուանդ Օտեանի «*Ըսկեր Փանջունի*»-ն և Յակոբ Պարոնեանի «*Մեծապատիւ Մուրացկաններ*»-ը:

1960-ին, Սարուխան կ'արժանանայ «*Երգիծանկարներ Իտադադութեան Համար*» շքանշանին՝ Միացեալ Նահանգներու «*Ժողովուրդէ Ժողովուրդ*» երգիծանկարիչներու յանձնաժողովէն:

Սարուխան միշտ պաշտպան կանգնած է Հայ ժողովուրդի արդար պահաջներուն: Հայկական միութիւններու նուիրուած գործուն անդամ եղած ու երկար տարիներ ատենապետի պաշտօն վարած է Հ.Բ.Ը.Մ. Գահիրէի մասնաճիւղին, Հայ Գեղարուեստասիրաց Միութեան, Կոկանեան Սրահի և Հայ Ազգային

Հիմնադրամի վարչություններէն ներս: Ան սրամիտ հրապարակախօս էր:

Իր ստեղծագործություններէն մաս մը պահուած են Հայաստանի Ազգային Պատկերասրահի արխիւներուն մէջ:

Այսօր, Հելիոպոլսոյ փողոցներէն մէկը կը կրէ իր անունը, որպէս երախտիք մեծատաղանդ երգիծանկարիչին անթառամ յիշատակին :

15 Ապրիլ 2018-ին, Եգիպտոսի Երգիծանկարիչներու Միութիւնը գնահատանքի յուշանուէր մը շնորհեց Սարուխանի անունին:

Ինչպէս Եգիպտոս Եկայ. Եգիպտոսի Հողը Կոխեցի՝ Կրակի Վրայ Կոխելու Պէս¹

Թէ մէկ քանի վայրկեանի ընթացքին ինչպիսի՛ արմատական վերիվայրումի կրնայ ենթարկուիլ մարդու մը ճակատագիրը, թէ ինչպէս երագներու երանաւէտ աշխարհէն դէպի յուսահատութեան անդունդը կրնայ իյնալ մէկը՝ ատոր ամենէն դաժան փորձառութիւնը անձամբ ստուգեցի, երբ գիս Թրիէսթէ-էն Եգիպտոս փոխադրող իտալական «Հելուան» շոգենաւր մօտեցաւ Աղեքսանդրիոյ քարափին: Շոգենաւին սանդուխներէն սկսեալ մինչեւ քարափ ոտք կոխելուս միջեւ ապրեցայ կեանքիս ամենէն դժնդակ ողբերգութիւնը, այնքան անակնկալ, այնքան յանկարծական, որքան դառն որ հակառակ անկէ ի վեր յիսուն տարիներուն՝ դեռ մինչեւ այսօր սոսկումով կը վերյիշեմ զայն:

Արդարեւ, 1924, Յուլիս 27-31, Ադրիականի եւ Միջերկրականի կապոյտ ու հանդարտ ջուրերը ճեղքելով, Եգիպտոս ուղղուող շոգենաւին մէջ՝ խանդավառ, վարդագոյն երագներով եւ գեղեցիկ յոյսերով լի երիտասարդ մըն էի, որ անցուցած Պոլսոյ անորոշ ու անապահով կեանք մը, Վիեննայի ուսանողական անձուկ դժուարին հանգրուանները՝ վստահ քայլերով կը դիմէր դէպի

¹ Առաջին անգամ հրատարակուած որպէս թերթօն՝ 9 Հոկտեմբեր - 14 Նոյեմբեր 1975, *Արևի* Օրաթերթի մէջ, Գահիրէ, խմբագրապետ Անետիս Եսփունճեանի շրջանին:

Փարաուններու երկրին մէջ իրեն սպասող փայլուն հեռանկարներով լի ապագան: Ուրախ եւ անհոգ «թուրիաթ» մըն էի, շուրջիններէս ոչինչով պակաս: Բարեկամներու պատկառելի շրջանակ մը կազմած էի նաւուն վրայ, եւ անոնց նման ինքզինքիս կ'արտօնէի գրպանիս մէջ գտնուող մէկ քանի դրուշները առանց վախի ծախսելու, իրարու կենացներ խմելու: Չորս օրուան «իշխանական» կեանք մը, մէկ խօսքով: Ինչ բանէ կը վախնայի: Չէ՞ որ Եգիպտոս հրաւիրուած էի Վիեննայի Կրաֆիք Հաստատութեան մէջ ծանօթացած մեծահարուստ եգիպտացիի մը կողմէ, որ ոչ միայն գործով, այլեւ բնակարանով եւ ապրուստի բոլոր միջոցներով ապահոված էր զիս...: Իր ծրագրած թերթին երգիծանկարիչը պիտի ըլլայի, իր ապարանքին մէջ պիտի ապրէի...

Վիեննայի մէջ օրը օրին հազիւ ապրող ուսանողի մը համար փոքր բանէ՞ր էին ասոնք: Քանի քանի աստրիացի ուսանողներ նոյն հիմնարկին մէջ՝ երանիններ կու տային ինծի: Անոնցմէ շատերը «կոկորդիլոսիկ» մը, «ոնգեղջիրիկ» մը կ'ապապրէին՝ իբրեւ նուէր: Չէ՞ որ Նեղոսը լի էր անոնցմով: Ինչի՞ պէտք պիտի ըլլային գրպանիս մէջ ծուարած մէկ քանի դրուշները, երբ ապահով էի որ քիչ ատենէն դէմ դիմաց պիտի գայի քարափին վրայ անհամբեր ինծի սպասող Ապտէլքատեր ԷլՇեննաուի-ին, Մանսուրայի մեծահարուստ համբաւաւոր ընտանիքի շառաւիղէն, ինք ալ մեծահարուստ մը: Վիեննայի մէջ մեր բերնին ջուրերը կը հոսէին, երբ կ'իմանայինք թէ ամսական երեսուն եգիպտական ոսկի կը ստանար, երբ մենք, հայ ուսանողներս, հազիւ երկու կամ երեք ոսկի կը յաջողէինք քով քովի բերել: Քիչ ետք ես ալ անոր աստիճանին բարձրացած պիտի ըլլայի...: Որքան անհամբերօրէն կը սպասէի երանելի այդ վայրկեանը:

«Հելուան»ը մօտեցաւ քարափին: Ծովածաւալ բազմութիւն մը, ֆէսերու կարմիր ովկիանոս մը: Բարեկամներէս հրաժեշտ առնելէ ետք, կոթնած շոգենաւին բազրիքին՝ աչքս կը պտտցնէի բազմութեան վրայ: Ապտէլքատէր մէջն էր անոնց անշուշտ, եւ ինք ալ աչքերը շոգենաւին ուղղած, կասկած չկար թէ զիս կը փնտռէր, մանաւանդ որ իրեն համար աւելի դիրքին էր զիս նշմարելը, քան ինծի համար՝ զինք: Երբեք զարմանալի չէր թուեր ինծի, երբ հազարաւորներու մէջէն առաջին իսկ ակնարկով չգտայ զինք: Բայց կասկածը պատեց միտքս, երբ քանի ժամանակը կ'իջնէր, անոր հետքն իսկ չէի գտներ, մինչ ճամբորդները մէկիկ-մէկիկ վար կ'իջնէին սանդուխներէն, կ'ընդունուէին եւ կ'ողջագուրուէին իրենց հարազատներուն հետ: Ի վերջոյ, ո՛չ ճամբորդ, ո՛չ ալ սպասող մնաց քարափին վրայ: Միայն քանի մը վերնազգեստ հագած բեռնակիրներ պոռպոպով հոս ու հոն կը վազէին: Ո՛չ մէկ հետք մեր Ապտէլքատէրէն:

Անասելի ու անբացատրելի յուսախաբութիւնը եւ յուսահատութիւնը պատեց զիս: Վար իջնել քարափ ինչ ընելու, ո՛ր երթալու համար:

Շշմած ու գլուխս ուղեղէ պարպուած՝ գամուած, կոթնած մնացած էի բազրիքին, մինչ շոգենաւի պաշտօնեաները կը հասկցնէին, թէ չէի կրնար երկար մնալ հոն...: Անկամ եւ մտածելու կարողութենէ զուրկ, պարպուած ուղեղով՝ քորջի կտորի մը վերածուած էի: Մինչեւ որ բեռնակիրներ քարափէն վեր ելլելով՝ շալկեցին մէկ քանի խեղճուկրակ ճամպրուկներս, զիս ալ պարտադրեցին միանալ իրենց: Պահ մը կանգ առի հոն, շրջապատուած բեռնակիրներէն, որոնք կ'ուղղէին ինծի բարձրաձայն հարցումներ, որոնցմէ ոչ իսկ բռտ մը կը հասկնայի: Ինձմէ աւելի խելացի եւ թերեւս փորձառու ալ՝ իրենցմէ մին առաւ որոշում մը, առանց կարծիքս հարցնելու: Առարկայ մ'ալ ես էի, ճամպրուկներուս նման:

Շոգենաւին մէջ շինած գեղեցիկ երազներս՝ շոգենաւի ծուխին եւ քարափը լեցնող բազմութեան նման յօդս ցնդած էին: Մէկ հարցում կը հալածէր միտքս: Ո՞ր էր Ապտէլքատէրը, ինչո՞ւ չէր եկած զիս դիմաւորելու: Չէ՞ որ լաւ գիտէր թէ ո՛չ դրամ ունէի գրպանս, ո՛չ լեզու՝ բերնիս մէջ եւ ո՛չ մէկ ծանօթ՝ հսկայ քաղաքին մէջ: Աւելին: Ո՛չ մէկ կերպով նախատեսած էի այսպիսի կացութիւն մը եւ զայն դիմագրաւելու համար ձեռք առած կանխազգուշական միջոց մը...: Չլարուած խաղալիքի մը նման, աչքերս ու միտքս մթազնած՝ անկարող էի քայլ մը առնելու, առանց դուրսէն եկած օգնութեան: Քայլ առնել... բայց ո՞ր ուղղութեամբ, ո՞ր, ի՞նչ ընելու: Թող առնէին տանէին զիս ուր որ կ'ուզէին, միայն թէ դուրս ելլէի այստեղէն: Ով կ'ուզէ թող ըլլար ան: Ահա, թէ ինչու երախտագէտ իսկ եղայ այն բեռնակիրին, որ կառք մը կանչեց, հոն տեղաւորեց ճամպրուկներս եւ զիս, ու ինք ալ դէմս նստելով՝ բաներ մը ըսաւ կառապանին: Ու կառքը ճամբայ ելաւ:

Դժոխք ալ տանելու ըլլային զիս, դարձեալ երախտապարտ պիտի մնայի իրենց: Հարցնելս ատելորդ էր: Ամենէն առաջ՝ որովհետեւ պիտի չկարենայի հարցնել, երկրորդ՝ որովհետեւ ոչինչ պիտի հասկնայի ըսածէն: Թող տանէր զիս տեղ մը, ուր պահ մը հանգիստ ընէի, գտնէի ինքզինքս, յագեցնէի զիս կրծող ծարաւը ու խորհէի յետագայ քայլերուս մասին: Կառքը կը յառաջանար՝ կը բաւէր:

Երջանիկ էի: Ըսուած է «կը խորհիմ, ուստի՝ կամ»: Իմ կարգիս կը խորհէի՝ «քաղաք կը մտնենք, փրկուած եմ»: Հին, կիսախարխուլ շէնքերը փոշոտ փողոցին երկու կողմերը եզերող՝ դրախտ կը թուէին ինծի: Ոլոր-մոլոր փողոցները, որոնց մէջէն կ'անցնէինք, Վիեննայի հրաշալի, կանաչազարդ եւ լայն ու մաքուր փողոցներուն հետ պիտի չփոխէի: Դրախտի ճամբան իսկ վարդերով ծածկուած չէր, որքան սորվեցուցած էին ինծի: Ազատարար

հրեշտակս՝ սեւամորթ այդ բեռնակիրը, պատահական հարցումներ կ'ուղղէր ինծի: Ժպիտով մը կը պատասխանէի՝ եթէ նոյնիսկ հայիոյելու մտքով ըսուած էին անոնք: Նկատեցի սակայն, որ որքան դէպի քաղաքին կեդրոնը կը յառաջանայինք տեսարանը ամբողջութեամբ կը փոխուէր, մեծ քաղաքի մը երեսոյթը առնելով: Քովստի նեղ փողոց մը մտանք եւ կառքը կանգ առաւ, երկյարկանի հին շէնքի մը առջեւ:

«Օթէլ» ըսաւ բեռնակիրը, եւ ճամպրուկներս վար առնելով՝ ինծի ալ իրեն հետեւելու հրամանը արձակելէ եւ կառապանին ալ վարձքը իր գրպանէն վճարելէ ետք՝ վեր ելանք պանդոկի երերացող սանդուխներէն: Թերեւս ես էի տատանողը, ալ չեմ կրնար որոշել: Յայտնի էր, որ պանդոկապետն ու ինք հին ծանօթներ էին իրարու հետ, եւ բեռնակիրին առաջին փորձառութիւնը չէր ասիկա: Պանդոկին մուտքի դուռը բաց էր, կարասիներուն ամենէն համեստ տեսակով կանոնաւորուած. որոն հոգը:

Տէրը խիստ դէմքով յոյն մըն էր: Խրիսթօ: Բեռնակիրը եւ ինքը շատ շուտով հասկցան իրար: Խրիսթօն, ըստ իր ազգին յատուկ ասանդութեան, յունարէն սկսաւ խօսիլ հետս, առանց այլեւայլի: Ֆրանսերէն պատասխանեցի իրեն: Մարդը զարմացաւ, թէ ինչպէս կը պատահէր որ երոպացին յունարէն չգիտնայ: Աչքի փոքր նշանի մը փոխանակում՝ եւ որոշումը առնուած էր:

Որս մը ինկած էր իրենց ձեռքը, գոր պիտի փետտէին, եթէ փետտելիք բան մը գտնէին վրաս: Ակնարկ մը ճամպրուկներուս՝ բաւական եղած էր անոնց մօտաւոր արժէքը գնահատելու: Բեռնակիրը, ի վարձ իր ծառայութեան եւ կառքին, վաթսուն դրուշ պահանջեց, որ քիչ մը չափազանցուած թուեցաւ ինծի: Բայց յոյնը հասկցուց թէ սուղ չէ: Խնդրեցի իրմէ վճարել գումարը, ցոյց տալով ճամպրուկներս: Սենեակին վարձքը 10 եգիպտական դրուշ՝ օրական, տրամաբանական էր:

Վճարեց ու ճամբու դրաւ բեռնակիրը: Թէ որքան էր վճարածը՝ չեմ գիտեր, բայց ինչ որ ալ եղած ըլլայ վճարած գումարը «հալալ» էր ազատարարիս:

Ո՛վ անձանօթ բարերարս, Ապտէլքատէրէն աւելի արժանի ես երախտագիտութեանս եւ այսօր՝ մօտ յիսուն տարի ետք իսկ, չեմ մոռնար ըրած բարիքդ: Ասկէ գատ, իբրեւ գրպանի անմիջական ծախք՝ հինգ դրուշի փոխառութիւն մը խնդրեցի Խրիսթօյէն, որ ամէնայն հաճոյակատարութեամբ կատարեց խնդրանքս, չմոռնալով «ճենթլմէն»ի հովեր տալու ինքիրեն:

Պարզ էր մարդուկին հաշիւը. մէկ քանի օրէն տիրանալ ճամպրուկներուս ու ապա փառաւոր կիցով մը փողոց նետել զիս: Այսուհանդերձ դիրութեամբ վերագտայ ինքզինքս: Բարձ մը ունէի գլուխս դնելու: Այդքանը կը բաւէր, որ հանդարտ մտքով եւ լաւատեսութեամբ կազմէի ընելիքներուս ծրագիրը: Ի վերջոյ Աղեքսանդրիոյ մէջ հայեր շատ կային, որոնց հետ միասին միջոցը պիտի գտնէի անելէն դուրս գալու:

Այս տրամադրութեամբ մտայ սենեակս, ուր միայն անկողինն էր, որ կը հետաքրքրէր զիս: Քիչ մը երկնցայ վրան: Աչքերուս քուն չէր գար, բայց ամէն ինչ աւելի պայծառ կը թուէր: Աւելի գէշ օրերուս մէջտեղ չէի մնացած, չէի յուսահատած. հիմա է որ պիտի անճրկէի:

Քիչ ետք ելայ, լուացուեցայ, կազդուրուած՝ հագուեցայ եւ ինքզինքս նետեցի փողոց: Ինչի՞ նման էր Միջերկրականի «մարգարիտ»ը՝ Աղեքսանդրիան, ուր ատենին մեր մեծագոյն մտաւորականները ապաստան գտած ու արտադրած էին: Արդէն մութը կոխած էր: Բայց քաղաքը գոհացուցիչ կերպով լուսաւորուած էր: Անդիմադրելի պէտքը կը զգայի թարմ եւ զով օդի՝ քանի մը ժամու անորակելի վերիվայրումներէս ետք: Աւա՛ղ, Յուլիսի վերջին օրերուն Աղեքսանդրիոյ օդը ո՛չ թարմ էր, ո՛չ ալ զով: Աւելի՛ հեղձուցիչ էր:

Փոքրիկ շրջան մը ըրի փողոցներուն մէջ, ամէն զգուշութիւն ձեռք առնելով՝ շատ չհեռանալ պանդոկէս: Հակառակ գիշերուան ժամը 10-ին մօտ ըլլալուն՝ կեանքը կ'եռար, սրճարան ու ճաշարան բաց էին ամէն կողմ, տեղ-տեղ յունական երգերու ձայներ կը լսուէին: Այդ ժամուն Վիեննա ամէն կեանք դադրած՝ քաղաքը քունի մէջ թաղուած կ'ըլլար:

Աչքս յառած խանութներու ցուցատախտակներուն՝ հայու անուն կը փնտռէի այս ու այն կողմ: Նկատելի էր որ յոյնի, իտալացիի անունները կը վխտային ամէն կողմ: Երբեմն կը փորձէի ներս մտնել հայու մը խանութէն, սիրտս բանալ, պարզել կացութիւնս: Բայց ամէն անգամ ալ համարձակութիւնը կը պակսէր ինծի: Այս պարագային մեծագոյն դժբախտութիւնս այն էր, որ ամէն տեղ անունիս ծանօթ էին, Պոլսէն հասած թերթերուն միջոցով: Հազիւ խանութ մը ներս մտած՝ երբ իմանային անունս, այնպիսի յարգալիր վերաբերում մը կը ցուցաբերէին ինծի հանդէպ, որ ստիպուած էի ինծի վերագրուած համբաւին համեմատ վարուիլ: Զիս թորիսթի տեղ կը դնէին, մինչ ես մտադրած էի ցաւս պատմել անոնց: Ու գոհանալով փոխադարձ ուրախութեան եւ գոհունակութեան խօսքերով՝ ժպտախառն դուրս կ'ելլէի մարդոց մօտէն: Համբաւէն շատ շատեր մեծ շահեր կ'ապահովէն, իսկ իմ պարագայիս անիկա ամբողջ ծրագիրներս խանգարելու միայն կը ծառայէր: Բայց մեծ է Աստուծոյ զօրութիւնը: *La nuit porte conseil* (գիշերէն առաւօտ հարցը կը լուծուի) կ'ըսեն ֆրանսացիները: Արդարեւ, յանկարծ յիշեցի Ադէք-սանդրիա հաստատուած ծանօթ գրավաճառ Ներսէս Ղազիկեանի անունը: Վստահաբար ծանօթ էր անունիս եւ լաւ պիտի հասկնար զիս:

Այս գիտով գօտեպնդուած՝ փրկուած կը զգայի ինքզինքս: Գլխուս վերեւ կուտակուած ամպերը մոզական հարուածով մը փարատեցան կարծես: Հոգեկան այս

թեթեացումը, սակայն, յիշեցուց ինծի ուրիշ թեթեութիւն մը՝ ստամոքսիս: Նոր կ'անդրադառնայի, թէ շոգենաւէն իջնելէս իվեր պատահ մը բան դրած չէի բերանս: Ուտել, բայց ո՛ր եւ ինչ դրամով: Դատելով բեռնակիրին ինծի արժած գինէն, ուտելիքներուն գինը կրակ պէտք է ըլլար: Իսկ ո՛ր գտնել տեղ մը, ուր ուտելիքներուս ծախքը սեղմուէր գրպանս գտնուած հինգ դրուշին հետ:

Ծովեզերքին երկայնքով կը վխտային տեսքով եւ յաճախորդներով շատ համեստ գարեջրատոններ: Կ'ենթադրէի թէ հոն նստողները մէյ մէկ Կրեստսներ (մեծահարուստներ) չէին: Այսուհանդերձ, իրենց սեղաններուն վրայ, գարեջուրով լի գաւաթներուն շուրջ, առատօրէն դրուած էին տասնեակ մը փոքր պնակներ, զանազան ուտելիքներով լեցուած: Երեւի գիները մատչելի պէտք է եղած ըլլային: Բայց միակ հինգ դրուշս, գրպանիս մէջէն կը յանձնարարէր զգոյշ ու խոհեմ ըլլալ: Ի վերջոյ որոշումը տուի: Քաջաբար մտայ ներս՝ գոնէ ծարաւս կը յազեցնեմ, խորհելով: Նստայ պարապ սեղան մը: Հարցուցի յոյն *կարսուն*ին գարեջուրին գինը: Միայն գարեջուրին: «Երկու դրուշ» պատասխանեց: Ապսպրեցի: Քիչ ետք՝ սեղանիս վրայ շարուեցան գաւաթ մը գարեջուրի կողքին՝ մէկ քանի փոքր պնակներ՝ մէկուն մէջ տապկուած ձուկ, միւսին՝ ճերմակ պանիր, գետնախնձոր, ֆասուլիա, փիյագ, մսի կլոր գնդիկներ, աղցան, հաց՝ որքան ուզես: Որքան որ այս բոլորին տեսքը եւ հոտը ստամոքսիս մէջ զալարումներ յառաջ բերին, բայց անոնց հաւանական արժէքն ալ իր կարգին՝ սրտիս մէջ վախ մը ստեղծեց: Ես ապսպրած չէի զանոնք, բայց եթէ ուտէի, բնական պիտի ըլլար վճարել փոխարժէքը...: Վիեննայի մէջ, գարեջուրի հետ ապսպրուած որեւէ ուտելիք՝ առանձին կը վճարուի: Բայց՝ ինչո՞վ: Ամենայն պաղարհունութեամբ ետ հրեցի բերուած ուտելիքները, եւ մատուցողէն խնդրեցի ետ տանիլ զանոնք: Մարդը՝ ապուշ կտրած կը վերցնէր

զանոնք՝ զարմանքի ակնարկներ նետելով վրաս: Վճարեցի 2 դրուշը, եւ գոհ սրտով՝ բայց պարապ փորով դուրս եկայ գարեջրատունէն, առանց *քեփազէ*² եղած ըլլալու: Ուղղուեցայ - տեղն է ըսելու - թեթեւ հոգիով ու ատելի թեթեւ ստամոքսով՝ դէպի պանդոկ:

Հակառակ ֆիզիքական թէ հոգեկան տառապանքներուս, թերեւս ալ ճիշդ անոնց եւ մանաւանդ պանդոկի տակ գտնուող սրճարանէն բարձրացած խօսակցութեան, նարտիի, երգերու եւ կոիւներու ձայնին պատճառով, աչքերս կը յամառէին բաց մնալ: Քուն չունէի: Ի վերջոյ բնութիւնը պարտադրեց ինքզինք եւ մինչեւ առաւօտ մէկ շունչով քնացայ:

Առտուն, հազիւ թեթեւ մը յարդարուած՝ ինքզինքս փողոց նետեցի, Ներսէս Ղազիկեանին հետքը վայրկեան առաջ գտնելու անհամբերութեամբ: Կարծես ժամադրուած ըլլայի հետը, այնքան որ հաւատք ունէի իր վրայ: Յուսախար չեղայ: Հազիւ մուտք գործած իր գրախանութէն ներս, որուն տարածութիւնը խոտոր կը համեմատէր արտասահմանի մէջ ունեցած իր համբաւին ու հանած աղմուկին, եւ ինքզինքս ներկայացուցած՝ բարձրաձայն եւ անկեղծ ուրախութեամբ ողջունեց զիս ու ջերմօրէն ողջագոյրուեցանք: Կարծես տարիներու մտերմական բարեկամութեամբ կապուած ըլլայինք իրարու հետ:

Մարդամօտ, սրտբաց ու համակ բարեկամական՝ իր դէմքին վրայ ժպիտը կը փայլէր: Իր առաջին եւ գլխաւոր մտահոգութիւնն էր որպիսութիւնս եւ կեանքի պայմաններս: Ան ամէն պատրաստակամութիւն ցոյց տուաւ կարելի եղածին չափ օգտակար ըլլալու ինծի: Ճիշդ փնտոռած մարդս: Առանց քաշուելու ամէն ինչ պատմեցի իրեն, ամենայն մանրամասնութեամբ:

- Բնաւ մի վախնար: Ես կոնակդ կեցած եմ, ըսաւ: Դրամ

² Խայտառակ:

ունիմ:

- Ինչպէս չէ: Երեք դրուշ ունիմ գրպանս: Այդքանն ալ պիտի չունենայի, եթէ երէկ գիշեր, գարեջրատան մէջ՝ գարեջուրին հետ միասին բերուած *մեզէները*³ կերած ըլլայի, ըսի:

- Կոշտ էիր, հարցուց միամտօրէն:

- Կոշտ: Կէսօրունէ իվեր անօթութենէ կը մարէի, բայց ինչ ըրած՝ պէտք եղած դրամը չունէի, աւելցուցի...

- Համմէ, գոչեց: Անօթի էիր եւ զանոնք չկերամ:

- Պէտք եղած գումարը չունէի: Ետ ճամբեցի:

- Երկու դրուշը չվճարեցիր:

- Վճարեցի...

- Վճարեցիր եւ չկերամ... Վայ, անմիտ մարդ, վայ, բացագանչեց: -Բայց այդ բոլոր *մեզէները*՝ այդ երկու դրուշին մէջն էին...: Մեղք..., մեղք...: Փորդ պարապ՝ ուտելիքը ոտքիդ եկեր է, իսկ դուն կիցով ետ հրեր ես զայն... է պրանօ քեզի: Ըսել է անօթի ես...

- Գայլի պէս:

- Ես ալ, ըսաւ: -Հիմա վրէժը կը լուծենք: Հակիթով ֆուլ (պակլա)³ կը սիրենս:

- Ֆուլը ինչ է:

-Այս երկրին ամենէն պատուական, ամենէն ընդհանրացած, ամենէն համով կերակուրն է: Բնաւ չեն ճաշակած: Մէյ մը որ համը առնես՝ ալ ուրիշ բան չես ուտեր..., եւ քովի մանչուկին ապսպրեց, որ երթայ երկու պնակ բերէ: -Երեսին՝ հակիթ եւ ձէթը առատ..., աւելցուց:

Այսպիսով՝ Եգիպտոսի ասանդական ֆուլին մկրտութիւնը կատարեցի այդ օրը: Սիրեցի, բայց անկէ զատ դեռ ուրիշ շատ բաներ ես կերայ:

Ապա, անոր հետեւեցաւ անխուսափելի սուրճը, «սուրքար զիյատէ» (շաքարը շատ):

³ Արաբական խոհանոցի յատուկ աղանդեր:

Հինէն, նորէն, Վիեննայէն եւ Պոլիսէն պատմութիւններ, ծիծաղ, խնդուք, կատակ...:

Ո՛ր էր նախորդ օրուան լքուած, յուսահատ Սարուխանը: Կարծես արտասովոր ոչինչ պատահած ըլլար: Կարծես ապագա արդէն ապահովուած էր:

- Հոս քու խանութդ է: Միշտ եկուր: Եթէ կ'ուզես՝ պանդոկդ ալ ձգէ՛ մեր տուն եկուր, ատելցուց հրաժեշտ առած պահուս:

Անկեղծ էր Ղազիկեան: Անկեղծօրէն ալ շնորհակալութիւններս յայտնեցի: Բաժնուելէս ետք, հակառակ տրուած ապահովութիւններուն, վիճակիս անորոշութիւնը ամբողջութեամբ ցցուեցաւ աչքիս դիմաց: Ամէն ինչ անորոշ, ամէն ինչ օդին մէջ կախուած էր տակաւին:

Դեռ ծայրն էի ծրարոց: Չէի կրնար երեւակայել, թէ տակաւին ինչ անակնկալներ վերապահուած էին ինծի, որոնց մասին գաղափար իսկ չունէի, եւ որոնց հանդիպելու ո՛չ պէտք, ոչ ալ պատճառ ունէի:

«Խելօք մը Վիեննա նստած՝ գէշ աղէկ կ'ապրէիր կոր, գլուխդ դնելիք անկիւն մը եւ ուտելիք պատառ մը հաց ունէիր, այ մարդ: Ուրկէ՛ ուր ինկար այս փորձանքին մէջ»՝ հարց կու տայի ինքս ինծի: Բայց շուտով կ'արդարացնէի ընթացքս: Չէ՛ որ փայլուն խոստումներ, հաւաստիքներ տրուած էին ինծի... Ի վերջոյ ուսանող, կէս-կուշտ, կէս-անօթի կեանք մը անցընելով պիտի չգոհանայի, չէ՛:

Առաջնորդարան դիմելու մասին խորհիլն իսկ անտեղի էր: Դեռ հոս-հոն օգնութեան ձեռք կարկառելու վիճակին հասած չէի: Փառք Աստուծոյ:

Զիս յուսադրող վերջին, զօրաւոր յոյս մը ունէի: Այդ օրերուն քարհիղի ծանօթ Մանթաշէֆ Տան Աղեքսանդրիոյ տնօրէնն էր Պր. Յովհաննէս Մութաֆեանց: Իսկ հօրեղբայրս՝ Առաքել Սարուխան, նոյն հաստատութեան Փեթերսպուրկի կեդրոնին մէջ՝ արտաքին բաժնին

ընդհանուր տնօրէնն էր, այսինքն Պր. Մութաֆեանցը ենթակայ էր անոր: Նախքան Եգիպտոս գալս, հօրեղբայրս Պրիլքսէլէն յանձնարարական քարթ մը տուած էր ինծի՝ յանձնելու համար անոր, խնդրելով որ ի հարկին օգտակար ըլլար ինծի:

Ոսկի առիթ մը զայն օգտագործելու՝ անելէն դուրս գալու համար:

Փափուկ Դրութիւն Մը

Կան հոգեվիճակներ, երբ մարդս այնպէս կը կարծէ, թէ իր շուրջիններէն բոլորին ուշադրութեան միակ առարկան է: Թէ ամէն ոք կը կարդայ իր հոգին եւ թէ բան գործ ձգած՝ կը զբաղի քաղաքի մը մէջ կորսուած անյոյս թշուառականի մը վիճակով, կը հեզնէ իսկ զինք:

Այսպիսի տրամադրութեան տակ է, որ որոշում տուի ներկայանալ Պր. Մութաֆեանցին: Պիտի ընդունէր զիս: Եւ ինչ ձեռով: Հապա եթէ առաւ-փախաւի տեղ դնէր զիս...: Բայց ինչ իրաւունքով: Յանձնարարութիւն մը ունէի ուղղուած իրեն, զոր պարտաւոր իսկ էի յանձնելու իրեն: Վերջ ի վերջոյ, եթէ ինք Մութաֆեանց մըն էր, ես ալ եղբոր որդին էի իր գերադասին՝ Առաքել Սարուխանին: Ջինուած այս գիտակցութեամբ, վեր ելայ շէնքին առաջին յարկը եւ անվարան բախեցի դուռը: Անձամբ բացաւ դուռը: Բարձրահասակ, ճերմակ՝ սրածայր, երկար մօրուքով, վարդագոյն այտերով եւ մանաւանդ երկու կապոյտ աչքերով՝ պատկառելի եւ վայելուչ մէկն էր, որ ամէն կերպ կ'արդարացնէր տնօրէնի իր հանգամանքը: Ակնարկ մը նետեց վրաս, վերէն վար չափեց, ապա խիստ քաղաքավարօրէն բարեւեց եւ ներս հրաւիրեց զիս: Ինքնութեանս տեղեկանալէ ետք, երկարեցի գրութիւնս: Կարդաց: Գոհ եղաւ: Այտուհանդերձ տեսալէս պահեց անժպիտ իր արտայայտութիւնը: Տեսակ մը վարանումի

մէջ կը թուէր ըլլալ: Թերեւս խաղ մը կը տեսնէր եղածին մէջ: Ո՞վ գիտէ քանի քանի ինձ նմաններու հետ գործ ունեցած էր: Մէկ կողմէ դէմքիս կ'ուղղէր իր կասկածոտ ականարկը: Բայց այս նամակը: Ա՛ն ալ կասկածելի էր:

Գրութիւնը ձեռքերուն մէջ դարձնելով, հարցոց ի վերջոյ.

- Ինչ նպատակով եկած էք Եգիպտոս:

- Վիեննայի մէջ հանդիպած եգիպտացի ուսանողի մը հրաւերով:

- Եւ ինչ ընելու համար:

- Մտադիր էր այստեղ թերթ մը հրատարակել եւ երգիծանկարչի մը պէտք ունէր: Ջիս ընտրեց:

Մօրուքը շոյեց, դէմքը կախ՝ հարցոց.

- Ուսանող...: Եւ դուք վստահեցա՞ք անոր խօսքին: Ինչ երաշխատութիւն տուաւ ձեզի: Ունի՞ հարկ եղած միջոցները:

- Օ՛, այդ մասին ապահով եմ, ըսի, -մեծահարուստի կեանք կը վարէր Վիեննայի մէջ: Երբ մենք հազիւ չոր հացի մը դրամը ունէինք:

- Գիտեմ, միշտ այսպէս են, երբ դուրսերն են: Պայմանագրութիւն ստորագրած էք հետը:

- Ո՛չ: Բերանացի ու ապա թղթակցութեամբ կայացած կարգադրութիւն մը՝ թոշակի եւ բնակարանի վերաբերեալ:

- Այդքան միայն:

- Այդքան:

Թթուեցոց դէմքը, սեղմեց շրթները: Սիրտս ալ միասին:

- Հաւատք պէտք չէ՛ ընծայել այդ տեսակ կարգադրութիւններուն, մանաւանդ, երբ անոնք եղած են ուսանողներու կողմէ: Անոնք կրնան օրինապէս ստորագրուած պայմանագիրերն իսկ ուրանալ, ո՞ր մնաց խոստումը: Առանց որեւէ խղճահարութեան՝ կրնան դիմացինը մէջտեղ ձգել, աւելցոց սառնօրէն:

Ամէն մէկ խօսքը տաք երկաթի պէս կը ծակէր սիրտս,

այնքան որ ճշմարիտ ըլլալ կը թուէր:

Ահա թէ ու՛ր է փորձառու եւ անփորձ մարդոց տարբերութիւնը:

Կարծես ամէն ինչ ճակատիս վրայ գրուած ըլլար՝ այնքան յստակութեամբ կարդաց ինչ որ կար սրտիս մէջ, ինչ որ մէկ քանի օրէ ի վեր կը տանջէր էութիւնս:

Կասկած չկայ: Զոհն էի միամիտ խանդավառութեանս, յենելով օդային պղպջակներու վրայ: Վիեննայի պէս քաղաք մը լքելով՝ ինկած էի հեռաւոր, անծանօթ երկիր մը՝ աւազախրումի ենթարկուելու համար: Յանցաւոր էի:

Բայց ինչ կրնայի ընել: Եղածը եղած էր: Անցեալը մոռնալով՝ դարմանի մասին պէտք էի խորհիլ:

- Հանդիպեցմա՞ք իրեն, հարցուց, խզելով լռութիւնը:

- Ո՛չ, -ըսի քաշուելով, - ոչ իսկ քարափ եկած էր զիս դիմաւորելու...

Օրօրեց գլուխը: Բերանը չբացաւ: Հակառակ ասոր, կարծես յստակօրէն լսեցի իր ձայնը, որ կ'ըսէր. «Չըսի՞ քեզի», այնպէս ինչպէս Եհովա կը գոչէր Կայէնին երեսին. «Կայէն, ինչ ըրիր եղբօրդ»:

Որքան կ'երկարէր խօսակցութիւնը, այնքան կը զգար, թէ փորձանքը պիտի պայթէր իր... դրամապանակին: Վարժուած պէտք է ըլլար:

- Իսկ հիմա ինչ մտադրած էք ընելու, - հարցուց:

- Որոշած եմ անմիջապէս մեկնիլ իր բնակավայրը՝ Մանսուրա: Բռնել անոր կամ ընտանիքի ոեւէ անդամի օձիքէն եւ պահանջել որ՝ կամ պարզեն կացութիւնս եւ կամ զիս Վիեննա վերադարձնեն: Վաղն իսկ ճամբայ պիտի ելլեմ:

Երեւոյթն դատելով ինծի թուեցաւ, թէ մեծ հաւատ չունեցաւ վրաս՝ այդքան վճռական քայլ մը առնելու մասին: Ընդհակառակը, իր շրթներուն ծայրը երեւցող ժպիտը կ'ըսէր. «ԽՍԵՂՃ մարդ... միշտ միեւնոյն միամիտը...»:

Իմ ալ կարծիքս նոյնն էր այդ միջոցին, իմ

կարելիութիւններու մասին: Ճարը ինչ:

- Ճամբու ծախք ունի՞ք, -հարցուց:

- Ո՛չ իսկ թրամուէյի, -ըսի համարձակ:

Որքան ուրախ էի, որ դրամի խօսքը բացաւ: Հակառակ այդ նպատակաւ իրեն դիմած ըլլալու՝ երբեք պիտի չհամարձակէի առաջին քայլը առնել:

Սառը կտորած էի: Վճռեցի, ինչ որ ալ պատահէր՝ ամէն ինչ մէկ անգամէն ըսել, լմնցնել, կէս ճամբան չմոռցած: Ուստի մէկ շունչով՝ ոտանաւոր արտասանելու պէս, ըսի.

- Անմիջապէս երկու ոսկիի պէտք ունիմ, պանդոկին եւ ճամբորդութեան ծախքերուն համար: Միակ յոյսս դուք էք...:

Թեթեւցայ: Ինչպէս քիչ ետք ինք եւս պիտի թեթեւնար՝ երկու ոսկիով:

Արդէն իսկ նախապատրաստուած՝ անխօս ու հանդարտօրէն, դուրս քաշեց իր թղթապանակը, մէջէն հանեց երկու թղթադրամ, երկարեց ինծի: Առ ի զգուշութիւն, չհարցուց իսկ թէ այդքանը բաւարար էր, թէ ոչ:

- Կը յուսամ, թէ այս դէպքը դաս մը կ'ըլլայ ձեզի ապագային, -աւելցուց:

Աւանդ, դաս պիտի չըլլար...

- Շնորհակալ եմ: Առաջին առթիւ կը վերադարձնեմ, - ըսի ու ոտքի ելայ:

Քմծիծաղ մը անցաւ դէմքէն: Քանի՞երորդն էի արդեօք իրեն այսպիսի հաւաստիք տուող: Հատ մը աւելի, հատ մը պակաս...:

Յամենայն դէպս, առաջին վայրկեանէն մինչեւ վերջ՝ վերջին ծայր քաղաքավար մնաց հետս: Յաջողութիւն մաղթեց ու մինչեւ դուռը ընկերացաւ ինծի:

Կ'երեւակայեմ, թէ որքան զարմացաւ եւ - ինչո՞ւ չէ - խնդաց ալ վրաս, երբ երկու ամիս չանցած՝ փոստով ստացաւ երկու ոսկիին:

Ճիշդ երեք տարի ետք՝ այցի կ'երթայի իրեն, նոյն գրասենեակին մէջ, գծելու համար իր երգիծանկարը, որ

պիտի երեւար Աղեքսանդրիոյ մէջ, Փափագեան Երաժշտական Տան նորաբաց ընդարձակ սրահին մէջ: Լսած էր իմ մասիս: Ուրախ էր գտած յաջողութեանս համար: Եկած էր ցուցահանդէսի բացումին: Երեք տարի առաջուան մեր հանդիպումի մասին ո՛չ մէկ ակնարկութիւն, հակառակ որ մեր երկուքին մտքին մէջ, ֆիլմի նման, անցան այդ օրերուն յիշատակները:

Անակնկալ Հանդիպում Աղեքսանդրիոյ Կայարանը

Երկու ոսկին գրպանս՝ առաջին անգամ գլուխս բարձր, հպարտ ակնարկ մը նետեցի վաշխառու յոյնին երեսին, ձեռքը դրի պահանջած գումարը եւ ըսի թէ կը մեկնէի: Ինծի թուեցաւ, թէ այնքան ալ գոհ չմնաց մարդուկը: Իր հաշիւը սխալ դուրս եկած էր: Հաւաքեցի ճամպրուկներս, ծառային ձեռքով վար իջեցուցի զանոնք ու կառք մը ցատկելով սուրացի ուղղակի դէպի կայարան:

Գնացքին մեկնելուն դեռ կէս ժամ կար: Ժամանակս սպաննելու համար սկսայ շրջանը ընել կայարանին՝ լայնքին ու երկայնքին: Անսովոր կերպով հանդարտ ու պարապ էր շուրջս: Թխադէմ ու երկայնահասակ եգիպտացի մը կար հոն ինձմէ՛ գատ, որ նոյն մտահոգութեամբ կ'երթար ու կու գար, մէկը փնտոելու երեւոյթով: Կը կրէր մանիշակագոյնի զարնող մուֆ կարմիր եւ արտասովոր բարձրութեամբ ֆէս մը, որ յատուկ էր եգիպտացիներուն, ճիշդ հակառակը թուրքերուն, որոնց գլխին ֆէսը համեմատաբար կարճ էր, բաց կարմիր գոյնով:

Պահ մը դէմ դիմաց եկանք, խաբուսիկ, բայց հարցական նայուածք մը նետեցինք ու անցանք: Յաջորդ անգամ մը եւս իրարու հետ դէմ դիմաց գտնուելու յատուկ դիտաւորութեամբ: Զարմանալի բան: Ապտէլքատէրին եւ այս մէկուն դէմքերը տարօրինակ կերպով իրար կը

Նմանէին, իրարու հետ շփոթելու աստիճան: Բայց ան չէր: Այա թէ ոչ պիտի մօտենար ինծի, պիտի բարեւեր, ողջագործուէր իսկ: Իսկ ինչ պատճառ ունէր այդպիսի խուզարկու ակնարկով դիտելու զիս: Միգուցէ ինք ալ զիս մէկու մը կը նմանցնէր: Բայց՝ որո՞ն: Երբ հեռացանք իրարմէ, տեսայ, որ լուսանկար մը հանեց գրպանէն, ուշի ուշով դիտեց զայն: Այա, ատլի վստահօրէն եւ համարձակ կերպով եկաւ դէպի ինձ, կանգ առաւ դիմացս եւ հարցուց անգլերէն լեզուով.

-Դուք Սարուխանը չէ՞ք...:

Երկինքէն իջած ճայն մը այսքան անուշ պիտի չհնչէր ականջիս...: Վերջապէս, առաջին եգիպտացին, որ ոչ միայն անունով կը ճանչնար զիս, այլ նոյնիսկ մինչեւ ոտքս եկած էր փնտռելու, դիմաւորելու զիս: Փանօք քեզ Աստուած:

- Այո՛, Սարուխանն եմ, գոչեցի արտասուախառն աչքերով, իսկ դու՛ք, ո՞վ էք, ինչպէ՞ս գտաք զիս...:

- Ես Ապտէլքատէր Շիննաուիին եղբայրն եմ, -ըսաւ, ու փաթթուեցանք իրար, ինչպէս մէկը կը փաթթուի փոթորկոտ ծովուն մէջ ընկղմելու վրայ եղող նաւուն կայմին, իբրեւ վերջին միակ յոյսը:

Փրկուած էի: Կը մնար պնդօրէն կառչած մնալ անոր: Մէկ քանի օրէ իվեր ներսս կուտակուած յուսախաբութեան, յուսահատութեան, դառնութեան բոլոր զգացումները մէկ անգամէն փարատեցան: Դէմքիս վրայ առաջին անգամ երեւաց ժպիտը, որ սրտէս կու գար եւ բռնադատեալ ու արուեստական չէր: Չէ՛ որ ձեռքիս մէջն էր թնճուկին ծայրը:

Ու ահա հարցումներու տարափը.

- Ո՛ր է եղբայրդ, հիւանդ է: Ինչո՞ւ քարափ չէիք եկած, ինք կամ դուք: Հո՞ս կը գտնուի, թէ՛ Մանսուրա:

Խեղճը չէր գիտեր թէ որ մէկ հարցումին պատասխանէր:

- Համբերեցէք, ամէն ինչ պիտի բացատրեմ,- կը կրկնէր:- Եղբայրս Գահիրէ կը գտնուի: Ստիպողական գործ մը արգելք եղած է իր հոս գալուն: Մասնաւոր նամակով մը, որուն մէջ գետեղած էր ձեր լուսանկարը, խնդրած էր ինձմէ, իր փոխարէն գալ քարափ՝ որոշեալ ժամուն ձեզ դիմաւորելու: Սակայն, նամակը ուշ հասած էր եւ ես չէի կրցած կատարել իր խնդրանքը: Մէկ բան կը մնար ինձի ընել: Ձեր ժամանումէն ի վեր ամէն օր գալ այստեղ եւ սպասել ձեզ, այն ժամերուն, ուր դէպի Գահիրէ մեկնող գնացք մը կար: Չէ՞ որ այստեղէն պիտի անցնէիք անպայման: Եւ՝ ահաւասիկ, ներողամիտ եղէք պատահածներուն համար:

Ներողութիւ՛ն: Որմէ՛: Անկէ, որ զիս անդունդէն դուրս հանած էր: Բայց այդ միջոցին, թխամորթ այդ եգիպտացին իմ աչքիս ամենէն գեղեցիկ, չքնաղ ու սիրելի մէկը կը թուէր ըլլալ: Բարեբա՛րս, փրկի՛չս: Անկէ զատ ոչինչ կը հետաքրքրէր զիս: Եթէ որեւէ դժուարութեան առջեւ գտնուէի, զայն լուծողները ներկայ էին:

Պահ մը նոյնիսկ սկսայ մեղադրել Պ. Մութաֆեանցը, իր այնքան յոռետես եւ յուսահատեցուցիչ արտայայտութիւններուն համար, ամէն մարդ մէկ ջուրով լուալու յանցանքով: Ուրեմն, խաբեբաներու կողքին կը գտնուին եղեր նաեւ պարկեշտ, վստահելի մարդիկ: Պահ մը մինչեւ իսկ հպարտ զգացի ինքզինքս իմ իրատեսութեանս մասին: Այնքան ալ համբակ չեմ եղեր... կը խորհէի:

Ատոնց կողքին՝ մէկ բան գրաւեց ուշադրութիւնս, որ ուրիշ առթիւ միտքս պղտորէր գուցէ, բայց այս անգամ վրան անդրադառնալ իսկ չփորձուեցայ: Արդարեւ, «մեծահարուստ» մէկու մը արտաքին ո՛չ մէկ նշան կար վրան: Ո՛չ հագնուածք, ո՛չ կոկիկութիւն, ո՛չ մաքրութիւն, ո՛չ խօսելակերպ, ո՛չ ալ վարուելակերպ: Ամենէն համեստ պաշտօնեայի մը տիպարն էր: Բայց, այդ վայրկեանին երկար պրպտումի ժամանակը չէր: Չկան

մեծահարուստներ, նոյնքան անհոգ, նոյնքան թափթփած...:

- Ո՛ր են պայուսակներդ, -հարցոյց: -Մինչեւ եղբօրմէս նոր հրահանգներուն հասնիլը, մէկ քանի օր Աղեքսանդրիա պիտի մնանք: Երթանք պանդոկ:

Ճամպրուկները կառքի մէջ զետեղելէ ու քով քովի նստելէ ետք, կառքը սկսաւ յառաջանալ: Ո՛վ գիտէ ո՞ր «փալաս»ը պիտի երթայինք, ծովահայեաց ճոխ ու ընդարձակ սենեակի մը մէջ: Մտովի կը խնդայի Խրիսթոյի խեղճուկ սենեակին վրայ, որ շատոնց պատմութեան անցած էր: Ինչպէս ալ կրցեր էի երեք գիշեր մնալ հոն...: Չեմ գիտեր ինչո՞ւ, սակայն, տակաւ կ'անդրադառնայի, թէ քարափի պատմութիւնը վերսկսելու վրայ էր:

Որքան կառքը կը մտնէր քաղաքին նեղլիկ, փոշոտ, աղմկոտ, խարխուլ շէնքերով եզերուած փողոցներուն մէջ, այնքան կ'անդրադառնայի, թէ հիւսած ոսկի երազներս աստիճանաբար կ'իջնէին քովս նստողին արտաքին երեւոյթին հալած մաշած մակարդակին: Չէի խաբուած: Քիչ ետք կառքը կանգ առաւ կիսախարխուլ շէնքի մը դրան առջեւ:

-Իջնենք, -ըսաւ: Եւ դռնապանը կանչելով՝ պայուսակներս առաջին յարկը բարձրացնել տուաւ:

Հնամաշ, աջ ու ձախ օրօրոտող սանդուխներէն բարձրանալով, հասանք ինծի վերապահուած «սենեակ»ը: Առաջին բանը, որ զարկաւ աչքիս, անկողինին սաւաններն էին, որոնք Նուպար փաշայի օրով ճերմակ եղած պէտք է ըլլային եւ աւելի կը յիշեցնէին վերացական արուեստի գործ մը՝ այնքան որ անոնք լեցուած էին պատմական օրերէն մինչեւ այդ օրը ճզմուած մլուկներու հետքերով: Պատէն կախուած էր կոտորած, բայց կոտորները իրարու փակցուած հայելի մը, որուն մէջ իր գլուխը տեսնողը, մերթոյն անիւներուն տակէն նոր դուրս հանուած գանկ մը պիտի կարծէր: Ա՛լ չեմ խօսիր իբրեւ *քանսափէ* կամ աթոռ

հոն դրուած առարկաներուն մասին, որոնց վրայ նստողը անձնասպան ըլլալու նպատակ միայն կրնար ունենալ:

Որքան կը փնտռէի Խրիսթոյի սենեակս, որ արքայական կը թուէր այժմ աչքիս:

Ապտէլքատէրի եղբայրը գոհունակ ու երջանիկ կը թուէր: Չէ՞ որ «լիւքս» սենեակ մը ապահոված էր ինծի: Եւ այդ գոհունակութեամբ ալ հրաժեշտ տուաւ ինծի, յաջորդ առաւօտեան համար ժամադրուելէ ետք:

Երբ առանձին մնացի՝ մղուեցայ խորհրդածութիւններու: Եթէ Ապտէլքատէր եւս եղբօրը խմորէն շինուած էր՝ վայ գլխուս, վայ երազներուս, վայ ապագայիս:

Բայց առայժմ ինծի ուրիշ բան չէր մնար ընել, բացի համակերպելէ:

Այս տրամադրութեամբ, քիչ մը փոխուելու համար դուրս ելայ եւ ափ առի բարեկամիս՝ Ներսէս Ղազիկեանի նախախնամական գրախանութիւնը: Անփոխարինելի էին այդ մարդն ու իր խանութը՝ զուարթ, կատակաբան, կեանքը վարդագոյն տեսնելու եւ շուրջինները անով վարակելու տեսակէտով: Հոս ամէն ինչ կը մոռնայի: Ես «ինքս» կ'ըլլայի: Ծանօթացող բազմաթիւ հայերու եւ բարեկամներու փոքր շրջանակ մը կազմած էի: Բոլորն ալ լսած էին կեանքիս իրարու հակասական երկու պատկերները:

Միշտ կը յուսայի տարբեր վերաբերմունք ու ապրելակերպ գտնել Եւրոպա ապրած ու տաշուած Ապտէլքատէրի մօտ: Եւ այդ յոյսով կ'ապրէի:

Պանդոկ վերադարձիս՝ ինքզինքս Աստուծոյ ողորմութեան յանձնելով, նետուեցայ անկողին: Աչքս առած էի ամբողջ գիշեր կեր եւ ընկեր դառնալ մլուկներուն եւ մժեղներուն անյագ եւ արհիւնարբու ախորժակներուն: Առանց անդրադառնալու ձեղունին մէջ մուկերու կողմէ տեղի ունեցած խօլական արշաններուն: Կը մխիթարուէի այն բանով, որ ինձմէ դարեր առաջ առաջին

քրիստոնէաները նոյնպիսի յօժարակամութեամբ կը մտնէին Հռոմի կրկէսներէն ներս՝ կատղած ամեհի գազաններէն յօշոտուելու երանութեան սիրոյն: Անոնք իտէալ մը ունէին, ես ալ իտէալիս ետեւէն վազելու վրայ էի: Իսկ կարելի չէ հասնիլ իտէալի մը՝ առանց հարկ եղած տուրքը վճարելու անոր: Զոհաբերութիւն: Տառապանք: Զրկանք:

Հին մարտիրոսներու հետ այդ բաղդատութիւնը ունեցաւ իր բարերար արդիւնքը: Մինչեւ առաւօտ, մէկ շունչով քնացայ, հրեշտակներու անմեղ քունով:

Երբ արթնցայ, ամբողջովին կազդուրուած էի: Նոյնիսկ՝ ուրախ: Գէշ-աղէկ լուացուեցայ եւ անցայ հայելիին բեկորներուն առջեւ, քիչ մը ինքնայարդարումով զբաղելու:

Յաղագս Ճաղատութեան

Աւանդ, երկար պիտի չտուէր ուրախութիւնս: Զարմանալի երեւոյթի մը առջեւ գտայ ինքզինքս: Մազերս, ճիշդ է, շատ առատ չէին, բայց գլուխ մը չափաւոր կերպով լեցնելու լայնօրէն կը բաւարարէին: Գլխուս մէջտեղէն ճեղք մը բացած էի, եւ անոր հետքին ուղղութեամբ՝ գլուխս պտտցուցի սանտրս: Բայց ինչ տեսնեմ: Ամէն մէկ հարուածին հետ սանտրը, մանգաղի նման, մազերու արտաստվոր խուրճ մը կը քաղէր գլխէս: Փորձ մը եւս ու ահա խուրճ մը եւս: Վախէս՝ այլեւս դադար տուի սանտրուելու մարմաջիս, վաղուան համար ալ բան մը ձգելու մտահոգութեամբ: Զուր ճիգ: Յաջորդ օրը՝ նոյն պատմութիւնը, եւ արդէն ճակտիս չորս բոլորը լայն ակօսներ բացուած էին. ճաղատութիւնը իր դրոշմը դնել սկսած էր գունտ ու կլոր գանկիս վրայ: Եթէ Վիքթոր Հիկօ այդ միջոցին տեսնէր զիս, պիտի ըսէր. «Սանտրը անցաւ այստեղէն...»: Այս թափիլն էր՝ թափեցաւ, ու այնուհետեւ ո՛չ մէկ ուժ աշխարհի վրայ կարող էր կտորել մազաջարդին

թափը: Եթէ իսկապէս դատապարտուած էի օր մը ճաղատ ըլլալով՝ պէտք է ըսել, որ Աղեքսանդրիոյ մէջ անցուցած ամէն մէկ օրս տասնեակ տարիներով փութացուց անոր գալուստը:

Այս պէ՛ճ ճաղատութեանս ողբերգութիւնը:

Որքան երջանիկ պիտի սեպէի ինքզինքս, եթէ ամբողջ ողբերգութիւնս ճաղատութեամբ միայն սահմանափակուած ըլլար:

Աւանդ, մօտալուտ ապագան փնտռել պիտի տար ինծի այդ ողբերգութիւնը:

Երեք օր ետք, «պաշտպանս»՝ Ապտէլքատէրին եղբայրը, եկաւ ատենելու, թէ ստացած է եղբօրմէն սպասուած նամակը: Նոյն օրը, կէսօրուան գնացքով պիտի մեկնէի Գահիրէ: Աճապարանքով ամէն ինչ պատրաստեցի ու հասանք կայարան: Բայց ինչ տարբերութիւն նախորդ օրուան եւ այսօրուան միջեւ: Կայարանը բազմութեամբ կը վխտար: Քանի մը հարիւր ֆելլահ-գիւղացիներ, ամենէն խայտաբղէտ զգեստաւորումով, ամէն մէկը բեռ մը շալկած, ոմանք՝ հաւեր, ուրիշներ՝ պտուղներ, հաւկիթ, բանջարեղէն, մէկ կողմէ միւսը կը վազէին, բարձրաձայն գոռում գոչումներով, նոյնիսկ իրար հետ կռուելով, վայրկեան առաջ վակոն մտնելու համար զիրար հրմշտկելով, նոյնիսկ կոխկոտելով: Սեւագգեստ կիներ, մէկ քանի պզտիկներով եւ գլխուն վրայ իրենց ամբողջ բեռը տեղաւորած, ինքզինքնին կերպով մը կը քաշկոտէին դէպի կառաշարը:

Ես, մէկ կողմ քաշուած, թուրիսթի աչքով, իբրեւ հետաքրքրական երեւոյթ կը հետեւէի պարզուած տեսարանին: Բնական էր, որ ինծի համար նուազագոյնը Ա. կարգի տոմսակ մը պէտք էր ապահոված ըլլար պաշտպանս:

- Եկուր, -ըսաւ, եւ թեւէս բռնելով առաջնորդեց զիս դէպի գնացք:

Կանգ առինք Գ. կարգի վակոնի մը առջեւ, որ բերնէ

բերան լեցուած էր արդէն: Կերպով մը ճեղքելով բազմութիւնը, ներս մտցուց զիս եւ քովիններուն բաներ մը փսփսալով՝ նստեցուց զիս արդէն իսկ ճամբորդներով եւ կապոցներով խճողուած նստարանի մը վրայ: Նստողները՝ բարեմիտ գիւղացիներ, սեղմուելով տեղ տուին ինծի պատուհանին քով:

Ժխոր: Ալետոր ծերունիներէն սկսեալ մինչեւ նորածին մանուկը, աղջիկներ թէ կիներ՝ կարծես իրարու հետ մրցումի ելած ըլլային աղմուկին բարձրը, ամենէն խլացուցիչը արձակելու համար: Բողոքողները, հրաման արձակողները իրենց բաժինը կը բերէին աւելի հեղձուցիչ դարձնելու համար տիրող մթնոլորտը, որ արդէն այս ամիսներուն տաք էր եւ մանաւանդ՝ խոնաւ: Ա՛լ չեմ խօսիր հոտերու տեսակներուն մասին, որոնք մարդոց թէ կենդանիներուն վրայէն կը հասնէին քիթիս:

Գիւղացիներուն համար սովորական երեւոյթ մը կը թուէր ըլլալ եղածը: Ոչ ոքի վրայ զանգատելու երեւոյթ կար: Իսկ ես՝ անզօր ու անօգնական, ամէն ինչ փիլիսոփայօրէն կ'առնէի, քանի որ ուրիշ ճար չկար: Իրարանցումը եւ հրմշտուքը նոր թափ կը ստանային ամէն նոր կայարան կանգ առնելնու: Կարգ կանոնի սպասել չկար: Առանց սպասելու որ իջնողները դուրս ելլէին՝ նորերը իրար կոխկոտելով ներս կը մտնէին: Ոմանք պատուհաններէն դուրս կը նետուէին, նախապէս իրենց բեռները նետելէ ետք: Կային նոյնպէս, որ նոյն պատուհաններէն ներս կը խուժէին, իրենց բոպիկ ոտքերով կոխկոտելով նստողները, որոնց կարգին նաեւ զիս: Քովինս՝ մաքրասէր մարդ, ձեռքի մատներով կը մաքրէր ոտքի մատներուն արանքները, ակնարկը ուղղելով ինծի, թէ «ինչպէս կը գտնէի իր մաքրասիրութիւնը»: Կը մաքրէր նաեւ կոկորդը, երբեմն երբեմն դէպի գետին կլոնջ⁴ մը արձակելով,

⁴ Թանձրացած խլինք:

առանց մտահոգուելու թէ ուր կ'իյնար ան: Չախիս նստողը մէկ դահեկանի տասը հաւկիթ գնեց կողովով, գոր մէկիկ մէկիկ կոտրելով, բոլորն ալ կլլեց հում-հում: Ի հարկէ, հաւկիթին ճերմկուցէն վազած հեղուկէն բաժին հանելով դէմքիս, հագուստներուս եւ ճամպրուկներուս: Ինչ ըսել, ինչ ընել: Ո՛չ լեզու գիտեմ, ո՛չ ալ վիճակ: Յետոյ, մարդուկը գիտակցութիւնը չունի իր ըրածին: Թերեւս զարմանայ, թէ ինչո՞ւ նեղուողներ ըլլան այսքան պարզ ու բնական արարքէ մը: Մանաւանդ որ բարի գտնուած էր տաքատիս վրան ինկած մասը սրբելու, իր հագուստի խորերէն հանած թաշկինակի կտորով մը, որ չեմ գիտեր, հաւկիթին թափթփուքը սրբեց, թէ՛ անոր փոխարէն ուրիշ բանի հետքեր ձգեց այնտեղ:

Այսուհանդերձ, կ'ընդունիմ, թէ ինչպէս ամէն տեղ, այստեղ ալ գիւղացիները, թէպէտ անտաշ, բայց բարեմիտ անձեր էին ու յարգանք կը տածէին ինծի հանդէպ: Յանցանքը իրենցը չէր, եթէ կենցաղագիտութեան մասին իմ եւ իրենց տեսակետները հիմնովին կը տարբերէին իրարմէ:

Գնացքը Աղեքսանդրիա-Գահիրէ ճամբուն բոլոր կայարանները պիտի հանդիպէր: Այս բոլորը՝ մօտ եօթը ժամուան ընթացքին: Յոր Երանելիին համբերութիւնը փոխ առնելով՝ պատրաստուեցայ այդ արկածախնդրութեան աւարտին: Եւ ինչո՞ւ չսպասէի. քանի մը ժամ՝ ու ահա վերջապէս պիտի հասնէի փրկութեանս: Իսկ թէ փրկութեան ճամբան միշտ փուշերով ծածկուած է, գաղտնիք մը չէ: Բայց, ինչո՞վ բացատրել Ապտէլքատէրներուն կենցաղին այսքան ցած մակարդակը: Վերջ ի վերջոյ, եթէ Ապտէլքատէրին եղբայրը պանդոկին ամենէն ստորին աստիճանը, գնացքին ամենէն աժանը կ'ընտրէր՝ բնական է, իր «մեծահարուստ» եղբօր հրահանգներուն համեմատ կը շարժէր: Արդեօք Ապտէլքատէրն ալ այսպիսի մէկն էր: Ինչ պիտի ընէի, եթէ Գահիրէի մէջ եւս

Աղեքսանդրիոյ տրամը վերապահուած ըլլար ինծի:

Քարափի փորձութենէն ետք, այս վերջին ճամբորդութիւնը եւս վրաս ամենէն դժնդակ տպաւորութիւնը ձգած էր: Անկէ տարիներ ետք տակաւին, այնպէս համոզուած էի, թէ Գահիրէ-Աղեքսանդրիա կամ հակառակ ուղղութեամբ ճամբորդելու միակ եղանակը այս էր: Եւ երկար ատեն կը խրտչէի այդ ճամբորդութիւնը ընելէ: Մտովի կը խղճայի Եգիպտոս ապրող հայերուն, որոնց վիճակուած էր այդ տառապանքը: Մէկիկ մէկիկ աչքիս առջեւ կը բերէի Երուանդ Օտեանը, Միքայէլ Կիրճեանը, Վահան Թէքէեանը, Արփիար Արփիարեանը, Վահան Մալէգեանը, Մութաֆեանցը եւ շատ ուրիշներ, որոնց մասին լսած էի, թէ յաճախ կ'ընէին այդ տեղափոխութիւնը: Մանաւանդ որ այդ օրերուն ո՛չ ինքնաշարժ, ո՛չ հանրակառք, ո՛չ իսկ սաւառնակ գոյութիւն ունէին:

Տարիներ ետք միայն, երբ հարկ եղաւ խմբական ճամբորդութիւն մը ընել դէպի Միջերկրական, այն ժամանակ անդրադարձայ, թէ կան եղեր՝ նոյնիսկ երկաթուղիով, մարդավայել ճամբորդութիւն ընելու միջոցները՝ մաքրութիւն, կանոնաւորութիւն, ո՛չ մէկ խճողում, կարգ կանոն: Հաճելի եւ հանգիստ:

Վերջապէս Հանդիպում

Այսպէս կամ այնպէս, գնացքի ողիսականս վերջ գտած էր, գէթ առայժմ, երբ երեկոյեան ժամը 8-ին մօտերը հասայ Գահիրէի ընդարձակ կայարանը, որ լեցուած էր հսկայ բազմութեամբ՝ յարաշարժ, աղմկոտ, իրար հրմշտկող: Հակառակ ատոր, առաջին իսկ ակնարկով՝ աչքիս զարկաւ Ապտէլքատէրը, որ զարմանալիօրէն իր կարգին, անմիջապէս նշմարելով զիս, ժպիտներով եւ ձեռքի շարժումներով ողջունեց զիս: Բեռնակիրները, դռներէն,

պատուհաններէն ներս կը խուժէին՝ բեռները վար առնելու: Ապտէլքատէր արդէն մօտեցած էր ինծի եւ ինք է, որ բեռնակիրներուն հետ գլուխ ելլելով զբաղած էր: Ողջագորուեցանք իրարու հետ:

Եթէ այս հանդիպումը, ձեռքի շարժումները, փոխանակուած ժպիտները տեղի ունեցած ըլլային Աղեքսանդրիոյ քարափը...: Ինչ դառնութիւններ, ողբերգութիւններ եւ յուսախաբութիւններ խնայուած պիտի ըլլային ինծի:

Ինչ բան է սակայն, մարդու միտքը: Ինչպէս երկվայրկեանի մէջ կրնայ մոռնալ ամէն բան: Կարծես ոչինչ պատահած ըլլար: Ոչ իսկ կ'ուզէի մտիկ ընել այն չքմեղանքները, գորս Ապտէլքատէր կը շոայլէր ինծի՝ արդարացնելու համար ինքզինք, Աղեքսանդրիա իջած չըլլալուն համար: Անոնք պիտի ծառայէին վերանորոգելու մտքիս մէջ այն տխուր վայրկեանները, գորս ես ի գին ամէն բանի մոռնալ կը փափաքէի: Գտած էինք զիրար, կը բաւէր:

Անմիջապէս կառք մը կանչելով՝ ճամպրուկներս մէջը տեղաւորեցինք եւ ուղղուեցանք քաղաքի կեդրոնը:

Կը դիտէի շուրջս, առանց բան մը տեսնելու: Լուսաւոր, լայն փողոցներ, հանրակառքեր, կարմիր երկար ֆէսեր եւ վերնազգեստ հագած մարդոց հսկայ բազմութիւն, բարձր ու ընդարձակ շէնքերու կողքին միայարկ շէնքեր, քով քովի խանութներ, որոնց առջեւ փողոցին մէջ կախած էին գոյնզգոյն հագուստներ, կարասիներ, տոպրակներ, սանտալներ եւ ինչ որ կ'ուզէք: Եռուզեռ մը՝ աննկարագրելի: Եւ ըսել, թէ ատիկա այն ժամուն, երբ Վիեննայի մէջ խանութները շատոնց փակուած, սինեմա, թատրոն, օփերա դադրած կ'ըլլային գործելէ:

Ուրեմն այս էր այն նոր աշխարհը, ուր այսուիտեւ պիտի ապրէի, գործէի...:

Ձէի գիտեր, թէ ուրախ էի կեանքիս եւ ապրելակերպիս այսպիսի արմատական փոփոխութեան համար: Սէկ բան

պարզ էր: Վիեննա հազիւ ծայրը ծայրին ապրելու միջոցը ունէի, մինչ այստեղ ապագաս Եգիպտոսի արեւին նման փայլուն պիտի ըլլար: Գէթ այդպէս խոստացուած էր ինծի:

Կառքը երթալով կը յառաջանար, սակայն, պահ մը շեղելով լայն պողոտայէն, մուտք գործեց նեղ ու նուազ փայլուն փողոց մը: Այս պարագան վերանորոգեց մէջս Աղեքսանդրիոյ նախընթացը: Ո՛ր կ'երթայինք, ինչո՞ւ այս նեղլիկ փողոցը: Մտաբերեցի Աղեքսանդրիոյ կայարանը, պանդոկը, շոգեկառքը եւ Ապտէլքատէրի մասին ի յառաջագունէ կազմած տպաւորութիւնս:

Տեսակ մը անհաճոյ նախազգացում մը պաշարեց զիս: Մանաւանդ, որ ամբողջ ճամբու ընթացքին տուած հարցումներուս, յայտնած հետաքրքրութիւններուս յստակ պատասխան մը տալէ կը զգուշանար: Կարծես կար բան մը, զոր կը ջանար թաքցնել ինձմէ: Այս խորհրդածութիւններով տարուած էի, երբ կառքը կանգ առաւ բաւական ներկայանալի, քառայարկ շէնքի մը առջեւ: Պանդոկն էր. «Օթէլ Մոնթազահ», Քլոտ Պէյ փողոցին վրայ:

- Հասանք, -ըսաւ Ապտէլքատէր:

Մտանք ներս: Պանդոկի կերպարանք ունէր, ընդունարանով, պաշտօնէաներով: Համեստ, բայց ամէն յարմարութիւններով օժտուած էր ան: Մենեակները ընդարձակ էին եւ մլուկի հետքեր չէին երեւեր: Կարելի էր բնակիլ: Փողոցի վրայ նայող երկու սենեակ ընտրեցինք, իրարու մօտ եւ տեղաւորուեցանք: Տեսարանը դիտելու եւ քիչ մը շունչ առնելու համար ելանք պատշգամ:

Օգոստոս 6, 1924 էր: Ինչ շունչ, ինչ զովութիւն...: Ժամը 10-ն էր եւ կեանքը կ'եռար, օդին հետ զուգընթաց: Բայց հոս՝ քիչ մը աւելի բազմամարդ, քան այլուր: Հեռուէն կը հասնէին սրինգի, թմբուկի, օրքեսթրի մը ձայները, երգելու եւ զուարթ պոռչտութիւններու ձայները՝ քնանալու համար ոչ-փայփայիչ հեռանկար մը պարզելով մեզի: Ինչո՞ւ այս իրարանցումը:

Շուտով պիտի տեսնէի աչքերովս:

Ինկած էինք «մասնաւոր» թաղ մը: Ճիշդ մեր պատշգամին դիմացը կար նեղլիկ փողոց մը, դէպի վեր բարձրացող զառիվեր մը, որ բազմութեամբ կը վխտար: Երիտասարդ, թէ տարեց այր մարդոց խումբեր կ'ելլէին ու կ'իջնէին այդ փողոցէն, որուն երկու կողմերը կ'երեւէին կիսամերկ կիներու խումբեր, որոնք հրաւեր կ'ուղղէին անցորդներուն՝ կամ իրենց նստած աթոռներու վրայէն, եւ կամ՝ պատուհաններէն դէպի վար կախուած վիճակով, իրենց լիակած գանձերը առաւելագոյն չափով ցուցադրելու յատուկ ճիգով:

Ապտէլքատէր հարցական դէմքիս նայեցաւ: Ժպտեցանք: Այսքանով ալ գոհացանք:

Մտաբերելով վակոնին մէջ ձեռք բերած փորձառութիւնս՝ կրնայի երեւակայել, թէ ինչի՞ կրնային նմանիլ ցուցադրուած «հրապոյրները», որոնք նողկանք միայն կրնան ազդել քիչ-շատ ճաշակի տէր մէկու մը:

Ապտէլքատէր «իրեն նպատակ ըրած էր» քիչ-շատ հաճելի պահեր պարգեւել ինծի եւ ծանօթացնել քաղաքին տեսարժան վայրերն ու բարքերը: Բուրգեր, Էլ Ազհարի մզկիթը, ճաշարաններ ելին.: Մասնաւոր հպարտութեամբ ճաշակել տուաւ ինծի հանրածանօթ *մուլուխիյէն* (եգիպտական ճաշատեսակ), որ գէթ առաջին անգամ չտուաւ ակնկալուած արդիւնքը, մանաւանդ, երբ ամէն անգամ՝ դգալին եզերքէն վար կը հոսէր լարծուն հեղուկը, կարգ մը անհաճոյ բաներ յիշեցնելով ինծի:

Այս բոլորը լաւ: Բայց ինչո՞ւ չէր աճապարեր ցոյց տալու ինծի այն տպարանը, զոր պիտի հիմնէր, «որուն յատակագիծը պատրաստել տուած էր Վիեննայի մէջ, աստրիացի հոչակաւոր ճարտարապետի մը, եւ որուն հիմնարկութիւնը արարտելու վրայ էր»՝ ինչպէս հաւաստիացուցած էր ինծի Վիեննա եղած միջոցնիս: Որոշ էր, կար բան մը, որ կը կաղար: Բայց ան երբեք չէր շեղեր

խորհրդաւոր այն կեցուածքէն, զոր առաջին վայրկեանէն իսկ ցուցաբերած էր, հրաւիրելով իմ կասկածանքս: Եթէ նոյնիսկ կիսաւարտ էր տպարանը, ինչ բան կ'արգիլէր իրեն, որ զայն ցոյց տար ինծի: Եւ կասկածանքս այնքան ատելի կը մեծնար, որքան իր հոգեկան վիճակին օրէ օր վատթարացումը կը նկատէի: Սկզբնական ժպիտը խոյս տուած էր դէմքէն:

Այս դրութեան մէջ էինք, երբ մօտ ամիս մը ետք, Ապտէլքատէր յայտնեց ինծի, թէ Հին Գահիրէի Ֆում Էլ Իսալիկ փողոցին վրայ չորս սենեակ վարձած էր, ուր պիտի երթայինք բնակելու: Բայց ինչո՞ւ քաղաքին կեդրոնէն այսքան մեկուսացած անկիւն մը, երբ իր նոր տպարանը քաղաքին կեդրոնին մէջ «շինելու վրայ» էր:

- Մօտերս կը լրանայ եւ կը տեսնես, -կը կրկնէր, բայց կը ջանար անոր տեղն ու տեսքը գաղտնի պահել ինձմէ:

Սակայն, ոչինչ իր մօտ, ո՛չ նիւթականը, ո՛չ ապրելակերպը, ո՛չ իսկ վարձած նոր բնակարանին կահաւորումը ցոյց կու տային, թէ ինք ի վիճակի էր այդպիսի հսկայ ծրագիր մը գործադրելու: Որոշ էր, խորհրդաւոր բան մը կար մէջտեղը:

Նոր վարձած չորս սենեականոց յարկաբաժինին երկու սենեակները մեզի իբրեւ ննջասենեակ պիտի ծառայէին, ուր մահճակալէ մը եւ աթոռէ մը զատ ուրիշ ոչինչ կար: Գալով միւս երկու սենեակներուն, որոնք իբրեւ խմբագրատուն պիտի ծառայէին, բացարձակապէս թափուր էին: Ահա իր հրատարակելիք *Ալ Կարիտա Ալ Մուսաուարա* թերթին ամբողջ կահ-կարասին, որուն մէջ սեղան մ'իսկ չկար յօդուած գրելու կամ գծելու: Ինչպէս ջուսահատիլ եւ ջիշել... Պ. Մութաֆեանցը:

Հարցումներուս կը պատասխանէր ըսելով, թէ նոր տպարանին մէջն են իր գրասենեակները: Ի վերջոյ ինծի մէկ երկու պատկեր գծել տուաւ եւ տարաւ հետը՝... խմբագրատուն: Ինք արդէն յաճախ կը բացակայէր

տունէն, զիս առանձին լքելով, խմբագրատուն երթալու պատրուակով:

Վերջապէս օր մը տպագրած թերթի մը օրինակը բերաւ:

- Տէս,- ըսաւ ինչ գեղեցիկ է:

Իրականին մէջ, ցածէն ալ վար մակարդակով գործ մըն էր, որ առաջին իսկ վայրկեանէն դատապարտուած էր... մահուան: Ինք խանդավառուած ցոյց կու տար ինքզինք, եւ անցանք երկրորդ թիւին պատրաստութեան:

«Առաջին թիւը ամբողջութեամբ սպառած էր արդէն եւ ժողովուրդը խանդավառութեամբ երկրորդին կը սպասէր», -ըսաւ, սակայն ո՛չ տպաքանակի, ո՛չ ալ արժէքի խօսքը կ'ընէր: Գալով իր «խմբագրապետին», «խմբագիրներուն», «աշխատակիցներուն» եւն, անոնցմէ ոչ մին իր դէմքը ցոյց տուած էր, ո՛չ իսկ այցելութիւն կամ «մապրութի» եկան Ֆում Էլ Խալիկի կեդրոնին:

Գործը ամբողջութեամբ ճախողանք էր: Կը զգայի, թէ գետինը ոտքիս տակէն անգամ մը եւս սահելու վրայ էր: Ինչ պատճառ ունէր իր տպարան-խմբագրատունէն տեսապէս հեռու պահելու զիս:

Վերջապէս, օր մը, բուռն պնդումներուս՝ խոստացաւ տանիլ զիս աստրիացի ճարտարապետին յատակագծով կառուցուած տպարանը:

Անհամբեր էի տեսնելու արդիական ոճով կառուցուած տպարանը եւ մանաւանդ հոն գետեղուած ամենավերջին *մօտէլ* մեքենաները: Ատոր հակառակ, իր մօտ նկատելի էր խանդավառութեան պակասը: Ինչո՞ւ հպարտ չէր իրականացած երազը ցոյց տալու իր նոր աշխատակիցին, զոր մասնաւորապէս այս նպատակով բերել տուած էր Վիեննայէն...:

Հանրակառք մը նստելով՝ յառաջացանք դէպի քաղաքին կեդրոնը: Աչքս, բնական է, լայն փողոցներու եւ անոնցմէ մէկուն վրայ կանգնած բարձրայարկ, նորակերտ

շէնքին վրայ էր: Բայց, մտանք կայարանէն ոչ-շատ հեռու, Ֆակկալա կոչուած հնաբոյր թաղը, ուր հանրակառքէն վար իջնելէ ետք, ոտքով սկսանք ներս թափանցել աւելի նեղ ու շատ աւելի մութ փողոցներէ, որոնց երկու եզերքները խարխուլ ու դարաւոր կառուցուածք ունեցող շէնքերը լեցուած էին խորտուբորտ փողոցով եւ աւելի խորտուբորտ սալայատակներով, եթէ երբեք այդ անունով կարելի էր կոչել հոս-հոն անկանոն կերպով քով-քովի դրուած քարի կտորները:

Անշուշտ այս անելէն յետոյ՝ աւելի ընդարձակ փողոց մը դուրս պիտի ելլէինք: Ահա թէ ինչն, առանց չորս կողմիս կարեւորութիւն տալու, արագ քայլերով կը յառաջանայի, վայրկեան մը առաջ դուրս ելլելու այդ անելէն: Որքան մեծ եղաւ զարմանքս, երբ Ապտէլքատէր յանկարծ կանգ առաւ բորբոսած, խոնաւութիւն հոտող, կոտրած-թափած բաց դրան մը առջեւ:

- Հոս է, -ըսաւ:

- Հո՛ն, -հարցուցի ապշած՝ մութերու մէջ կորսուած, Ալի Պապայի խորշը յիշեցնող քարանձաւը ցոյց տալով, որուն խորը, վերէն մէկ թելով կախուած, 25 ուաթնոց ելեկտրական լապտերի մը լոյսին տակ՝ խեղճուկրակ ծերուկ մը, գլուխը հակած՝ գիր կը շարէր:

Հոս-հոն ցրուած փայտէ քանի մը սնտուկներէ զատ ուրիշ ոչինչ կար՝ եթէ չհաշուենք պատերէն վար կախուած սարդի ոստայնները: Ո՛չ իսկ աթոռ մը՝ նստելու համար:

- Ա՛յս է աստրիացի ճարտարապետին փլանով շինուած տպարանը, -հարցուցի:

Ապտէլքատէր՝ այս ամբողջ ընթացքին լուռ ու ամօթահար, աչքի տակէն կը դիտէր գիս:

- Ասիկա առժամեայ է, -ըսաւ: -Նորը շինուելու վրայ է: Բաղաքէն քիչ մը դուրսը..., -ըսաւ վերջապէս, - օր մը կը տանիմ քեզի հոն, -աւելցուց:

Աւելորդ յոգնութիւն:

Աչքիս դիմաց պարզուող այս խոնաւաշունչ, խաւարի մէջ կորսուած խոռոչը լաւագոյնս կը պարզէր աչքիս դիմաց այն «փայլուն» ապագան, որ կը սպասէր ինծի այս արկածախնդրութեան մէջ:

Եթէ այս էր իրականութիւնը, ապա ինչ բան կը ստիպէր Ապտէլքատէրը զիս Վիեննաներէն դուրս քաշելով մինչեւ այս թշուառ անկիւնները բերելու: Այս ինչ խորհրդաւոր բան էր՝ խելքս չէր հասներ:

Եգիպտոս ոտք կոխած վայրկեանէս սկսեալ, յուսահատութիւններու եւ յուսախաբութիւններու անընդ-հատ շարք մը կազմեցին այն երկու ամիսները զորս անցուցի Փարաւոններու պատմական այս երկրին մէջ: Հազիւ անկիւնէ մը լոյսի եւ յոյսի նշոյլ մը ծագած՝ նոր յուսալքում մը, նոր մտահոգութիւն մը կու գար փարատել զանոնք: Հարցը այն էր, որ այս անորոշ վիճակը բարելաւելու, յոյս մը ներշնչելու փոխարէն՝ յոռետեսութեամբ կը համակէր զիս: Ապտէլքատէր՝ Սֆինքսի երեւոյթը առած էր աչքիս: Ո՛չ մէկ խօսք, ո՛չ մէկ բացատրութիւն կու տար: Կը գոհանար կցկտուր, անորոշ խօսքերով:

Կը փորձէր զիս յուսադրել թերթին երկրորդ թիւին մօտալուտ տպագրութեան հեռապատկերով: Բայց, կը խորհէի՝ թող հազար թիւ ալ հանէ, եթէ այս պիտի ըլլային աշխատանքի պայմաններս, ոչինչով կրնար խանդավառել, չըսելու համար խաբել զիս:

Ամէն հաւատք կորսնցուցած էի՝ թէ՛ իր, թէ՛ ձեռնարկին, թէ՛ գործելակերպին, եւ մէկ խօսքով՝ իր անձին հանդէպ: Իր ձեռնարկելիք յետագայ ամէն քայլ՝ աւելի նոր վախով կը լեցնէր զիս, քան թէ խանդավառութեամբ:

Պատրաստեցինք երկրորդ թիւն ալ: Արդիւնքին, գտած ընդունելութեան մասին ոչ մէկ խօսք: Գալով երրորդ թիւին՝ անոր պատրաստութեան մասին, ո՛չ մէկ խօսք: Նախապատրաստական ո՛չ մէկ աշխատանք: Ինչո՞ւ: Ինչ

պատահեցաւ յանկարծ:

- Մինչեւ նոր կարգադրութիւն, թերթը հրապարակ պիտի չէլլէ, -կ'ըսէր ան: Թէ ինչ էին այդ նոր կարգադրութիւնները, ապահովաբար ամենէն առաջ ինքը չէր գիտեր:

Բայց մէկ բան պարզ էր: Յոյս չկար այս մարդէն:

Գաղտնիք մը կար, խորհրդաւոր բան մը այս բոլորին մէջ: Թերեւս իրմէ կախուած չէր ամէն ինչ, բայց ես ինչ յանցանք ունէի այս ճախճախուտին մէջ իյնալու, եւ թերեւս ալ, հոն խեղդամահ ըլլալու:

Այնուհետեւ, ինչ որ կ'ըսէր, ինչ որ կը խոստանար՝ մէկ ականջով միայն մտիկ կ'ընէի: Հազար տեսակ փորձանք կրնար գալ գլխուս:

Պէտք է ճարը խորհէի եւ կերպով մը ինքզինքս փրկէի: Գործս այնքան աւելի դիրին էր, որքան՝ այդքան ժամանակամիջոցի մէջ առիթներ ունեցած էի շփում ստեղծելու հայկական շրջանակներու հետ: Ճանչցած էի թերթերուն խմբագիրները, վարժարաններուն տնօրէնները, վաճառականներ եւ Պոլսէն հին ծանօթներ:

Առաջին հայը, որուն հետ խօսեցայ Գահիրէի մէջ, Պր. Պետրոս Կիրակոսեանն էր, որուն երկաթեղէնի ծանօթ վաճառատունը բնական պանդոկիս մօտերն էր, Պաուաքի: Բարձրահասակ, գեղադէմ՝ կանգնած էր դրան առջեւ: Իր անունը կարդալով՝ քաջութիւնը ունեցայ մօտենալու իրեն եւ բարեւելու:

Պէտք է խոստովանիմ, թէ առաջին տպաւորութիւնս քաջալերական չէր: Բացարձակապէս պաղ վերաբերում մը ցոյց տուաւ ինծի հանդէպ: Ենթադրելով, թէ անունս կրնար քիչ մը տաքցնել մթնոլորտը՝ ներկայացուցի ինքզինքս: Ոչ մէկ ազդեցութիւն: Հարցուցի, թէ արդեօք կը ճանչնանք ՀՄԸՄ-ական պոլսահայ Հայկ Ճիզմէճեանը: Ըսաւ, թէ անձամբ չէր ճանչնար զայն, բայց տուաւ անունը Պ. Թումիկ Սետեֆճեանի, որ իբրեւ մարզիկ կրնար

օգտակար ըլլալ ինծի: Եւ բացատրեց տեղը «Թուրիսթ Սթորզ» վաճառատան, ուր ան կ'աշխատէր: Բարեբախտաբար շատ հեռու չէր տեղը եւ դիրութեամբ գտայ զայն: Քաջաբար մտայ ներս: Հարցուցի Թումիկի մասին: Համակրելի, յարաշարժ եւ խիստ մարդամօտ մէկը՝ Թումիկ, ամենայն հաճոյակատարութեամբ մօտեցաւ ինծի, ճանչցաւ զիս: Ա. Պատերազմէն անմիջապէս վերջ՝ Պոլսոյ *Ճակատամարտի* Ռոստոմ Սրահի մէջ ՀՄԸՄի հիմը կը դրուէր: Հայկ Ճիզմէճեան, օրինակելի մարզիկ, խանդավառ գործիչ, որ զիս երկար առենէ ի վեր ճանչցած էր Պոլսոյ մէջ, առաջարկեց զիս, իբրեւ Ա. նիստին քարտուղար:

- Հայկ Ճիզմէճեանը: Չճանչցող մը կայ այդ մարդը: ըսաւ Թումիկ: Հեռաձայնեց Մուսքի, ուր ան՝ Պր. Կարապետ Վառվառեանի հետ, մանուֆաթուրայի վաճառատուն մը կը բանեցնէր:

Գտայ զինք եւ այնուհետեւ մինչեւ իր մահը՝ 1948-ը, միշտ միասին եղանք:

Արդէն «Մոնթազահ» պանդոկ եղած միջոցիս, եկաւ գտնելու զիս հոն, ընկերակցութեամբ իր քեռայրին՝ Պր. Լեւոն Թաշճեանի (ուսուցիչ Պուլաքի Գալուստեան Ազգային Վարժարանի): Միջահասակ, լեցուն մարմնով, երկար աղ-պղպեղ մազերով եւ ինչ որ այն ժամանակին հազուադէպ երեւոյթ էր՝ բաց օձիք սփոր շապիկ հագած, ժպտերես մէկն էր Պր. Թաշճեանը:

Վարժարանին տարիներու գծագրութեան ուսուցիչ, ականաւոր նկարիչ Երուանդ Տէմիրճեան իր հրաժարականը տուած էր եւ զինք փոխարինողի մը պէտքը կար: Եկած էին առաջարկելու ինծի նոյն պաշտօնը՝ դպրոցական յաջորդ շրջանէն սկսեալ: Ասիկա փրկութեան լուր մըն էր ինծի, նետուած կեանքիս ամենէն ալեկոծ մէկ շրջանին, որ այնուհետեւ զիս ոգեւորող եւ ինծի յոյս ներշնչող կրուանը պիտի հանդիսանար, Ապտէլքատերի

յարափոփոխ, տատանող եւ անկերպարան ընթացքին դիմաց:

Ամսական վճարումը պիտի ըլլար 5 եգիպտական ոսկի, շաբաթական երեք կէսօրէ ետք դասաւանդութեան համար: Այդ շրջանին ոչ-արհամարհելի գումար մը: Վարժարանին բացուելուն տակաւին մօտ մէկ ամիս կար, կրնայի Ապտէլքատէրի հետ սկսած փորձառութիւնս շարունակել: Անոր յաջողութիւնը ոչ մէկ կերպով արգելք կրնար ըլլալ դպրոցի մէջ ստանձնած պարտականութիւնս շարունակելու:

Հին Գահիրէի բնակութիւնս շարունակեցի: Ինծի համար գտած էի յուսատու ուրիշ բարեկամներ եւս, որոնց կարգին ամենէն կարելորը՝ Գահիրէի միակ մեծագոյն գինկոկրաֆ՝ Արամ Պէրպէրեան: Շատ յաճախ կ'այցելէի իր գործարանը, որ ասպարէզի տեսակետով ամենէն յարմար եւ խոստմնալից վայրն էր: Չէ՛ որ հոն էր, որ Գահիրէի մէջ հրապարակուող ամէն լեզուի թերթերուն, գիրքերուն քիշէները կը պատրաստուէին: Օր մը չէ օր մը՝ իմ ծառայութեանս կարիքը ունեցող մը մէջտեղ պիտի ելլէր, անկասկած:

Ահա թէ ինչո՞ւ գիս բնաւ չյուզեց Ապտէլքատէրը, երբ երեկոյ մը ըսաւ ինծի, թէ յաջորդ առաւօտ Մանսուրա պիտի երթար, կարելոր գործով մը: Խաղ մ'ալ ասոր տակ պահուած էր անշուշտ:

- Իսկ թերթը, -հարցուցի, առանց մեկնումին շարժառիթով հետաքրքրուելու:

- Ան կրնայ սպասել, -ըսաւ:

- Պիտի վերադառնաս, չէ՞:

- Անշու՛շտ, -ըսաւ, -ինչ է, կը կասկածի՞ս:

Այո՛: Անկեղծօրէն կը կասկածէի: Աղեքսանդրիոյ քարափէն իվեր՝ ուրիշ բան ըրած չունէի:

- Չեմ գիտեր, բայց ներսէս ճայն մը կ'ըսէ թէ...

- Մտիկ մի՛ ըներ այդ ճայնին: Երկու օրէն հոս եմ

դարձեալ, -ըսաւ թերթի ժպիտով մը, որուն կարելի չէր հաւատք չընծայել:

Բաժնուեցանք իրարմէ: Արդարեւ յարգեց խօսքը: Սակայն, դէմքը աւելի խաւար, յուսահատութիւնը աչքերէն կը վազէր: Ոչ մէկ խօսք իր ճամբորդութեան, անոր նպատակին եւ արդիւնքին մասին: Խամաճիկ մըն էի իրեն համար: Խամաճիկի հետ կը խօսուի՛: Եթէ լռութիւնը ոսկի է, Ապտէլքատէր այդ տեսակէտով՝ - եւ այդ տեսակէտով միայն - մեծահարուստ պէտք է եղած ըլլար:

Կը բնակէինք արաբական թաղի այդ տունը՝ հազիւ իրարու հետ քանի մը խօսք փոխանակելով: Դռնապանին մանչուկը ֆուլ կը հրամցնէր մեզի, գոր մեր մահճակալներուն վրայ նստած կ'ուտէինք, առ ի չգոյէ ուրիշ բանի: Երբեմն փոքրիկ շրջան մը կ'ընէինք տան մօտ գտնուող Նեղոսի եզերքը եւ ... այսքան: Այդ պտոյտներէն մէկուն ընթացքին էր, որ յայտնեց դէպի Մանսուրա իր նոր մեկնումը, երեք օր ետք: «Երկու օրուան համար», շէշտեց:

Ալ համը-հոտը սկսած էր փախչիլ՝ այս անվերջ ու խորհրդաւոր մեկնումներէն:

Երեւոյթներէն դատելով՝ այս անգամ վերադարձի յոյսը չկար: Այլեւս վերադառնալիք չունէր: Բայց ինչո՞ն չէր ուզեր բացուիլ ինծի, պարզել կացութիւնը, վերջնական որոշումի մը յանգելու համար:

Վերջ ի վերջոյ, այս անձանօթ եւ լքեալ թաղը նետուած, չորս թափուր սենեակներու մէջ՝ առանձին գիշերները, այնքան ալ հաճելի չէին ինծի համար:

Իր այս երկրորդ մեկնումէն ետք, քանի մը երեկոյ կայարան կ'երթայի եւ հոն մէկ երկու ժամ կ'անցընէի՝ ամէն հասնող կառաշարէն իջնողներու մէջ Ապտէլքատէրը փնտռելով: Ի գուր, ինչպէս Աղեքսանդրիոյ քարափը:

Նախագգացումս չէր խաբած զիս: Չվերադարձաւ:

Տուի որոշումս: Յաջորդ օրն իսկ ամէն ինչ լքել եւ

հեռանալ այս խորհրդաւոր մենաստանէն ու հաստատուիլ քաղաքին հայաշատ մէկ անկիւնը: Եւ այս այնքան աւելի ստիպողական սկսած էր դառնալ, որքան դռնապանը սկսաւ հետաքրքրուիլ Ապտէլքատէրի վերադարձի թուականին մասին: Ամսագլուխը մօտ էր, կային վճարումի հարցեր: Հազարումէկ գլխու ցաւեր կրնային ծագիլ: Դիմեցի Արամ Պէրպէրեանին:

- Ինձի աչքաբաց եւ լաւ արաբագէտ մէկը տուր, որ օգնէ սա անիծեալ տունէն հեռանալու, - ըսի:

- Սիրով, - պատասխանեց եւ մէկը ընկերացուց ինձի:

Երբ ունեցած մէկ երկու ճամպրուկներս շալկած վար կ'իջնէինք, դռնապանը կեցուց մեզ եւ պահանջեց տան վարձքը:

Բարեբախտաբար Ապտէլքատէր առաջին իսկ օրէն, զիս իբրեւ գերմանացի ներկայացուցած էր բոլորին՝ ըսելով որ քանի մը օր իր մօտ իբրեւ հիւր իջեանած էի:

- Գերմանացին անմիջապէս իր երկիրը պիտի վերադառնայ, ըսաւ բարեկամս, - տունը միշտ Ապտէլքատէրինն է, որ վաղը կը հասնի: Փաստը՝ ահա կարասիները, որոնք վերն են:

Դռնապանը համոզուեցաւ: Ելանք ճամբայ դէպի քաղաք: Բայց ո՞ր պիտի իջեանէի: Ունեցածներս պահ դրի Պէրպէրեանի մօտ եւ անգամ մը եւս վերսկսայ պանդոկային փնտոտութիս:

Էզպէքիէ թաղին պանդոկներէն մէկուն մէջ սենեակ մը վարձեցի: Մէկ օրուան համար միայն: Այս անգամ պայմանները տարբեր էին: Գրպանս դրամ կար եւ շուրջս՝ բարեկամներ: Դիմեցի մարզանքի ծանօթ մասնագէտ եւ ուսուցիչ Արարատ Քրիսեանին եւ իր անբաժան ընկերոջ՝ գիտութեան ուսուցիչ Առաքել Տրդատեանին, երկուքն ալ Պոլիսէն եկած:

Տահէր թաղին մէջ, հայ ընտանիքի մը մօտ, մէյ մէկ սենեակ վարձած էին: Իրենց շատ մօտ, ուրիշ հայ

ընտանիքի մը մօտ՝ սենեակ մը ապահովեցին անմիջապէս: Նոյն օրն իսկ փոխադրուեցայ հոն: Հոս, իբրեւ սենեակկից ունէի Մամաս Գալփաքճեան անունով երիտասարդ մը, որ վաճառականութեամբ կը զբաղէր: Յետագային, հրապարակի վրայ նախանձելի դիրք մը պիտի ապահովէր ինքզինքին եւ պիտի նուիրուէր ազգային հասարակական բեղուն գործունէութեան:

Այդ պահէն սկսեալ, կեանքս մտած էր իր սովորական հունին մէջ:

Գալուստեան Ազգային Վարժարանին մէջ ստանձնած գծագրութեան ուսուցիչի պաշտօնս իմ ամենէն կենսական կարիքներուս կը բաւարարէր:

Միանգամընդմիջտ փակուած էր Ապտէլքատէրեան արկածախնդրութիւնը:

Միտքս, ուշքս եւ ուժս կրնայի տրամադրել տարբեր նպատակներու: Չէի կրնար փակուիլ ուսուցչութեան նեղ սահմաններուն մէջ: Սակայն, արկածախնդիրները պիտի չհրաժարէին ինձմով հետաքրքրուելէ: Երեւի մասնաւոր զօրութիւն մը ունէի զանոնք դէպի ինձի հրաւիրելու: Արդեօք շմտ միամիտ եւ դիւրահաւատ էի: Ո՛չ այնքան, որքան ապագաս բարելաւելու իմ տեւական մղձաւանջս, որ զիս կը մղէր, առանց երկար նայելու, հաւատ ընծայել ինձի իբրեւ գործակից ներկայացողներուն:

«Հայկական Սինեմա» Երգիծական Շաբաթաթերթը 24 Յունուար 1925 - 12 Մարտ 1926

Այս անգամ հայ մըն էր բարիքս ցանկացողը, որ իրականին մէջ փետտուելիք հաւ մը գտած ըլլալ կը կարծէր՝ յանձինս «ծանօթ եւ կարող երգիծանկարիչ»ի մը:

Մանկութենէս ի վեր մասնաւոր սէր ունեցած էի հանդէպ լրագրութեան: Մշտական երազս եղած էր հրատարակել հայերէն լեզուով, գունաւոր երգիծանկարներով

զարդարուած շաբաթաթերթ մը, որուն շնորհիւ ընդլայնէի բարեկամական շրջանակս, ամէնուն համակրանքը շահէի, խնդացնէի:

Արկածախնդիրներն ու բախտախնդիրները մասնաւոր հոտառութիւն մը ունին. կասկած չի վերցնէր:

Սովորութիւն ունէի ճաշելու «Երեւան» ճաշարանը, որ ժամադրավայրն էր այդ օրերուն Թուրքիայէն նոր հասած երիտասարդ ամուրիներուն, որոնք եկած էին իրենց բախտը փորձելու Եգիպտոսի մէջ:

Օրին մէկը, երբ սովորականին նման խումբով նստած ճաշելու վրայ էինք, յանկարծ բարձրաձայն ծիծաղի մը ձայնը լսուեցաւ դուրսէն, որմէ անմիջապէս ետք ճաշարանին դրան առջեւ երեսաց 50-ի մօտ, աղ-պղպեղ մագերով մէկը, եւ գիս քովինին ցոյց տալով, գոչեց.

- Նա՛, հոն նստողն է: Եւ առանց այլեւայլի՝ յառաջացաւ դէպի սեղանս, տեղաւորուեցաւ դիմացի աթոռին՝ սկսաւ խօսիլ: Եւ ինչ խօսիլ: Խօսքի հեղեղ, ուրիշ ոչինչ: Ամէն մէկ խօսքին ալ բարձրաձայն խնդուք մը:

- Սարուխանն ես, այնպէս չէ՛: Անմիջապէս ճանչցայ: Հաւնած եմ գծածներդ: Ճիշդ քեզ նման մէկու մը անմիջապէս պէտք ունիմ: Լաւ դիմացս ելար: Դուն ինծի պէտք եղած մարդն ես, ես ալ՝ քու: Ես այս քաղաքին միակ իսկական լրագրողն եմ, ամենէն զօրաւոր երգիծագիրը: Լսեցի, թէ երգիծաթերթ մը հրատարակելու մտադիր ես: Հիմակուրնէ՛ ըսեմ, որ առանց ինծի այդպիսի ձեռնարկ մը չես կրնար յաջողցնել: Ես այդ ուղղութեամբ միակ փորձառութիւն ունեցող մարդն եմ... Ուրիշ մը փնտռելու չելլես, չես յաջողիր...: Հա՛, հա՛, հա՛: «Մարտիկ Աղա⁵» անունով երգիծաթերթ հանած եմ, ամէնուն խէրը անիծած

⁵ Մարտիկ Աղա - ազգային երգիծաթերթ, շաբաթաթերթ: Լոյս տեսած 1 Փետրուար-31 Դեկտեմբեր 1921ին (42 թիւ), Գահիրէ: Արտօճատէր եւ պատասխանատու տնօրէն՝ Վարդան Չաքարեան:

եմ: «Մարտիկ Աղա»ն,- կրկնեց:- Չե՞ս տեսած, ամբողջ աշխարհ կը ճանչնայ գայն:

Կը խօսէր ու կը խօսէր, երբեմն գոհ ու հպարտ ակնարկ մը նետելով ճաշարանը նստողներուն երեսին եւ բարձրաձայն խնդալով, հակառակ որ իրմէ գատ ուրիշ մէկու մը դէմքին ժպիտ չէր ուրուագծուեր:

Վերջ չունէին իր ինքնագովութիւնն ու մեծխօսիկութիւնը: Ոչ իսկ երկվայրկեանի դադար մ'որ առիթ ունենայի գէթ բառ մը տեղաւորելու: Ինք կ'ըսէր, ինք կը պատասխանէր, ինք կը խնդար:

Առանց որ հաւանութեան կամ մերժումի ամենադոյզն արտայայտութիւն մը ելած ըլլար բերնէս, արդէն իսկ գրպանէն հանելով առջեւ դրած էր իր գլուխ-գործոցէն օրինակ մը՝ *Մարտիկ Աղա*: Եւ, խնդութով մը, բացատրեց անունը բնորոշող նկարին իմաստը:

- Ասիկա՛ Մարտիկն է, այսինքն յեղափոխականը, կռուողը, պայքարողը: Որո՞նն դէմ: Աղային: Թերեւս այս երկու հոսանքներուն բախումին արտացոլացումն է: Հա՛, հա՛, հա՛: Մէկը միւսին դէմ կը հանեմ, խորոզներու պէս կռուիլ կու տամ անոնց ու ես ալ հեռուէն կը խնդամ...:

Եւ գործը միացնելով խօսքին՝ ամբողջ ճաշարանը իր խնդութով լեցուց:

- Իսածան շուն եմ, հա՛, գիտցած ըլլաս, դուն ալ պատկերներով պիտի ճոխացնես գրութիւններս...:

Երգիծանքի մասին իմ ունեցած ըմբռնումիս ճիշդ հակառակը: Երգիծանքը, ինծի համար կը կայանար մարդոց թերութիւնները հեգնելով, զանոնք ի կարգ հրաւիրելու մէջ: Բայց մարդ խայթել, վիրաւորել, թունաւորել՝ խառնուածքիս մէջ չկային: Ոչ ալ մարդիկ ահաբեկել եւ վախցնել: Այս քանի մը խօսքերն են, որոնք յաջողեցայ լսելի ընել իր քահքահներուն եւ խօսքերուն տեղատարափին տակ:

Ընդվզեցաւ:

- Ինչ տղայական մտայնութիւն, -գոչեց, -երգիծաթերթ պիտի հանենք, թէ կրօնաթերթ: Աղաները ազգին փարան բռնած՝ մէկ ծայրէն կ'ուտեն, իող կը կապեն կոր, իսկ մենք շատ քարոզ կարդալով պիտի գոհանանք... Պէտք է տալ անոնց գլխուն, որքան ուժով՝ այնքան լաւ: Երգիծանքը այսպէս կը հասկնամ ես: Եթէ պառաւական բամբասանք պիտի ընեն, ինչո՞ւ թերթ հանեն:

Ողբալին չէր անդրադառնար, թէ այդ միջոցին իր ամբողջ ըրածը ուրիշ բան չէր, եթէ ո՛չ՝ պառաւական բամբասանք...:

- Դուն ինծի մտիկ ըրէ, ես *Մարտիկ Աղան* հանած եմ: Ձեռքէ-ձեռք կը խլուէր:

- Ինչո՞ւ չշարունակուեցաւ:

- Այդ ուրիշ հարց է: Օր մը կը բացատրեմ:

- Թերեւս շատ խածնելէդ ակռաներդ թափեցան..., -ըսի:

- Անոնք շատ զօրաւոր են եւ այդպէս ալ կը մնան:

- Իմ անձնական իտէալս թերթ հանել եւ բարեկամ շահիլ էր: Թշնամի շահելէն ինչ օգուտ: Առանց անոր ալ բաւական ունի ամէն մարդ:

- Հայաստանէն փախող նախարարները եղածով հոս են: Ինչ *մոսթորալ*⁶ ըլլալին ցոյց տուին: Անոնց ալ գլխուն չտամ...

- Քննադատել, բայց՝ ո՛չ մեղցնել: Ուղղել, բայց՝ ո՛չ կտտրել: Ա՛յս է իմ համոզումս, -ըսի:

Իբրեւ թէ ոչինչ ըսած ըլլայի, վճռական կերպով եզրակացուց:

- Հիմա դուն ինծի՛ նայէ: Թերթը միասին պիտի հանենք, որոշուած լմնցած բան է: Դուն անփորձ եւ դեռ

⁶ Նմոյշ:

⁷ *Վերջին Լուր* - 1914-1930-ին լոյս տեսած պոլսահայ երեկոյեան օրաթերթ: Արտօնատէր՝ Հրաչեայ Տէր Ներսէսեան, պատասխանատու տնօրէն՝ Վահան Թօշիկեան:

երիտասարդ մէկը կ'երեւաս: Փորձառութիւնը եւ ունիմ, ջանա՛ որ օգտուիս ինձմէ: Ես միայն քու արուեստիդ պէտք ունիմ, ոչ թէ խորհուրդիդ: Ես Պոլսոյ մէջ *Վերջին Լուրը*⁷ հիմնողներէն եմ: Գրաշարութիւն ալ գիտեմ: Տպարան ունիմ, որ կրնայ իբրեւ խմբագրատուն ալ ծառայել: Ուրկէ՞ պիտի գտնաս այս բոլորը...: Փարա՛ շատ ունիս: Վերջնական: Ես կը գրեմ՝ դուն կը գծես: Երբ պիտի սկսիսք գործի:

Պարզուած հեռապատկերին մէջ, եթէ նպաստաւոր կէտեր կային, սակայն, միւս կողմէն, զիս խրտչեցնող շատ բաներ կային:

Գտնուած վիճակիս մէջ՝ այսպիսի պատեհութիւն մը ձեռքէ հանելը որքան խելացի բան էր: Վերջ ի վերջոյ, հաւանաբար փոքրիկ շահ մ'ալ ապահովէր ինծի, բան մը, որուն այնքան պէտք ունէի այդ օրերուն: Յետոյ՝ կար անուն շինելու հարցը: Յետոյ ո՞վ կ'ըսէր, թէ մեր միասին գործակցութեան ընթացքին՝ իր վրայ բարերար ազդեցութիւն մը պիտի չյաջողէի գործել: Այս մասին այնքան ալ վստահ չէի կրնար ըլլալ, տրուած ըլլալով իր հրամայողական եւ տիրական ձեւերը:

- Երկար մ'ըներ: Վաղուրնէ թերթին արտօնագիրը ձեռք բերելու գործողութիւններուն ձեռնարկէ: Ես ծանօթներ շատ ունիմ: Շուտով մը լմնցնենք գործը:

Այս թոնով խօսող մարդուն հետ գործակցութեան գաղափարը չէր ժպտեր ինծի: Ապտէլքատէրէն հագի օձիքս ազատած՝ նորի մը գոհը ըլլալը սարսափ կ'ազդէր ինծի: Միակ տարբերութիւնը պիտի կայանար Ապտէլքատէրին սակաւախօսութեան եւ խորհրդաւորութեան եւ այս նոր փորձանքին՝ Վարդան Չաքարեան կոչեցեալին յորձանուտ խօսակցութեան եւ պէտք եղածէն աւելի մեծխօսիկութեան միջեւ:

Ասիկա ալ առաջարկեց առաջնորդել զիս «իր»

տպարանը: Բայց լեռ եւ ձոր կար Ապտէլքատէրին եւ Վարդանին «Փարոս» տպարաններուն միջեւ: Ասիկա քաղաքին ամենէն պատուական թաղին՝ Սոլիման Փաշա փողոցին վրայ, թէպէտ փոքր, բայց տպագրական նոր մեքենայով օժտուած, մաքուր, կոկիկ ու լուսատր սրահ մըն էր:

Գիրերու կանոնաւոր սնտուկներով, մարմարէ սեղանով, իսկ մեքենային գլուխը՝ երիտասարդ, կոկիկ հագած հայ արհեստաւոր մը: Անցքի մը մէջ էր, որմէ 2-3 մեթր հեռաւորութեան վրայ կը գտնուէր *Յուսաբերի*⁸ տպարանը, միւս քովը, յոյնի մը լիթօկրաֆիի հիմնարկութիւնը: Մէկ խօսքով «տպարանական» թաղ մը:

Փայտաշէն, երկյարկանի շէնքի մը մաս կը կազմէին, որուն վերեւի յարկը գրասենեակներ էին: *Յուսաբերի* թէ՛ խմբագրութիւնը եւ թէ՛ սրահը Բ. յարկի վրայ էին, իսկ մեր դիմացը գտնուող տպարանին մէջտեղը՝ թերթերով եւ թուղթերով լեցուն սեղանի մը ետին կորսուած՝ նստած էր գիսախոի, թաւ յօնքերով, խիստ արտաքինով մէկը: Ինչ մեծ պատիւ ինծի համար, որովհետեւ պիտի վայելէի դրացնութիւնը Հայաստանէն նոր փախած, *պարլամենտի* անդամ, մեծանուն Վահան Նաւասարդեանին⁹ խմբագրապետը *Յուսաբերի*: Աւանդ, շատ ժամանակի պէտք չմնաց պատիւին ամբողջ գոյնը երեւան գալու համար:

Յոյց տալով մարմարէ սեղանը, ըսաւ.

-Ասոր վրայ պիտի աշխատիս: Լիթօկրաֆին ալ ճիշդ

⁸ Յուսաբեր - քաղաքական, գրական, հասարակական թերթ: Լոյս տեսած է Գահիրէ, իբրեւ օրաթերթ, երկօրեայ, շաբաթական դրութեամբ: Հրատարակուիլ սկսած է 30 Մարտ 1915-էն, Գահիրէ:

⁹ Վահան Նաւասարդեան (1886, Շուշի-1956, Գահիրէ), -գաղափարախօս, հրապարակախօս եւ քաղաքական գործիչ, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան անդամ: Հայաստանի Ա. Հանրապետութեան խորհրդարանի անդամ, 1923-ին վերջնականապէս կը հաստատուի Գահիրէ, ուր կը խմբագրէ *Յուսաբեր* օրաթերթը:

քովերնիս կը գտնուի, վարպետ մարդ է: Ան է, որ կը տպէ արաբական քառագոյն երգիծաթերթ *Խայայ ԷլՏըլը*, որ մրցակիցն է համբաւաւոր *Էլ-Քաշքուլին*:- Յոյց տուաւ *Խայայ ԷլՏըլի* տպագրուած օրինակ մը: Ներկայանալի գործ էր, ամէն տեսակէտով:

Մեքենան բանեցնող գեղադէմ երիտասարդը՝ աշխատանքը առանց ընդհատելու՝ լուռ կը հետեւէր խօսակցութեան, պարբերաբար փորձառուի ակնարկ մը նետելով վրաս. «նոր որս մըն ալ գտեր է»՝ կը խորհէր ապահովաբար:

-Վաղինակ Ռաֆայէլեան, Պոլսոյ ծանօթ տպագրիչներու սերունդէն: Լաւ արհեստաւոր է: Երկու տարի է հոս կ'աշխատի, -ներկայացուց զայն ինծի:

Երկու տարի՛ աշխատիլ Վարդան Չաքարեանի ձեռքին տակ...: Ինչո՞ւ զարմանալ, եթէ մունջ էր մարդը: Արդեօք խօսելու կարգ տուած էր իրեն...:

Մօտ երկու ամիս անցաւ մինչեւ թերթին արտօնութիւնը ձեռք բերինք: Անշուշտ՝ իմ անունով: Իսկ խմբագրապետը՝ Վարդան Չաքարեան: Այդքան ժամանակ՝ առիթը ունեցայ լայնօրէն եւ շատ մօտէն ճանչնալու ապագայ գործակիցս: Առանց աշխատելու, առանց յոգնելու, դիմացինին ճակատին քրտինքով ապրելու գաղտնիքը գտած էր: Իր կիրարկած մեթօնտը. դիմացինին մէջ սպաննել անհատականութեան զգացումը, ձեռներէցութեան ամէն ոգի, արժանապատուութիւնը, զայն վերածել քորջի կտորի մը, ուզածին պէս զայն քամելու նպատակով: Առանց ամենադոյզն կերպով քաշուելու, անոր ներկայութեան իսկ ծաղրուծանակ կ'ընէր զայն, աչքիս առջեւ կարելի եղածին չափ նսեմացնելու համար զինք:

- Սա մարդը կը տեսնես, -կ'ըսէր, -լաւ արհեստաւոր է, բայց բնաւ գործի մարդ չէ: Եթէ ես չըլլամ՝ անօթի կը մնայ: Ես եմ, որ շուկան կը շրջիմ, հրապարակէն գործ կը ճարեմ: Եթէ «լոխմա» (պատառ) մը հաց կ'ուտէ՝ այն ալ ինծի կը

պարտի:

Ինչ որ զարմանալի էր՝ Վաղինակին ընթացքն էր: Ո՛չ մէկ հակազդեցութիւն, ո՛չ մէկ դիտողութիւն, ո՛չ մէկ դէմքի արտայայտութիւն: Գլխուն բաւական կերած պէտք է ըլլար: Որոշ էր:

Սակայն, ապուշ մը չէր Վաղինակ: Երեւի մտքով ծրագիրներ կը մշակէր: Մանաւանդ որ, Չաքարեան՝ հակառակ իր բոլոր յիստորտանքներուն, գործ իսկ բերած չունէր: Վաղինակը ճանչցող մարդիկ ինքնաբերաբար ներս կը մտնէին: Այն ատեն է որ անոնց հետ բանակցելու ձեւեր կ'առնէր, «փաթրոնութիւն»ը¹⁰ կը բռնէր: Կը սակարկէր, կը համաձայնէր եւ գանձած դրամը՝ շիտակ իր գրպանը կը նետէր:

Աղաները չհանողը՝ աղայական ամենէն դաժան մտայնութիւնը ունէր, առանց «մեծն-աղա»յութենէն բան մը ունենալու:

Աւելին: Որպէսզի Վաղինակին հետ ամէն կապ խզել տայ՝ Հելիոպոլսոյ «իր տան» մէջ հիւրընկալած էր զայն, իր տեսքոտ կնոջ եւ երկու փոքրիկ աղջիկներուն հետ: Գերի՝ տպարանին մէջ, Վաղինակը գերի պէտք է ըլլար նաեւ տան մէջ: Սակայն, սուսիկ-փուսիկ Վաղինակը, երեւի ամէն բանի մէջ նոյնպէս սուսիկ-փուսիկ չէր: Աղջիկներէն փոքրիկը՝ ամբողջութեամբ Վաղինակի քիթէն ինկած էր:

«Խեղճին բոլոր կարիքները ես կը հոգամ» Չաքարեան կը կրկնէր յաճախ:

Որքան իրաւացի էր... Վաղինակ՝ սուտ խենթ եղած, վանքին հաւերուն է եղեր աչքը: Ո՛վ գիտէ, թէ Վարդան Չաքարեանի մեղսակցութեամբ չէր այդ պարագան իսկ՝ օր մը իբրեւ գէնք Վաղինակին դէմ գործածելու հեռատեսութեամբ: Բայց այդ իմ գիտնալիքս չէ:

¹⁰ Գործատիրութիւն:

Եկեք տեսեք, շուտով երեւան պիտի գար, որ թէ՛ տպարանին, թէ՛ մեքենաներուն, թէ՛ դրամագլուխին եւ մինչեւ անգամ բնակարանին միակ տէրը՝ Վաղինակն է եղեր:

Չաքարեանին միտքը բացորոշ էր: Տպարանատիրոջ կողքին եթէ յաջողէր արուեստագէտ մըն ալ ունենալ իր ձեռքին տակ՝ ինչ փայլուն հեռապատկերներ կրնային ներկայանալ իրեն:

Աչքը վրաս էր: Երկրորդ Վաղինակ մը կը գտնէր իմ մէջս: Օր մը նոյնիսկ առաջարկեց լքել վարձու սենեակս եւ փոխադրուիլ իր տունը:

Դժբախտաբար իրեն համար Վաղինակն ու ես տարբեր խմորէ շինուած էինք: Գահիրէի հայութիւնը զիս լաւ կը ճանչնար արդէն, իսկ ինձմէ աւելի՝ զինք, իբրեւ առաւ-փախաւ, մեծխօսիկ, ուրիշներ շահագործող եւ մանաւանդ՝ բռնակալ ու ծոյլ: Շատեր բարեկամաբար դիտել կու տային ինձի գործած սխալս, ուրիշներ խորհուրդ կու տային օր առաջ ազատել օձիքս այդ «օձ»ին ձեռքէն: Կային նոյնիսկ ոմանք, որոնք կ'առաջարկէին դրամագլուխ հայթայթել «շնորհքով» թերթ մը հանելու համար:

Պէտք է ընդունիլ, թէ իր հայերէնը մաքուր եւ զօրաւոր էր եւ ունէր գրելու արտասովոր դիրութիւն: Առանց սեւագրութեան, ուղղակի մտքով կը շարէր յօդուածները, գրեթէ անթերի: Թերթի ուղղութեան մասին ըրած առարկութիւններուս առջեւ կը ծռէր, զիս «փախցնելու» վախէն: Կամաց-կամաց, մեծ խոհեմութեամբ կը խորհէի «ներսէն» գրաւել բերդը: Նկարներուս նիւթը ես էի որ կը հայթայթէի, իսկ իր ըրած թելադրութիւնները «կ'ընդունէի» զանոնք թունազերծելէ ետք միայն:

Թունազերծելու այս «մոլութիւնս» շատ սուղի նստած է ինձի: Շատ հակառակորդներ հանած է դէմս: Դժբախտաբար, ինչպէս ամէն մոլութենէ, այս մէկէն ալ

չեմ կրցած հրաժարիլ:

Մէկ բացառութիւն խնդրած էր ինձմէ: Միջամուխ ըլլալ այն դատավարութեան, գոր ծխախոտի ծանօթ վաճառական Մելգոնեան ընտանիքի անդամները իրարու դէմ հանած էր: Կարապետ աղա Մելգոնեանի¹¹ եղբոր որդի Արթաքին դատ բացած էր հօրեղբոր դէմ՝ ժառանգական խնդրի առիթով: Ծանօթ փաստաբան Թորգոմ Ֆիշենկճեան, որուն հետ չես գիտեր ինչպէս ծանօթացած էր մեր Չաքարեանը, 25 եգիպտական ոսկի խոստացած էր այս վերջինին, եթէ իր թերթով յարձակում գործէ Կարապետ աղային դէմ: Ձեռքէ չհանելու համար այս կլորիկ գումարը՝ ինք յանձն առած էր օգտակար ըլլալ Ֆիշենկճեանին, զիս ալ մասնակից ընելով լարուած դաւին: Ես, որ տակաւին նոր էի եւ տեղական գործերուն անծանօթ՝ անպատեհութիւն չէի տեսած քիթս այդ գործին մէջ խորթելու:

Բայց հիմա կը հասկնայի, թէ ինչու համար այնքան հետամուտ էր ձեռքին տակ թերթ մը ունենալու: Օգտուելով դէպքերուն մասին իմ ունեցած անգիտութենէն, ան բռնուն պայքարի անցաւ Կարապետ աղային եւ մասնաւորապէս, նախկին եպիսկոպոս Մուշեղ Սերոբեանի¹² դէմ: Իմ

¹¹ Կարապետ Մելգոնեան - Եգիպտոսի մէջ իր եղբոր հետ ծխախոտի առետուորով ծանօթ վաճառական: Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան բարերար:

¹² Մուշեղ Սերոբեան - (1869, Նիկոմիդիա-1951 Լաոնաքա), ազգային, յեղափոխական գործիչ, Հայ Առաքելական Եկեղեցոյ առաջնորդ: 1922-ին կը դառնայ կարգաթող: Կը մասնակցի Պոլսոյ մէջ գումարուած ՌԱԿ Ա. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին՝ որպէս Եգիպտոսի շրջանակի պատգամաւոր եւ կ'ընտրուի ՌԱԿ առեւնապետ: Մեծ դեր կ'ունենայ Մելգոնեան Կրթական Հաստատութեան ծնունդին մէջ: Հեղինակ է բազմաթիւ հատորներու, որոնցմէ կ'առանձնանայ *Մեր Պայքարը Հայ Ազատագրական Ուղիով* հատորը (Գահիրէ, 1948):

կարգիս, ես ալ երգիծանկարներ կը պատրաստէի այդ ուղղութեամբ, զանոնք թունազերծել է ետք: Չեմ գիտեր թէ ինչ արդիւնքի յանգեցաւ մեր մղած պայքարը, սակայն օրին մէկը ամէն ինչ վերջացաւ: Ա՛լ խօսքը չէր ըլլար դատին: Քանի Վարդաններուն մնացած էր գործը՝ ապահովաբար չէր կրնար յաջողութեամբ պսակուած ըլլալ:

Երգիծանք ըսելով՝ Չաքարեան միայն թունաւոր խայթոց կը հասկնար: Կարիճի մը նման, որ կը մեռնի, եթէ չխայթէ: Այդ խայթոցները պէտք է ուղղէր անիկա, բաց թէ թաքուն կերպով, ուղղակի թէ անուղղակի ակնարկութիւններով, որոնց մեծ մասը, եթէ հասկնալի չէին ինծի, սակայն կարդացողներուն մէջ կային հասկցողներ:

Եւ այսպէս, օրըստօրէ, շաբաթաթերթին թիրաժը¹³ կ'իյնար, հակառակ առաջին օրերուն իր գտած յաջողութեան: Աւելին, զիս յարգողներ, ինծի համակրողներ քիչ-քիչ կը հեռանային ինձմէ, կը խուսափէին ընկերակցութենէս: Անդրադարձայ կամաց-կամաց, թէ՛ եթէ այսպէս շարունակուէր, ամէնուն կողմէ ատուած մէկը պիտի ըլլայի՝ երկրորդ Չաքարեան մը: Մինչդեռ, իմ իտէալս եղած էր արուեստս գործածել բարեկամներու շրջանակ մը ստեղծելու անձիս եւ արուեստիս հանդէպ, ցուցահանդէսներ կազմակերպել, գիրքեր հրատարակել, հանրային գործունէութեան լծուիլ: Բարեկամներս արուեստիս կողքին պիտի կազմէին իմ երկրորդ դրամագլուխս... Վարդանի մը սիրոյն, ինքս իսկ ոտնակոխ ընելու վրայ էի՝ ներկաս ալ, ապագաս ալ, երազներս ալ...: Ի հարկէ, սկսած էի լրջօրէն խորհիլ՝ այս անհաճոյ դրութենէն գլուխս ազատելու կարելիութիւններուն մասին:

Տարօրինակ մարդ էր Չաքարեանը: Այնպիսի մեծ թիով սքօղուած ակնարկութիւններ կային իր գրութիւններուն մէջ, որոնց զանգուածը ոչ իսկ կ'անդրադառնար: Այնպէս

¹³ Տպարանակ:

որ շաբաթաթերթին թիւը հրապարակ ելլելուն պէս, գրպանը օրինակ մը դրած, հասած տեղը թրամուէյ, մէթրօ, սրճարան, առաջին հանդիպողին կը կարդար բարձրաձայն եւ ինք միայն կը խնդար:

- Չէս հասկնար կոր ծօ՛, թէ որուն ուղղուած եմ խօսքերը...,- կը յանդիմանէր դիմացինը: -Չէս յիշեր ասկէ տասը տարի առաջ Կիրակոսին հետ կոիւի բռնուած էր կնոջ մը պատճառով: Պէ՛օ տէյի կը պոռայ կոր... հս՛ հս՛ հս՛...:

Մէկ խօսքով՝ ինք կը գրէր, ինք կը հասկնար, ինք կը խնդար:

- Տգէտներ, ապուշներ, -կը գոչէր անոնց ետեւէն:

- Ատոր ճարը կայ, -կ'ըսէի իրեն: -Ամէն մէկ թիւին հետ՝ ընթերցողին մօտ կ'երթաս եւ կը բացատրես, թէ ու՛ր պէտք է խնդայ եւ ինչո՛ւ:

Չէր իսկ ըմբռներ ըսածիս նրբութիւնը: Հայ ժողովուրդը տգէտ էր, երգիծանքէ չէր հասկնար: Մեղք իր նման մեծ երգիծագրի մը, որ հայ ծնած էր:

- Քանի որ ժողովուրդը գրածներդ ըմբռնելու ի վիճակի չէ՛, դադրեցուր խայթոցներդ, քողածածուկ ակնարկութիւններդ...:

- Կ'ուզես որ այս ժողովուրդին տգիտութեանը գոհեմ իմ տաղանդս... Ես կը գրեմ. ուզողը թող հասկնայ, չուզողը՝ ո՛չ:

- Բայց չէս տեսներ որ թերթը կը տուժէ այդ կերպով:

Անօրինակ շնականութեամբ եւ չարախիւնդ քաւքաւով մը պատասխանեց.

- Կը տեսնեմ որ դուն իսկ դեռ չես կրցեր ճանչնալ զիս: Մինչեւ որ դիմացինս չլացնեմ, չտեսնեմ անոր գալարուիլը՝ ես չեմ կրնար խնդալ: Հասկցա՛ր, -եւ սկսաւ խնդալ բարձրաձայն, երեւի զիս ալ խօսքերուն տակ գալարուած կարծելով:

Ա՛յ չհամբերեցի: Այսքան ալ անպատկառութիւն...:

- Դուն ալ զիս չես կրցեր ճանչնալ, եւ այդ գլուխովդ՝ հասկնալիք ալ չունիս, -պոռացի երեսին: Ես կը խնդամ այն ատեն միայն, երբ դիմացիններս ալ հետս խնդացնեմ, զանոնք ուրախ եւ զուարթ տեսնեմ:

Երկու հակոտնեայ նկարագիրեր, որոնք այնուհետեւ այլեւս չէին կրնար գործակցիլ, այլ պէտք է բախէին իրարու: Եւ բախեցան վերջապէս:

-Դուն նկարներու՛դ խառնուէ: Գրութեան պատասխանատուն ես եմ եւ խրատներդ քեզի՛ պահէ, -պոռաց:

- Թերթը արտաքինով թէ ներքինով իմս է: Չեմ հանդուրժեր որ աղբանոցի վերածուի, ոչ ալ շանթաժի ծառայէ, հասկցա՛ր, -պոռացի ամբողջ ձայնովս:

Քահ քահ խնդաց.

- Մեռնիս ալ՝ առանց ինծի թերթ չես կրնար հանել,- կրկնեց իր սովորական յանկերգը: -Շնորհակալ եղի՛ր, որ մինչեւ հիմա «լոխմա» մը հացի երես տեսար շնորհիւս:

- Ինծի նայէ՛, ամէն մարդ Վաղինակ չէ, գոր մինչեւ վերջին շապիկը կը շահագործես:

Կատաղութենէն գոյսը նետեց: Լեզուն բռնուեցաւ:

Զինք ամենէն աւելի մտահոգողը՝ այս տեսարանին, Վաղինակին աչքերուն դիմաց տեղի ունենալն էր: Ո՛վ կ'ըսէր, թէ ան եւս իր կարգին օր մը պիտի չըմբոստանար եւ իր նման սինլքորին ոտքի հարուածը պիտի չտար պէտք եղած տեղը...: Եւ այն ատեն պիտի տեսնէինք, թէ ո՛վ անօթի պիտի մնայ մեր երեքիս մէջէն:

- Այսուհետեւ թերթ չկայ, -ըսի վճռապէս, -գնա՛, տաղանդդ ուրիշներուն ծախէ, -ըսի եւ սկսայ հաւաքել անձնական իրերս:

Հարց մը միայն կը մնար: Բաժանորդներուն դեռ տասներկու թիւ պարտական էի: 50-ի փոխարէն 38 թիւ միայն հրատարակուած էր: Արժանապատուութեան հարց էր ինծի համար՝ գոհացում տալ անոնց, ինչ կերպով ալ որ ըլլար: Առաւ-փախաւի կարգ անցնիլ չէի ուզեր:

Վարդանը այդքան բարակին նայող չէր: Ինչ ունէր կորսնցնելիք: Արդէն առաւ-փախաւ էր: Մէկ աւելի, մէկ պակաս:

- Թերթը քուկդ է: Իմ ինչի՞ն պէտք, -կը քահքահէր: Չե՞ որ դիմացինը նեղ վիճակի մէջ դրած ըլլալ կը կարծէր:

Անգամ մը եւս, եւ քանիտորոք անգամը ըլլալով, Եգիպտոս հասնելէս ի վեր, ամէն բան ձգած՝ կը լքէի:

Վաղի՞նակ, իր սովորական անտարբերութեամբ՝ կը հետեւէր անցած-դարձածին: Ո՛վ գիտէ ինչէր կ'որոճար իր մտքին մէջ այդ պահուն: Երբ պիտի գար ազատագրուելու իր կարգը...:

Աչքին դիմաց՝ այսքան տարի անպարտելի կարծուած կուտքը՝ փխրուն կաւիճի մը նման փլած, ինկած էր: Անոն փառացս անցաւորի:

Ամիջապէս անցայ գործի: Հակառակ Վարդանի դրած պլոքիսին¹⁴ անթիւ բարեկամներ ունէի: Ասոնց մէջ ամենէն ծանօթն էր Տիգրան Հաճընլեան¹⁵, Մելգոնեան ծխախոտի համբաւաւոր տան տնօրէնը: Չափազանց վշտացած էր Մելգոնեաններու վէճին ընթացքին բռնած դիրքիս համար, եւ հակառակ իր համբաւեալ առատաձեռնութեան՝ *Հայկական Մինեանաի* բաժանորդագրութիւնը առաջին մերժողներէն եղած էր: Այսուհանդերձ, ոխ կապած չէր դէմս: Այս բանը սիրտ տուաւ ինծի՝ դիմելու իրեն՝ թերթին մնացեալ տասներկու թիւերը հանելու համար: Մանաւանդ որ, իբրեւ *Արեւի* արտօնատէր, կրնար տպարանն ալ տրամադրել ինծի: Երթալ իրեն: Բայց ինչ երեսով:

Գացի: Սիրալիք ընդունեց զիս:

- Եկա՛ր, -ըսաւ: -Կը սպասէի: Քեզի չըսի՛ թէ այդ

¹⁴ Պաշարում:

¹⁵ Տիգրան Հաճընլեան - ՌԱԿի անդամ, ազգային հասարակական գործիչ:

հերիֆէն հեռու մնաս: Աղէկ որ փորձով հաստատեցիր ըսածներս: Ինչ կ'արժէ մէկ թիւին տպագրութիւնը,- հարցուց,- թուղթ, տպարան ելն.:

- Մօտ չորս ոսկի:

- Շատ լաւ: Թերթը հանէ՛ եւ ամէն շաբաթ եկու՛ր գանձէ չորս ոսկին: Մէկ պայմանով:

- Ինչ որ կ'ուզէք:

- Այդ հէօտիւկը¹⁶ գործ պիտի չունենայ թերթին մէջ: Ասկէ գատ՝ երկու շաբաթէն Գահիրէ կը հասնի Երուանդ Օտեանը՝ *Արեւի*ն աշխատակցելու: Թող միեւնոյն ատեն *Մինեւնա*իդ խմբագրապետութիւնը վարէ: Ինչ որ շահիք՝ բաժնեցէ՛ք իրարու մէջ:

Կոյրը խնդրեց մէկ աչք՝ Աստուած տուաւ երկու հատ...:

Առաջին բախտաւորութիւնը՝ այս երկիրը հասնելէս ի վեր:

Աշխատակցիլ Օտեանի նման հսկայի մը հետ... Երազ չէր, ինչ էր: Ոչ միայն պզտիկ մնացած պիտի չըլլայի բաժանորդներու աչքին, այլեւ ընդհակառակը՝ իրենց պիտի հրամցնէի երգիծաթերթ մը, պիտի պարգևէի մեծագոյն վայելքը, արժանապատուութիւնս փրկելէ գատ:

Վերջապէս հասաւ Օտեան: Ծանօթ էր անունիս եւ գործերու: Բառին բովանդակ իմաստով՝ համեստ, սակաւախօս, տերվիշ մէկն էր ան: Այսպէս էր առաջին օրը, այդպէս ալ մնաց մինչեւ իր մահուան օրը, 3 Հոկտեմբեր, 1926 թ.:

Ոչ մէկ անգամ ակնարկութիւն ըրաւ իր նախընթաց ծովածաւալ աշխատանքներուն, գտած ընդունելութիւններուն, իր կեանքէն դրուագներուն, իր փառքին մասին: Կարծես սկսնակ մէկն էր, որուն մասին որեւէ բան լսած չըլլայինք:

Արեւի նեղլիկ խմբագրատան Ա. յարկը, խմբագրապետ Փրոֆ. Յովհաննէս Յակոբեանին¹⁷ դիմացը, իրեն

¹⁶ Կոպիտ եւ անտաշ:

տրամադրուած փոքրիկ սեղանին առջեւ նստած, գլուխը ուղղակի մինչեւ թուղթը հակած, դանդաղ ու հատիկ հատիկ գիրերով կը գրէր: Անտարբեր իր շուրջը անցած դարձածներէն, ոչ իսկ փողոցի աղմուկները կամ վարի յարկի գրաշարներուն հանած աղմուկը լսելու երեւոյթ ունէր:

Սկսած էինք *Հայկական Մինեմա*ի վերահրատարակութեան: Իր արտասովոր համեստութիւնը երեսն եկաւ օր մը, երբ հազար վարանումով ազգային կեանքէ ներշնչուած նիւթ մը թելադրեցի իրեն, իբրեւ նորավէպ:

Հակառակ ակնկալութեանս՝ լուռ, առանց ընդմիջելու մտիկ ըրաւ նիւթս: Ոչինչ խոստացաւ, թէպէտեւ թեթեւ ժպիտ մը ուրուագծուեցաւ իր դէմքին: Որքան մեծ եղաւ ուրախութիւնս, երբ *Հայկական Մինեմա*ի 43, 44, 45 եւ 46 թիւերուն մէջ կարդացի «Ազգին Փարաներով» վերնագրուած նորավէպը, որ փոքրիկ գլուխգործոցի մը վերածած էր:

*Հայկական Մինեմա*ն սկիզբները սկսանք տպել *Յուսաբեր*ի մէջ:

Ընթերցողներէն շատեր, գուցէ *Յուսաբեր*ի տպարանը՝ մեզի ծանօթ սովորական տպարաններու հետ շփոթեն: Բայց ան հեռու էր միայն տպարան ըլլալէ: Թերթին նոր խմբագրապետը, մեծահամբաւ Վահան Նաւասարդեան, հոն ստեղծած էր ցարդ մեզի բոլորովին անծանօթ - չըսելու համար խորթ - մթնոլորտ մը: Այդ մարդը, Հայաստանը ձգելով ինքզինք մագապուրծ Եգիպտոս նետելով չէր գոհացած: Ան իր հետ բերած էր իր լքած երկրին իրեններուն հաստատած բոնապետական ռեժիմը, գոր կը կիրարկէր իր տպարանին մէջ, իբրեւ թէ Հայաստանի *պարլամենտ*ի (Գերագոյն խորհուրդ) մէջ գտնուէր:

¹⁷ Յովհաննէս Յակոբեան (1876, Վան-1938, Երեւան) - Հրապարակախօս-խմբագիր, բանասէր, գործած է Մ. Նահանգներու, Թիֆլիսի, Պոլսոյ, Եգիպտոսի եւ Երեւանի մէջ:

Գրաշարները բոլորն ալ կը դողային իր առջեւ: Նոյնիսկ իրեն այցի գացողներէն շատեր՝ փառաւոր տփոցի եւ յիշոցներուն ամենէն ընտրեալներուն կ'արժանանային:

Թուրք ասքեարին առջեւ ծնկաչոք, եւ ապա անկէ լեղապատառ փախուստ տուող «հերոս»ը, կարծես այսպիսով իր վրէժը լուծել կը փորձէր Եգիպտոսի խաղաղ եւ անմեղ հայութենէն: *Պարլամենտի* այդ ֆիլիալի¹⁸ մէջ խոշտանգուած են Վահան Զարդարեան (յեղափոխական մը, որ հազար Վահաններ գրպանէն կը հանէր եւ զոր «խոզի գաւակ» կոչելու չափ յառաջ տարած է իր լրբութիւնը), Փրոֆ. Գայայեան¹⁹, Բարսեղ Պալըզեան, համեստ, Արիստակով, Լեւոն Շիշմանեան²⁰ եւ հակառակորդներուն շարքը աւարտելէն ետք եկած է մինչեւ իսկ իր հարազատ «ընկեր»ներուն՝ Օսնիկ Մաճառեանին²¹, *թենքէճի* Արթինին (որ կտտրած էր հակառակորդներ), Արիս Մուրին եւ դեռ ուրիշներուն:

Այնքան ատեն, որ Հայաստանի *պարլամենտի* ֆիլիալին մէջ կը տպուէր *Հայկական Մինեման*, Օտեան մեր երգիծական գրականութեան գագաթը կը գտնուէր: Սիրալիթ ժպիտներ, խոնարհութիւններ եւ զովաբանական արտայայտութիւններ կ'ուղղէր Նաւասարդեանը անոր հասցէին:

Եկաւ, սակայն օրը, երբ *Հայկական Մինեման* փոխադրուեցաւ *Արեւի* տպարանը, ուր հարկ եղած կարգադրութիւնները ըրած էի այդ ընթացքին:

Այս անօրինակ յանդգնութեան առջեւ *պարլամենտի* անդամը կատղեցաւ: Մազերը տնկուեցան եւ հակառակ

¹⁸ Մասնաճիւղ:

¹⁹ Յովհաննէս Գայայեան (1864, Սեբաստիա-1934, Գահիրէ) - հանրածանօթ բառարանագիր:

²⁰ Լեւոն Շիշմանեան (1879, Պոլիս-1950, Եգիպտոս) - դերասան, բեմադրիչ, հեղինակ է շարք մը զանեշտներու:

²¹ Յուսաբերի արտօնատէր՝ 1928-1979:

կարմիրներուն դէմ ունեցած իր ատելութեան՝ կաս կարմիր կտրեցաւ: Միտքը եկան Հայաստանի մէջ անցուցած իր փառքի օրերը, մաւզերիստական սխրագործութիւնները, եւ օրին մէկը, այդ թզուկը փորձեց չափուիլ մեր գրականութեան հսկային հետ: Զայն որակեց աննկարագիր, խիղճը ծախող եւ «գինք յատկանշող» ուրիշ ածականներով: Հոս իսկ, սակայն, Գողիաթին դէմ Դաւիթին յաջողութիւնը չունեցաւ եւ Օտեանի հանդարտ, պաղարին եւ սրամիտ գրիչը սմբեցուց եւ տեղը նստեցուց ինքնակոչ տիքթաթէօրը²²:

Հայկական Միներսի 50 թիւերուն լրացումով բաժանորդներուս հանդէպ պարտազանց զգալէ ետք ժամանակը հասած էր ապագայիս մասին լրջօրէն մտածելու: Հայկական թերթ մը դժուար թէ ապրեցնէր իր մարդը Սփիւոքի նեղ սահմաններուն մէջ: Արկածախնդիրներու հետ գործ ունենալէն զանաւ ե՛ի այլեւս: Ինչո՞ւ անգամ մ՛ալ բախտս չփորձել արաբական եւ եւրոպական մամուլին մէջ, որոնց կարելիութիւնները անսահման էին: Ինձմէ շատ առաջ Օտեաններու, Արփիարեաններու, Միքայէլ Կիրճեաններու, Թէքէեաններու եւ ուրիշներու անձնական թէ միացեալ ճիգերով հրատարակած բազմաթիւ թերթերուն վիճակուած ճակատագիրը մէջտեղն էր:

Պէտք է ուրիշ, աւելի հաստատուն հիմերու վրայ դնելի նոր ձեռնարկներս:

Որոշումս վերջնական էր: Սկսայ աշխատանքի:

Գալով Չաքարեանին՝ գուշակութիւնս իրականացաւ: Յոբ Երանելիին նախանձը գրգռելու աստիճան համբերատար, անխօս, հլու Վաղինակն իսկ՝ իր կարգին,

²² Բռնակալ:

օր մը ընդվզած, փողոց նետած էր կեղեքիչ Չաքարեանը: Ոչ միայն տպարանէն, այլև նոյնիսկ իր տունէն՝ հարազատ կնոջ կողմէ իսկ:

Բոլոր անոնք, որոնք «առանց իրեն չէին կրնար ո՛չ գործ տեսնել, ո՛չ ալ պատառ մը հաց ուտել» շարունակեցին թէ՛ գործել եւ թէ՛ ուտել: Ինք էր միայն, որ անօգ, անգործ, անընտանիք ու անօթի՝ փողոցները կը սլքտար, մինչև որ օր մը, չես գիտեր ուր, իր անշնչացած մարմինը գտնուեցաւ:

Վերջին գոհը, գոր ճարեց՝ «Ներկի հանրածանօթ փրոֆէսոր» Տէլէմաք Բարթողեանն էր, որ ինքզինք իբրեւ «Նոր Տէլէմաք» իմաստուն եւ ամենագէտ ցոյց տալուն համար շարադրած իր գրութիւնը գրել տուաւ Չաքարեանին, որ «Հայ Տէլէմաք»²³ անունին տակ հատորով հրատարակեց:

Փորձ Մը Ֆրանսական Մամուլին Մէջ

Պր. Գրիգոր Կիրակոսեան²⁴, 1926-ի վերջերը, միջոցը գտաւ ոտքս Գալուստեան Ազգ. Վարժարանէն դուրս սահեցնելու: Ան այսօր մեռած է եւ յարմար չեմ տեսներ մանրամասնութիւններու մէջ մտնելը: Այս բանը, սակայն, փոխանակ յուսահատութեան մատնելու զիս՝ խթան մը եղաւ ինձի աւելի եւս մեծ թափով նետուելու օտար մամուլին գիրկը: Բայց ինչպէ՛ս եւ ուրկէ՛ սկսիլ: Օտար շրջանակներու հետ - արաբական թէ եւրոպական - յարաբերութիւններս հարկ եղածին չափ սերտ չէին տակաւին:

Նմանութեան ոչ մէկ եզր՝ այդ օրերուն եւ 1975-ի արաբական մամուլին միջեւ: Նոր եկած շրջանիս,

²³ *Հայ Տէլէմաք* - Գահիրէ, Տպ. Սահակ-Մեսրոպ, 1934, 312 էջ: Նաեւ՝ *Աստուածայայտնութիւն*, Գահիրէ, Տպ. Սահակ-Մեսրոպ, 1936:

²⁴ Գրիգոր Կիրակոսեան (1888-1974) - Մելգոնեան Կրթական Հաստատութեան տնօրէն, ՀԲԸՄ վարիչ քարտուղար:

Եգիպտոսի արաբական մամուլը գրեթէ ամբողջութեամբ քրիստոնէայ արաբներու, մեծ մասամբ լիբանանցի եւ սուրիացիներու ձեռքն էր: Ասոնց մէջ *ԱլԱհրամ* էր միայն, որ թեքնիքապէս միակ կատարեալ օրաթերթն էր: Կար նաեւ *ԱլՄոքաթթամ* օրաթերթը՝ Ֆարէս փաշա Նիմրի խմբագրապետութեամբ, որ նկատուած էր անգլիասէր օրկան:

Շաբաթաթերթերու տեսակէտով՝ կարելի է ըսել, թէ աւելի նպաստաւորուած էր արաբական մամուլը:

1920-էն սկսեալ կը հրատարակուէր, Սուլիման Ֆաուզիի խմբագրապետութեամբ՝ վիմատիպ, քառագոյն երգիծանկարներով *Ալ-Քաշրուլ* շաբաթաթերթը, իբրեւ երգիծանկարիչ ունենալով սպանացի Խուան Սինթէս վարպետ եւ փորձառու արուեստագէտը:

Կար նաեւ *ԱլԼաթայիֆ ԱլՄուսաուարա* պատկերազարդ, շատ ներկայանալի շաբաթաթերթը՝ արդիական տպարանով, դարձեալ լիբանանցի Իսքանտար Մակարիուսի սեփականութիւնը: *Ալ-Քաշրուլ*ին հակառակորդ, սակայն ճիշդ նոյնանման տպագրութեամբ, կար *Խայայ ԷշՏըլ* շաբաթաթերթը՝ վիմատիպ, որուն երգիծանկարիչն էր առաջնակարգ արուեստագէտ Ռըֆքին, որ Մուսթաֆա Քեմալէն փախչելով Եգիպտոս հաստատուած չերքէզ թուրք մըն էր: «Փարոս» տպարանին ճիշդ մօտիկը գտնուող յոյն վիմատիպին մօտ կը տպուէր թերթը, որով Ռըֆքիին հետ մեր յարաբերութիւնները սիրալիր էին, ճիշդ հակառակը Սինթէսին, որ առաջին իսկ օրէն վերէն կը նայէր ինծի: Կային ուրիշ աննշան, հոսուիոն զանազան յարկաբաժիններու մէջ հաստատուած պարբերաթերթեր, նոյնիսկ օրաթերթեր եւս:

Այդ շրջանին էր, որ սկսաւ տպուիլ *ԱլՊալադ* օրաթերթը, տեսակ մը մրցակից լիբանանցիներու կողմէ հրատարակուող թերթերուն: Առանց անոնց մակարդակին հասնելու, այսուհանդերձ որոշ բարձրութեան մը վրայ կը

գտնուիք:

Այդ տարիներուն հիմնուեցաւ արեւմտեան իմաստով հրատարակչական հսկայ տուն մը՝ Էմիլ եւ Շիրքի Զէյտան լիբանանցի եղբայրներուն կողմէ, օժտուած տպագրական ամենավերջին տուեալներով: Հոն սկսան տպուիլ այլազան պարբերականներ, օֆսէթ դրութեամբ: *ԱլՄուսաուար* (*Լաթայիֆի* տիպով), *ԱլԸթնէյն*, *ԱլՖուրսիա* գունաւոր երգիծաթերթը՝ Րըֆքիի նկարներով, ֆրանսերէն լեզուով *Իմաժ* շաբաթաթերթը (*ԱլՄուսաուարի* ֆրանսերէն համագործ), այսպիսով լայն ու հսկայ ճամբայ մը բանալով եգիպտական լրագրութեան մէջ:

Այնուհետեւ, 1946-ին հաստատուեցաւ Մուրթաֆա եւ Ալի Ամին եղբայրներուն կողմէ «Տար Ախպար ԷլԵոմ» հրատարակչական տունը, որ իր կարգին կատարելագործեց լրագրութիւնը: Հսկայ շէնք, նորագոյն մեքենաներ, նորագոյն մեթոտներ: Ասոնք ունեցան իրենց օրաթերթը՝ *ԱլԱխպար* եւ շաբաթօրեակը՝ *Ախպար ԷլԵոմ*ը, շաբաթաթերթեր՝ *Ախրր Սասն*, *Ախրր Լահզա* եւ այլ թերթեր:

Արաբական մամուլին վերագարթնումին մասին խօսուած պահուն անկարելի է չիշել Մոհամմէտ ԷլԹապի-ի անունը, որ տեսակ մը շարժիչ ուժը եղած է անոր: Ծանօթ օտար լեզուներու, խելացի եւ սրամիտ՝ ինք արմատական փոփոխութիւններ եւ նորութիւններ մտցուց լրագրական մտայնութեան եւ կազմակերպութեան մէջ, իր շուրջ հաւաքելով բոլոր կարող երիտասարդ ուժերը եւ հասցուց լրագրողներու սերունդ մը: Այս սերունդին դերը մեծ կշիռ ունեցաւ յետագային: Ալի եւ Մուրթաֆա Ամիններ, Հասանէյն Հէյքալ, Տոքթ. Սայիտ Ապտու եւ շատ ուրիշներ իրենց նախափորձերը ըրած են ԷլԹապի-ի, նախ *Ռոզ ԷլԵոմ*էֆին (1927-1934 թուականներուն), ապա *Ախրր Սասն*ին մէջ՝ 1934-էն սկսեալ, մինչեւ որ այս վերջինը միացաւ «Ախպար ԷլԵոմ» հաստատութեան:

Ինչպէս ըսի, 1926-ին՝ երբ վերջ տուի *Հայկական*

*Մինեմա*ին հրատարակումը, արաբական թերթերը տակաւին նախնական վիճակի մէջ կը գտնուէին: Իսկ ես՝ չէի համարձակեր «մեծ»երէն սկսիլ դիմումներս: Ինչո՞վ, ո՞ր համբաւիս կոթնելով...

Ահա թէ ինչո՞ւ սկսայ փոքրերէն, «աննշան»ներէն: Այնքան աննշան, որ իրենք իսկ կը զարմանային, թէ ուրկէ՞ ուր օտարական մը լսած էր իրենց թերթին գոյութեան մասին եւ գտած իրենց «անգոյ» խմբագրութիւնը:

«Միթէ՞ ասոնք են, որ ապագաս պիտի ապահովեն...» կը խորհէի:

Լաւագոյն լուծումը կը մնար դիմել Արամ Պէրպէրեանի միջնորդութեան: Ինք, ինչպէս ըսի, խմբագիրներու մէջ եւ խմբագիրներով կ'ապրէր: Դիմեցի: Խոստացաւ: Հակառակ ասոր՝ ամիսներ լուր չելաւ իրմէ: Սպասէի, բայց մինչեւ երբ:

Շուրջս, բարեկամներ եւ ծանօթներ բարեմտօրէն կը թելադրէին «վազ անցնիլ սա անթիքս» գործէն՝ քարիքաթուրայէն եւ նուիրուիլ մարդավարի գործի մը: Դեռ երկու-երեք տարի առաջ, Պոլսէն մեկնած օրերուս, նոյնպէս արտայայտուած չէ՞ր մօրեղբայրս, յարգուած վաճառական մը, Անտոն Ռատակեան:

-Միտքդ անօթի մնալ է, տղայ: Սա խեղկատակ արհեստովդ հաճ պիտի շահիս, -կը կրկնէր ու կը կրկնէր ան: -Այսքան տարի դպրոց գացիր, երեք չորս լեզու, հաշուակալութիւն, գիտութիւն սորվեցար, բոլորը ասոր համար: Դրամատուն մը մտիր, մարդու կեանք վարէ:

Այդ օրերուն՝ նոր գործի մտնողներուն համար դրամատունը իտէպլ ասպարէզ նկատուած էր: Կարծես դրամատուն մը մտնողը՝ անոր տէրը կը դառնար մէկ անգամէն:

Աւանդ, արուեստիս հանդէպ տեսակ մը այս արհամարհանքը միմիայն պարզամիտ, անպատրաստ շուկայի մարդու մենաշնորհ մտայնութիւն մը չէր:

Գրութեանս մէջ, քիչ մը անդին, պիտի տեսնէ ընթերցողը, թէ իբրեւ «ծանրախոհ», «հանրային գործիչ», «լրագրող» զարգացած ծանօթ մարդիկ եւս, 35-40 տարիներ ետք իսկ՝ աւելի յեղաշրջուած ու տաշուած չէին այդ ուղղութեամբ:

Երբեմն հարց կու տայի ինքս ինծի՝ «արդեօք միակ խելացին էս եմ: Վերջապէս, դիմացիներս չարիքս չէին կամենար: Պէ՛տք է յամառիմ այսպիսի անորոշ եւ խախուտ գործի մը կառչելու...»: Վերջ ի վերջոյ պատահ մը հաց չէ՛ ուտելիքս: Ինչ ձեռով որ կրնաս՝ այնպէս կեր...»:

Եթէ սկսայ հակիլ այս եզրակացութեան՝ պատճառներէն մին ալ եղաւ, որ առիթը ինք իր ոտքով եկաւ ինկաւ ձեռքս: Եւ ի՛նչ առիթ: Դրամատուն:

1926-ին, գերմանական Տրեզուներ Պանքը մասնաճիւղ մը կը բանար Գահիրէի մէջ: Տնօրէն նշանակուած էր բարեկամս՝ Երուանդ Տրենց-Մարգարեանի եղբայրը՝ Պ. Արամ Տրենց-Մարգարեան: Իսկ փոխ-տնօրէնը՝ Պոլսոյ Վիեննական Մխիթարեան Վարժարանէն շրջանաւարտ եւ հոնկէ ծանօթ բարեկամս՝ Պ. Արշակ Սեղբոսեան, որ Պոլսէն իսկ լաւ համարում ունէր վրաս, երբ ինք Տէթ Փիւպլիքի²⁵ մէջ կարելոր դիրքի տէր էր:

Պատճառ մը եւս՝ ոչ-արհամարհելի, հայ երիտասարդներուն մուտքը դրամատունէն ներս շատ դիւրին էր: Եթէ ներկայացած այս երեք նպաստաւոր առիթներէն չօգտուէի, կեանքիս մէջ այլեւս յաջողելու յոյսը պէտք է մտքէս հանելի արմատապէս: Ոեւէ մէկը՝ խելքը պիտի թոցնէր: Զիս, ընդհակառակը, նպաստաւոր այսպիսի առիթներու միասնաբար ներկայանալը տեսակ մը յուսաբեկ ըրաւ:

Անկեղծօրէն, եթէ ընելիք խնդրանքիս նպաստաւոր պատասխան մը տրուէր - բան մը, որուն մասին ոչ մէկ կասկած ունէի - աշխարհի ամենէն դժբախտ մարդը եղած

²⁵ Dette Publique - հանրային հաստատութիւն:

պիտի զգայի ինքզինքս:

Այսքան թեթեւ սրտով պիտի հրաժարէի սիրած, մանկութենէս ի վեր պաշտած արուեստէս... Վատութիւն պիտի չըլլամ, տեսակ մը դաւաճանութիւն՝ կոչումիս դէմ...:

Հազար անգամ կը մաղթէի, որ Սեդրոսեան քիթիս բերնիս գոցէր դուռը, կշտամբէր զիս՝ իմ թուլամորթութեանս, պարտաւորական ոգիիս համար: Ամբողջ մաղթանքս այս էր. զիս քննադատողներուն եւ ինծի խորհուրդ տուողներուն առջեւ արդարացնել ինքզինքս. «դիմեցի՝ չընդունեցին: Ինչ կրնայի ընել»:

Կեանքիս մէջ մէկ երազ ունեցած եմ: Ունենալ գործ մը, որ ժամացոյցի սլաքներէն կախուած չըլլայ: Ըլլալ տէրը՝ ժամանակիս: Ոչ մէկուն բարի կամեցողութենէն կախուած չըլլալ՝ ինչ եւ ինչպէս ընելու մասին: Իսկ այդ՝ կարելի չէր պաշտօնեայի մը համար: Ահա թէ ինչո՞ւ միշտ խորշած եմ պաշտօնեայ ըլլալու գաղափարէն:

Ես՝ այդպէս շինուած մէկը, հիմա՛ է որ պիտի դաւաճանէի սկզբունքիս: Յանուն այդ սկզբունքներուն չէր որ Ա. Պատերազմէն անմիջապէս ետք գտած գործէս հրաժարեցայ, գլխարկս առի եւ քալեցի, հակառակ լաւ ոռհիկիս, ամէն ամիս եղած յաւելումներուն, ինծի հանդէպ ցուցաբերուած ազնիւ վերաբերմունքին: Չէի կրնար հանդուրժել որ գրասենեակ մուտքս, ճաշելու ժամս, մեկնումս, հանգիստի պահերս ուրիշի մը քմահաճոյքէն կախուած ըլլային: Պատուհանէն փողոց դիտած պահուս՝ կը տեսնէի փողոցին երթեւեկը, հազարաւորներուն ազատօրէն շրջիլը՝ ժամը 10, 11, 12-ին: Ինչո՞վ կը պարապէին այս բոլորը, այդ ժամերուն այդքան ազատօրէն շրջելու համար, մինչ եւ 10 վայրկեանի համար իսկ՝ մասնաւոր արտօնութեան պէտք ունէի: Այդ մարդիկ անշուշտ աշխատանք մը ունէին, հացին դրամը կը հանէին: Երազս էր ունենալ անոնց ազատութիւնը, աշխատելով մէկտեղ:

Եւ ըսել, թէ այժմ կը գտնուի վիճակի մը մէջ, ուր կը խորհէի վերադառնալ դէպի այն բանտը՝ ուրկէ հազիւ օձիքս ազատեր էի, դեռ հազիւ մէկ քանի տարի առաջ:

Խղճիս անդորրութեան սիրոյն՝ որոշումս տուի, վտարուելու մաղթանքով:

Մտայ դրամատուն: Հարցուցի Սեդրոսեանին գրասենեակին տեղը:

Դանդաղօրէն բարձրացայ սանդուխներէն դէպի մատնանշուած վայրը: Սանդուխներուն վրայէն ակնարկ մը կը նետէի վարի յարկը լեցնող երկսեռ պաշտօնեաներուն խումբին վրայ: Վանդակներու ետին, իրարու մօտ թխմուած գրասեղաններուն շուրջ նստած, թուղթեր կ'առնէին եւ ուրիշի մը կը փոխանցէին, կը մեքենագրէին ինչ որ իրենց մեծը հրամայած էր իրենց: Եւ այսպէս ժամեր ու ժամեր, մինչեւ որ ժամացոյցին սլաքները ատետէին մեկնումին ժամը: Եւ այսպէս օրեր, շաբաթներ, ամիսներ եւ տարիներ: Ուրիշներ՝ ամենայն լրջութեամբ տակէ տակ կը շարէին գումարներ: Իրենցմէ բախտատրներուն դիզած ոսկիները...:

Ո՛ւր կը մնար այդ մթնոլորտին մէջ ձեռներէցութեան, հնարամտութեան, ստեղծագործական ոգին: Մարդկութեան մէջ կարելոր մէկը ըլլալու կարելիութիւնը:

«Վայ այն գործին, որ 17-20 տարեկան աղջիկներուն ձեռքը ինկած է, հոն այր մարդուն համար ո՛չ հաց կայ, ո՛չ ալ ապագայ», կը խորհէի: Աղջիկ մը կ'աշխատի ո՛չ թէ ասպարէզ շինելու համար: Իր ասպարէզը, երագը, իտէալը կը կայանայ ամուսին մը ճարելուն մէջ: Այնուհետեւ ան ազատ է աշխատելու կամ ոչ: Հասած է իր նպատակին: Մինչ այր մարդը երբ գործի մը կը լծուի՝ շատ ատելի լայն հորիզոններու առջեւ կը գտնուի: Անոր նպատակը ապագայ մը կերտել է իրեն: Որքան ատելի ձեռներէց, ուշիմ ու յանդուգն ըլլայ ան, նոյնքան ատելի փայլուն կ'ըլլայ իր դիրքը: Ան ցկեանս պիտի աշխատի:

Ամուսնութիւնը վերջ մը չէ իրեն համար, այլ ասելի սերտօրէն կառչիլ կը նշանակէ իր գործին...:

Ինչ հեգնանք: Միտքս այս տեսակ խորհրդածութիւններով լեցուած՝ ինքս ալ կ'երթայի դէպի գերեզմանը իմ իտէալներու: Կ'երթայի միանալու այն անգոյն, կրատրական խումբին, որ պարզուած էր աչքիս առջեւ:

Հասած եմ դրան առջեւ: Սրտիս բարբախումէն՝ պահ մը կանգ կ'առնեմ: Զարնել, թէ՛ չգարնել, ահա թէ ինչէն կախուած էր ամբողջ ճակատագիրս:

«Եթէ Սեղբոսեան անկեղծ բարեկամ է ինծի, պէտք է չոր «ոչ»ով մը ճամբու դնէ գիս», -մտածեցի, ու քաջութեամբ... վարանոտ հարուած մը տուի դրան:

Կենցաղագէտ մարդ՝ անձամբ բացաւ դուռը: Լայն ժպիտը դէմքին՝ ներս հրամցուց գիս: Ա՛յս այդ ժպիտը, այնքան անհրաժեշտ գործի դիմող մէկու մը համար, որքան չարագուշակ թուեցաւ ինծի: Ընդունուելու ամէն յոյս կը պարունակէր: Հազիւ թէ ժպտեցայ:

- Վաղուրնէ՛ եկուր, գործի սկսէ,- ըսաւ հանդարտօրէն՝ աչքերուս մէջ նայելով, երջանկութեան նշոյլը իզուր փնտռելով անոնց մէջ, -շէֆդ քեզի հարկ եղած ցուցմունքները կու տայ, ասելցուց:

Շէֆէս հրահանգ ստանայի էն: Ու ամբողջ ահաւորութիւնը յետագայ կեանքիս պարզուեցաւ աչքիս առջեւ, հոգէտո՛ի մը դաժան կերպարանքով:

- Կը սկսիս եօթուկէս ոսկիով, յետոյ՝ կը նայինք,- շարունակեց:

Լռեցի:

- Գոհ չէն, -շարունակեց:

- Այսինքն... գոհ եմ, ինչո՞ւ չէ, -կմկմացի...

- Այդպէս չեմ տեսներ, -առարկեց:

Զիս եւ հոգեկան վիճակս յստակօրէն ըմբռնած էր: Ապա բարեկամական անկեղծ շեշտով մը՝

- Ան չէ՛, ամմա, Սարուխան, ի՛նչ բան քեզ կը մղէ նոր

գործ փնտռելու, -հարցուց: -Աղուոր արուեստ մը ունիս ձեռքդ: Պուլիս թէ հոս բաւական աշխատած ես մամուլի մէջ: Գէշ-աղէկ անուն մը շինած ես քեզի: *Հայկական Մինեսոտա* գէշ գործ չէր: Քու տեղդ՝ այդ արուեստին մէջ կը խորանայի, լաւագոյնս կ'օգտագործէի զայն: Պատահական ձախողութիւնները պէտք չէ յուսահատեցնեն մարդս: Վստահ ես, թէ մասնագիտութեանդ մէջ յաջողելու կարելի ամէն միջոց փորձած, սպառած ես...:

Լուեցի: Խօսողը կարծես էս էի, այնքան որ լաւ կարդացած էր միտքս: Համոզուեցայ: Եթէ իր նման խելացի եւ զարգացած մէկուն կարծիքը այդ էր արուեստիս կարելիութիւններուն մասին, ինչ արժէք ունէին *չարշրի*²⁶ մարդոց խորհուրդները:

Այսքանն ալ կարդաց մտքերուս մէջ: Բայց չարանճի ժպիտով մը շարունակեց, ակնոցին տակէն աչքերուս մէջ նայելով:

- Ուրեմն՝ վաղը: Ժամը 9-ին հոս, -ըսա:

- Վանդն իսկ, հարցուցի կմկմալով: - Ինչո՞ւ այսքան աճապարանք:

- Այո՞ վաղն իսկ: Ինչո՞ւ:

- Այս, օրերս կարգադրելիք ստիպողական գործեր ունիմ: Երբ աւարտեմ՝ դարձեալ կու գամ, -ըսի: Յուսահատ փորձ մը՝ ունեցած ազատութիւնս քանի մը օր աւելի վայելելու: Ապա ոտքի կանգնեցայ, հապճեպ շնորհակալութիւններս յայտնելէ ետք՝ ինքզինքս դուրս նետեցի:

- Երթաս բարով, յաջողութիւն, -մաղթեց ետեւէս: Թերեւս կեանքին մէջ առաջին անգամ կը տեսնէր մէկը, որ իր խնդրած պաշտօնը ձեռք բերած ըլլալուն՝ փոխանակ ուրախութենէն ցատկելու, վայրկեան առաջ դուրս կը փախչէր իր պաշտօնատեղիէն:

²⁶ Շուկայ:

Բայց երբեք չզարմացաւ, ատոր վստահ էի: Խտանուածքիս ծանօթ էր Պոլսէն: Շատ լաւ գիտէր, թէ անգամ մ'ալ ոտք պիտի չկոխէի դրամատունը, իբրեւ պաշտօնեայ:

Դուրսը լայնօրէն ըմբռնեցի ազատութեան բոլոր բարիքները: Ամբողջ թոքերովս շնչեցի զայն: Թէ որքան ճիշդ բան էր առջեւս բացուած այդպիսի դուռ մը բրտօրէն գոցելս, չէր իսկ հետաքրքրեր զիս: Գործով փաստեցի, թէ եթէ փափաքիմ, կրնամ պաշտօնի մը տիրանալ: Այդքանը գոհացուց զիս: Ինծի «բարիք կամեցող»ներուն առջեւ ճակատաբաց կրնայի յայտարարել, թէ դիմեցի դրամատուն եւ չընդունուեցայ: Բայց ճշմարտութիւնը օր մը չէ օր մը մէջտեղ պիտի ելլէր:

Ինչ երեսով պիտի երեւայի այդ պարագային անոնց աչքին, եթէ արուեստիս մէջ յաջողելու ամէն փորձ ձախողէր: Արժանապատուութիւնս փրկելու դժնդակ հարցի մը առջեւ կը գտնուէի:

Շուրջս ամէն ոք պիտի մեղադրէր զիս:

-Դրամատան պէս փայլուն գործ մը քթին չտարաւ: Հիմա թող անօթի պտըտի, որ հասկնայ...

Կը մնար ինծի այնուհետեւ «ճերմակերես» ելլել հասարակութեան առջեւ:

Երկարատեն խորհեցայ: Տեսակ մը ինքնահարցաքննութիւն: Խղճիս առջեւ կրնայի՞ հանգստօրէն պատասխանել ինքս ինծի: Ըրամ էի իսկապէս արուեստի մէջ կարելի, նոյնիսկ անկարելի ամէն փորձ: Սպառամ էի ամէն հնարաւորութիւն, արուեստիս մէջ յաջողելու:

Պատասխանը վճռական «Ո՛չ» մըն էր: Չէի ըրած: Եթէ կար մեղադրելի մէկը, այն ալ ես՝ ինքս էի եւ ոչ թէ շուրջիներս: Ուրեմն: Գործի՛ անվարան եւ անմիջապէս:

Այս վճռական որոշումը անօրինակ վստահութիւն եւ համարձակութիւն ներշնչեց ինծի: Դրամատուն եւ այլ որեւէ պաշտօնատուն վերջնականապէս դադրած էին տեղ գրաւելէ մտքիս մէջ:

Ցուցահանդեսներ Գահիրեի Եւ Աղեքսանդրիոյ Մէջ

Ճիշդ այդ օրերուն, Քեմ (Քեմոն Մարենկօ) անունով յոյն երգիծանկարիչ մը, քաղաքին կեդրոնը, շէնքի մը երկրորդ յարկի սրահի մը մէջ, կազմակերպած էր իր երգիծանկարներուն ցուցահանդէսը: Բոլորն ալ չինական մեկանով, ջրաներկ գլուխներ էին՝ Եգիպտոսի ծանօթ քաղաքագէտներու, մեծամեծներու, գործատէրերու, մտաւորականներու եւ այլոց՝ եգիպտացի թէ եւրոպացի: Երգիծանկարներուն մեծ մասը ծախուած էր լաւ գիներով: Ստովի բաղդատեցի զայն ինքզինքիս հետ: Ինչո՞վ պակաս էի իրմէ: Ինչո՞վ աւելի էր ան ինձմէ: Ոչինչով: Ուրեմն ինչո՞ւ չփորձել նոյնը մեր մէջ: Ձախողելու ոչ մէկ պատճառ կը տեսնէի:

Անվարան անցայ գործի: Մօտաւոր ցանկ մը պատրաստեցի գծագրելիք անձերու: Ոմանց ուղղակի դիմեցի, ուրիշներու՝ հանդիսութիւններու, թատերական ներկայացումներու եւ այլ հանդիպումներու ընթացքին: Միշտ նախընտրելի է «գոհ»ը ուրուագծել, երբ ան տեղեակ չէ այդ մասին: Ապա թէ ոչ, արհեստական ճիգեր պիտի ընէ՝ իր թերի կարծած մասերը ծածկելու կամ ուղղելու: Քանի մը ամիս ետք արդէն պատրաստած էի մօտ 90 հոգիներու երգիծանկարները:

Նկարիչ Առաքել Պատրիկ²⁷ այդ օրերուն Եւրոպայէն Գահիրե՛ հասած էր: Ինք եւս մտադիր էր իր իղանկարները ցուցադրել: Հրաշալի: Միասին ցուցահանդէս մը կազմակերպեցինք 8 Մայիս 1927-ին, նկարչական եւ երգիծանկարչական զոյգ բաժիններով, Քանթարա ԷլՏեքքայի Հայկական Ժողովրդական Ակումբին մէջ, որ յետագային Հայ Գեղարուեստասիրաց Միութիւն անունին տակ փոխադրուեցաւ Տուպրէ փողոցի

²⁷Առաքել Պատրիկ (Պատրիարքեան) - 1894, Սեբաստիա - 1984, Երեւան:

շքեղ եւ ընդարձակ նոր սրահը:

Յուցահանդէսը մեծ խանդավառութիւն եւ շարժում ստեղծեց: Բացումին ներկայ էին հարիւրաւոր այցելուներ, որոնց մէջ, ի հարկէ, երգիծանկարուած 90 անձերը՝ հանդերձ ընտանեօք, ազգականաց եւ բարեկամաց:

Դէմքերու վրայ կը փայլէր գոհունակութեան ժպիտը, թէեւ ես կը սպասէի դժգոհութիւններու կամ տրտունջի: Ամէն մէկը, մէկ պատկերէն միւսը կ'անցնէր՝ ժպտախառն արտայայտութիւններ, բացազանչութիւններ, գնահատական խօսքեր եւ շնորհաւորութիւններ յայտնելով: Կային նաեւ դժգոհներ:

Անոնք կերպով մը դառնացած հարց կու տային, թէ «ինչո՞ւ իրենց գլուխն ալ չէր գտնուեր միւս կախուածներու կարգին: Միթէ իրենք անոնցմէ նուա՞ց արժանի էին... նոյն պատիւին»:

Ուրախալին այն էր, որ լոկ խօսքով չէին յայտնէր գնահատականները: Մէկ ժամուան ընթացքին նկարներուն 70 առ հարիւրը արդէն ծախուած էր, կլորիկ գումար մը ապահովելով ինծի: Դրամատունէն գանձելիք երկու տարուան գումարը:

Հպարտ եւ ուրախ էի այդ օրը: Նիւթապէս թէ բարոյապէս տարած էի կրկնակի յաղթանակ մը: Յաղթանակը հոգեկանիս վրայ աւելի՛ նշանակութիւն ունէր ինծի համար: Ինչպէ՞ս պահ մը երկմտեր ու խորհեր էի ձեռքիս «ոսկէ ապարանջան»ը մէկդի նետել եւ զայն փոխարինել պաշտօնէութեան պարտադրած կաշկանդումի շղթաներով: Արդարեւ, ինչպէս ըսած եմ, միշտ խորշած եմ ազատութիւնս կապտել պաշտօնեայի սեղանին առջեւ:

Այս համոզումս աւելի ամրապնդուեցաւ, երբ՝ խանդավառուած Գահիրէի օրինակէն, նոյն տարւոյն վերջերը նոր ցուցահանդէս մը կազմակերպեցի Աղեքսանդրիոյ մէջ: Ինչ բանէ պիտի վախնայի այլեւս:

Անուն ունէի, համբաւ ունէի, նախընթաց ունէի եւ... հաւատք ունէի վրաս: Մանաւանդ քիչ մ'ալ դրամ գրպանիս մէջ:

Հոս աւելի մեծ եղաւ յաջողութիւնը: Գահիրէն բացած էր Աղեքսանդրիոյ մէջ յաջողութեան ուղին:

Ո՛ր էր 1924 Յուլիսին Աղեքսանդրիոյ մէջ «գլխուն զարնուած» յուսահատած Սարուխանը: Այս անգամ անիկա յաղթական մուտք կը գործէր նոյն քաղաքը, համբաւի փայլով լուսաւոր, ճակատը բարձր, կտրծքը դուրս ցցած, կենսալիւր եւ ուրախ: Ամէնուն կողմէ յարգուած եւ փնտռուած: Որուն գլուխը որ գծել կ'ուզէի պատիւներով ներս կը հրաւիրէր զիս...: Շատ չանցած՝ 180-է աւելի գլուխ «որսացած» էի արդէն: Յուցասրահի հարցն ալ դիւրաւ կարգադրուեցաւ:

Եգիպտոսի մէջ համբաւ հանած Փափազեան եւ Ընկ. երաժշտական գործիքներու վաճառատան Աղեքսանդրիոյ մասնաճիւղին տէրն ու տնօրէնը՝ Ժիլ Փափազեան - ինք ալ արուեստի սիրահար, քիչ մըն ալ երգիծանկարիչ - սիրով առաջարկեց տրամադրել նոր բացուած իր ընդարձակ եւ գեղեցիկ սրահը, ուր փոխադրուած էր: Իր բոլոր առաւելութիւններուն վրայ՝ անվճար ըլլալը արհամարհելի յաւելում մը չէր անշուշտ: Անոր փոխարէն՝ Աղեքսանդրիոյ հայ թէ օտար հասարակութիւնը մեծ թիւով պիտի դիմէր եւ պիտի ճանչնար իր նոր հասցէն, ինչ որ իր անժխտելի իրաւունքն էր:

Յուցադրուած գլուխներուն մէջ կը գտնուէր նաեւ մեզի ծանօթ Յ. Մուրաֆեանցիւնը, որ հինգ ոսկիի փոխարէն... գնեց իր գլուխը: Ի տես տիրող խանդավառութեան, արտասովոր բազմութեան եւ իմ երջանիկ դէմքիս, արդեօք վերլիշէնց երեք տարի առաջ իրեն ներկայացող խղճալի եւ յուսահատ երիտասարդը, որուն ուղղած էր տարակուսանք եւ կասկածանք, երբ ան երկու ոսկի փոխ ուզած էր իրմէ: Ինչ որ ալ ըլլար, օգտակար եղած էր ինձի իմ նեղ օրերուս

եւ ապահովաբար ինք եւս ինծի չափ ուրախ էր այդ օրը:

Ամէն տեսակէտով գերազանց էր Աղեքսանդրիոյ ցուցահանդէսը: Նոր մարդ եղած էի այլեւս: Պինդ փակած «ոսկէ ապարանջան»իս:

Ազատ ասպարէզի ազատ մարդ էի: Այլեւս ո՛չ մէկ շէֆի հաշի տալու պարտական էի՝ ուշացած մէկ քանի վայրկեաններու բացակայութիւններուս համար: Ժամանակիս տէրը եւս էի: Ես ինքս կը տնօրինէի անոր գործածութեան եղանակը: Մշտնջենական երազս:

Ճիշդ է, մեծ հարստութեան չտիրացայ: Բայց իմ աչքին՝ ազատութիւնս հազարներու արժէք ունի կը խորհիմ:

Աւելին, համբաւս հասած էր օտար, մանաւանդ եգիպտական շրջանակներուն:

Գահիրէ վերադարձիս՝ անդրադարձայ, թէ փոխանակ ես գործի ետեւէն վազելու՝ գործն է, որ զիս կը հետապնդէր:

Այսպիսով, արաբական մամուլին դռները բացուեցան իմ առջեւ:

Ճակատագրական Դարձակէտ Մը Կեանքիս Ճամբուն Վրայ. Հանդիպում Մոհամմէտ ԷլԹապի-ի Հետ

Այսպիսի փառապսակով վերադարձայ Գահիրէ: Այցելեցի *Արեւի* խմբագրատունը՝ շնորհակալութիւն յայտնելու ցուցահանդէսիս առթիւ խմբագրապետի գրած քաջալերական տողերուն համար: Հոն ինծի յայտնեցին, թէ Արամ Պէրպէրեան լուր դրկած էր, Աղեքսանդրիայէն վերադարձէս ետք՝ անմիջապէս անցնիլ իր աշխատանոցէն: Յաջորդ առտու իսկ հոն էի: Արամ ինծի ներկայացուց բարձրահասակ, սեւ հագուստներով, երկար ֆէտով, պատկառազորու երիտասարդ եգիպտացիի մը, թէպէտ իր ճեփ-ճերմակ մորթով ատելի թուրքի մը երեւոյթը

ունէր ան:

- Այս մարդը երգիծանկարիչ մը կը փնտռէ կոր: Անունդ տուի,- ըսաւ:- Ներկայացնեմ, Մոհամմէտ ԷլԹապի՝ *Ռոզ ԷլԵոսէֆ* շաբաթաթերթի խմբագիր: -Ապա զիս ներկայացուց,- Սարուխան, քարիքաթիրիստ, որուն մասին խօսած էի ձեզի:

ԷլԹապի շատ սահուն ֆրանսերէն կը խօսէր:

- Փորձառութիւն ունի՞ք, հարցուց:

- Այո, -ըսի,- Վիեննա ուսանած եմ:

- Ճիշդ փնտռած մարդս էք:

Ապա թուղթի մը վրայ նշանակեց իր հասցէն, հեռաձայնի թիւը եւ երկու օր ետք հոն հանդիպելու որոշումով բաժնուեցանք իրարմէ:

ԷլԹապի, իր արտաքինով, տիրական եւ վճռական երեւոյթով խելացի եւ զարգացած մէկու մը տպաւորութիւնը ձգեց վրաս: Մէկը, որ ամէն հաւատք եւ վստահութիւն կը ներշնչէր հաստատուն եւ լուրջ գործ մը գլուխ հանելու տեսակէտով:

Տեղոյն վրայ իսկ Արամէն խնդրեցի *Ռոզ ԷլԵոսէֆ* շաբաթաթերթէն օրինակ մը՝ մօտաւոր գաղափար մը կազմելու անոր բովանդակութեան, մասնաւորապէս երգիծանկարչութեան մասին: Այս վերջինները գործն էին Մինթէզին, եւ առաւելապէս քաղաքական բնոյթ կը կրէին, բացի կողքի նկարէն, որ զաւելտական նկար էր, գունաւոր տպագրութեամբ:

Կասկածը մտաւ ներսս: Տեղական-քաղաքական այսքան մեծ թիւով նկարներ ինչպէ՞ս պիտի գծէի ես: Քաղաքական գործիչներէն ոչ մէկը կը ճանչնայի տակաւին, ո՛չ իսկ տեսած էի զիրենք:

Շաբաթաթերթին տէրը մեծ եւ հռչակի տէր դերասանուի մըն էր՝ Տիկին Ռոզ ԷլԵոսէֆ, որ իր անունով կոչած էր զայն: Իր բնակարանը կը ծառայէր միեւնոյն ժամանակ իբրեւ խմբագրատուն: Հոս է, որ տեղի

ունեցաւ ԷլԹապի-ի հետ իմ հանդիպումս: Սկիզբները, թերթը աւելի թատերական բովանդակութիւն ունեցած է, իսկ յետոյ, կամաց-կամաց, քաղաքական-հասարակական երգիծաթերթի վերածուած էր, մանաւանդ ԷլԹապի-ի անոր խմբագրապետութիւնը ստանձնելէ ետք:

- Սենթէզը պիտի հեռանայ մեր թերթէն: Պիտի ուզէի՞նք որ դուք փոխարինէք զինք: Տրամադիր էք, -հարցուց ԷլԹապի:

Սենթէզի հոչակին առջեւ շատ տկար կը նկատէի ինքզինքս:

- Տրամադիր եմ, եթէ կը կարծէք, թէ կրնամ գոհացնել ձեզ, -ըսի:

- Կը գոհացնէք, մի՛ վախնաք, -ըսաւ այնպիսի շեշտով մը, որ բոլոր վախերս փարատեցան:

Ճիշդ այդ օրերուն, Եգիպտոսի զարթօնքին դրօշակիր, մեծ հայրենասէր եւ Ուաֆտ Կուսակցութեան հիմնադիր Սաատ փաշա Զաղլուլ²⁸ նոր մեռած էր եւ անոր յաջորդած էր Մութաֆա էլ Նահաս փաշան²⁹: Շատ դժուար հարց է հսկայ մը փոխարինել: Ինչ որ ալ ընէ, ինչ որ ալ ըսէ նախորդին աստիճանաչափով կը դատուի եւ մինչեւ որոշ ժամանակ շուքի մէջ կը մնայ: Նոյնը պիտի չպատահէր ինծի հետ եւս:

Ռոզ էլԵուսէֆ ուաֆտիսթ էր, իսկ *Էլ-Քաշքուլ*՝ հակազաղլուլական: Սենթէզ՝ իբր *Էլ-Քաշքուլի* աշխատակից, չէր կրնար միեւնոյն ժամանակ աշխատակցիլ ճիշդ

²⁸ Սաատ (իսն Իպրահիմ) փաշա Զաղլուլ (անգլ. Saad Zaghloul) - (1859-23 Օգոստոս 1927): Եգիպտացի յեղափոխական եւ պետական գործիչ: Եղած է ղեկավարը Եգիպտոսի ազգայնական *Ալ Ուաֆտ* կուսակցութեան, ստանձնած է Կրթութեան եւ Արդարադատութեան նախարարի պաշտօններ, հուսկ՝ Եգիպտոսի վարչապետ:

²⁹ Մութաֆա էլ Նահաս փաշա (անգլ. Mostafa el-Nahas Pacha) -15 Յունիս 1879-23 Օգոստոս 1965), եգիպտացի քաղաքագէտ եւ պետական գործիչ: Եղած է Եգիպտոսի վարչապետ:

հակառակ ուղղութեան հետեւող ուրիշ թերթի մը: Ահա պատճառը *Ռոզ ԷլՇուսէֆէն* իր քաշուելուն:

ԷլԹապի երկու նկարներու նիւթեր թելադրեց ինծի: Երկուքն ալ քաղաքական:

- Քաղաքական նիւթեր մի՛ տար ինծի, -խնդրեցի: -Ես անոնց ղեկավարներուն ղէմքերուն ծանօթ չեմ: Պիտի նախընտրէի գուարճալի նիւթեր:

- Մեզի պէտք եղածը առաւելապէս քաղաքական նիւթերն են: Տեսած քանի մը նկարներէդ դատելով՝ ապահով եմ, որ պիտի կարենաք մէջէն ելլել, -աւելցուց: -Գալով գծելիք ղէմքերուն, անոնց բոլորը կրնաք գտնել *ԷլՔաշքուլի* մէջ: Կրնաք զանոնք ընդօրինակել:

Ընդօրինակել ուրիշի մը գործը: Այդ մէկը՝ երբեք: Առաջին օրէն, ամէն բանի մէջ, իտէալս եղած է՝ ըլլալ ինքնատիպ եւ գուտ անձնական: Այդ սկզբունքին հետեւած եմ 1910-էն ի վեր՝ դեռ 12ամեայ պատանի, երբ եղբօսս՝ 11 տարեկան Լեոնիին հետ, մեր տան մէջ ձեռագիր թերթ կը հանէինք՝ «Ղուղիկօ» արտատոց անունով: Նոյնիսկ թերթին անունին մէջ ուզած եմ խուսափիլ հասարակ տեղիք դարձած անուններէն: Իսկ այժմ, յանկարծ, երբ 17 տարի ետք հասուն երիտասարդ դարձած էի, ինձմէ կը պահանջուէր ոտնակոխ ընել «անյեղլի» սկզբունքս, ընդօրինակել ուրիշին գործերը:

Եթէ, սակայն, որոշած էի մուտք գործել արաբական մամուլէն ներս, ուրիշ ելք չունէի:

- Կ'ընդունիմ՝ մէկ պայմանով: Կ'օգտուիմ *ԷլՔաշքուլէն*, առանց ընդօրինակելու, այն ալ մինչեւ այն օրը, երբ անձերը աչքովս տեսնելու առիթը ունենամ:

ԷլԹապի ընդունեց եւ *ԷլՔաշքուլի* մէջէն զատեց այն գլուխները, զորս պէտք է գծէի իր թելադրած նիւթերուն համար:

Այսպէս սկսաւ ԷլԹապի-Սարուխան գործակցութիւնը, որ մօտ քսան տարի պիտի տեւէր: Ես արդէն մշակած էի իմ

իւրայատուկ ոճն՝ անկախ ուրիշներէ, եւ սկսած էի գնահատուիլ արաբական աշխարհին մէջ: Բայց պատահեցաւ այն, ինչ որ կը պատահի երկու ընկերներու միջեւ: ԷլԹ-ապի եւ *Ռոզ ԷլԵնուէֆ* գծտուեցան իրարու հետ, եւ Թ-ապի՝ անջատուելով տիկիւնէն, որոշեց հանել իր սեփական թերթը՝ *Ախրր Սաա*: Հոս ծագեցաւ աշխատակիցները իրարու ձեռքէն խլելու խուլ պայքարը: Ժամանակին լքուած Սարուխանը սկսաւ ձեռքէ ձեռք խլուիլ: Պայքարէն յաղթական դուրս եկաւ ԷլԹ-ապին: Իր շեշտուած անհատականութիւնը, փորձառու եւ ձեռներեց ոգին շատ մեծ գրաւական էին իր նոր հիմնելիք թերթին յաջողութեան:

Իսկապէս դէմք էր ԷլԹ-ապի արաբական մամուլին մէջ: Ստեղծած էր գրելու, թերթը ներկայացնելու ուրոյն եւ աչքառու ոճ մը: Զարմանալի չէ, եթէ ըսուի, թէ դեռ յիսուն տարի ետք մամուլը իրենց ձեռքը ունեցող մեծագոյն լրագրողները՝ դարբնուած էին ԷլԹ-ապի-ի «դպրոց»ին մէջ: Մուսթաֆա եւ Ալի Ամին եղբայրները, Հայքալները, Ապտէլ Քուտտուսները եւ շատ ուրիշներ, կերպով մը իր աշակերտները եղած են:

Իսկ ինչ ունէր տիկին *Ռոզ ԷլԵնուէֆ* ասոնց փոխարէն, եթէ ոչ իր կանացիութիւնը, դերասանի համբաւը եւ մանաւանդ՝ իր արցունքները:

Շատ ցնցուեցաւ, մանաւանդ իմ հեռացումէս: Կանչեց զիս իր մօտ, լացաւ, տխրեցաւ, աղաչեց իսկ որ զինք չլքէի: Այնքան, որ ստիպուեցայ տեղի տալ: Համոզուած ըլլալով մէկտեղ, թէ ԷլԹ-ապի պիտի չկլլէր իմ կողմէս այդպիսի քայլ մը, համաձայնագիր մ'ալ ստորագրեցի տիկնոջ հետ:

Վախը սիրտս, քիչ մը ամէն բան մոռնալու համար, գիշերը գացած էի Հայ Գեղարուեստասիրաց Միութեան սրահը: Փինկ-փոնկ խաղալու վրայ էի, երբ յանկարծ դուռը բացուեցաւ եւ դէմս տնկուեցան ԷլԹ-ապի եւ Մուսթաֆա Ամին՝ իրենց հսկայ հասակներով եւ դաժան կերպարան-

քով: Զիս պարտադրեցին ամէն գնով չեղեալ նկատել նախօրօք կնքուած համաձայնութիւնը՝ ստանձնելով այդպիսի ընթացքէն յառաջ գալիք կնճռոտութիւններուն նիւթական թէ բարոյական հետեանքներուն ամբողջական պատասխանատուութիւնը: Ամսականս բարձրացուցին 30 ոսկիի: Ես պահանջեցի օրինաւոր պայմանագիր: Անոնք պատրաստ էին ամէն պայման ընդունիլ, միայն թէ վերադառնայի իրենց:

Ժամը գիշերուան 10-ին, գացինք Մեթր Շաւարշ Սեյօնքեանի³⁰ գրասենեակը: Յաջորդ օրը պիտի ճամբորդէր, կարգադրելիք շատ գործեր ունէր: Դժկամութեամբ ընդունեց պատրաստել պայմանագրութիւնը, որ երկուստեք ստորագրելէ ետք, ժամը 12-ի մօտ բաժնուեցանք իրարմէ: Խղճի հանդարտութեան համար, նամակ մը գրեցի Րըֆքի բարեկամիս որ երթայ զիս փոխարինելու *Ռոզ Էլեուէֆի* մէջ: Հակառակ ասոր, *Ռոզ Էլեուէֆի* ջքաշուեցաւ դատի կանչելէ զիս:

Հազիւ երկու ամիս անց՝ Էլեւապի պիտի չյարգէր իր յանձնառութիւնը: Արդէն ամսականս երեսունէն քսանի իջեցուց զանազան առարկութիւններով, որոնց վարժուած էր:

Յաջողցնելու համար *Ախրր Սասի* տարածումը, անիկա դիմած էր փրոփականտի ամէն տեսակ միջոցներու, որոնց մէջ մեծ վարպետութիւն ունէր: Նախքան թերթին հրատարակումը, անիկա հրապարակը ողողեց գրութիւններով, նկարներով, երգիծանկարներով: Այս վերջիններէն մին, իմիջիայլոց, կը ներկայացնէր *Ռոզ Էլեուէֆի* նախկին աշխատակիցները՝ հաւաքուած Էլեւապի-ի շուրջ, դուրս կը վազէին թերթին դռնէն, իսկ այդ խումբին ամենէն առջելը, վրձինը ձեռքս՝ ես:

³⁰ Շաւարշ Սեյօնքեան (1901-1993) - եգիպտահայ իրաւաբան, յետագային գործած է ԱՄՆ-ի եւ Զուիցերիոյ մէջ:

Թերթերու այս բաժանումին առթիւ, երեւան եկաւ երեւոյթ մը, որ առնուազն վատութեան կը մօտենար: Դաւը պատրաստուած էր արդէն օրեր առաջ: Գիտէի, թէ թերթին անձնակազմէն որոնք են որ պիտի հեռանային՝ միանալու ԷլԹապի-ին: Այդուհանդերձ՝ նախօրեակին՝ բոլորն ալ սովորականի նման նստած էին իրենց գոհին առջեւ եւ - իբր թէ արտասովոր ոչինչ ըլլար - ամէնօրեայ իրենց խօսակցութիւններով, կատակներով եւ ծիծաղներով կ'օրօրէին առանձին մնացած կիներ, անոր մէջ սպաննելու համար կասկածի ամէն նշոյլ: Ես՝ անկիւն մը քաշուած ու խղճի խայթէ տարուած, լուռ կը հետեւէի տեղի ունեցած *քովտի*ին....:

Ինչպէս կ'ակնկալուէր, *Ախրը Սաս* առաջին օրէն իսկ (15 Յուլիս 1934), դարձաւ ամենէն աւելի փնտռուած երգիծաթերթը: Մասնատրապէս հակաուաֆտիսթներու եւ պահպանողականներու դէմ իր մղած բուռն պայքարին բերմամբ: Իբրեւ թիրախ ընտրած էր օրուան վարչապետ, խորամանկ եւ խելացի Իսմայիլ Սըտքի փաշան: Այս վերջինը բիրտ միջոցներով, նոյնիսկ արեան գնով, կը ջանար իր դէմ կազմակերպուած ցոյցերը զսպել: Իբրեւ անողորմ, արիւնկզակ բռնապետ կը ներկայացնէի զինք, ԷլԹապի-ի թելադրութեան անսալով:

Երբ հարցը կը դառնար ներքին դժուարութիւններու, պայքարներու, խառնակութիւններու շուրջ, սկզբունք ընտրած էի ինծի՝ նիւթին ամբողջ պատասխանատուութիւնը բեռցնել պատասխանատու խմբագրին վրայ: Եւ այս՝ իրենց յանձնարարութեամբ եւ կամքով. իբրեւ հայ ո՛չ անձնապէս, ո՛չ ալ պատկանած ազգիս արատ մը չբերելու միակ մտահոգութեամբ, իսկ խմբագրութիւնն ալ՝ իր կարգին զիս ոչ մէկ գնով դատ-դատարան եւ նոյնիսկ բանտարկութեան չենթարկելու եւ իմ աշխատակցութենէս չզրկուելու մտահոգութեամբ:

Եւ իրաւամբ, ինչ պէտք ունէի անձնապէս այդ խնդիրներուն մէջ քիթ խոթելու: Սակայն, ոչ ոք կրնար առարկել, որպէս թերթին պաշտօնեան՝ խմբագրապետին կամքին ենթարկուած ըլլալու մասին:

Այնքան ատեն որ նկարին մէջ անվայել ու տգեղ բան չկար, որուն պատասխանատուն ես միայն կրնայի նկատուիլ, նկարին տակ գրութեան մասին ես ոչինչով յանցաւոր էի: Քանի որ անիկա արաբերէն լեզուով գրուած էր, գոր չէի հասկնար եւ իմ քննթրուլէս դուրս էր:

Այդպէս ալ պատահեցաւ: *Ահարր Սասի* մէջ երեւցած նկարի մը հետեւանքով, ԷլԹ-ապի եւ ես Ընդհանուր Դատախազութիւն կանչուեցանք, քաղաքապետարան, ուր մնացինք մինչեւ առաւօտեան ժամը երկուքը: Իսմայիլ Սըտքի փաշա ներկայացուած էր արիւնտու կացինը ձեռքին, ամբոխին մէջ կանգնած: Առանց իսկ հարցաքննուելու, նոյն ժամուն տուն ճամբուեցայ:

Արտասովոր խելացի, նուրբ դիւանագէտ, սակայն, ծայրայեղ յետադիմական գաղափարներով լեցուած մէկն էր Սըտքի փաշան: Անգամ մը, պաշտօնական ընդունելութեան մը ընթացքին, կ'արտայայտուէր երկրին տնտեսական եւ երկրագործական բարեփոխութիւններուն մասին: Հարցը դարձաւ Ֆելլահներու վերջին ծայր թշուառ վիճակին, ինչպէս նաեւ անոնց անգրագիտութեան մասին: Զարմանալի եղաւ իր պարզած տեսակէտը:

«Տելլահը իր ներկայ վիճակին մէջ, երջանիկ կը զգայ ինքզինք», - ըսաւ ան, - *«անիկա իր հիւղակէն եւ դաշտէն զատ բան չի գիտեր: Աշխարհի մէջ ուրիշ տեսակ կեանքի մը մասին ոչ մէկ գաղափար ունի: Աշխարհը իրեն համար կը սկսի եւ կ'աւարտի իր հիւղակով: Ան հոն երջանիկ կ'ապրի իր ընտանիքի անդամներով, կովերով, այծերով եւ էջով: Ան հաստատ համոզուած է, թէ Աստուած զինք այդ կեանքը ապրելու համար ստեղծած է: Պտուղ, միս, հաւ, ամէն ինչ կը տեսնէ, կը հասցնէ զանոնք, բայց ձեռք չի տար անոնց,*

առանց որեւէ դժգոհանքի: Չէ որ այդ է Աստուծոյ կամքը:

Երբ եգիպտացորեն ունի, ան ամէն բան ունի: Ան կը պատրաստէ իր հացը, ճաշը, ամէն ինչը: Միս՝ տարին մէկ անգամ կ'ուտէ: Պայրամին (Բալամսկան տօն) օրը, հողատէրը եզ մը կը մորթէ, զայն կը բաժնէ իր գիղացիներուն միջեւ:

Այդքան: Երբ իր վիճակէն գոհ ու երջանիկ է ան, ինչո՞ւ խանգարել անոր այս երանաւէտ ապրելակերպը: Դպրոց բանայ անոր համար կը նշանակէ բանայ անոր աչքը, այսինքն՝ դժբախտացնել զինք: Չէ որ ատիկա իրեն առիթ պիտի տայ, որպէսզի ան տեղեակ ըլլայ աշխարհի իրականութեան, բաղդատէ իր կեանքը ուրիշ երկիրներու գիղացիներու կեանքին հետ եւ ինքզինք դժբախտ եւ անիրաւուած զգայ: Կ'արժէ որ մեր ձեռքով քայքայենք այդպիսի երանելիութիւն մը...: Մի մոռնաք, որ այն օրը, ուր ֆելլահը սկսի միս, պտուղ, հաւ ուտել՝ Եգիպտոսի բնակչութիւնը կը զրկուի անոնցմէ...»:

Մէկ խօսքով՝ պէտք էր երկրի բնակչութեան առոյգ, աշխատող տարրը, այսինքն 90 առ հարիւրը, բնութեան ամենէն տարրական բարիքներէն զրկուէր - բարիքներ՝ զորս իրենց քրտինքներով մէջտեղ կը բերէին, որպէսզի անդին 10 առ հարիւր առանձնաշնորհեալներ՝ մեծափարթամ փոր եւ իւղոտ ծոծրակներ ունենային:

Մամուլը՝ ժողովուրդը արթնցնելու, այսինքն զայն դժբախտացնելու սահմանուած ամենէն զօրաւոր ազդակներէն մին էր: Ահա թէ ինչո՞ւ ան եւս ենթարկուած էր հալածանքի: Ահա թէ ինչո՞ւ այդ շրջանին այնքան մեծ էր փակուող թերթերուն թիւը: Ասոր դէմ՝ մամուլը ինքնապաշտպանութեան եզակի ձեւը գտած էր: Կային կարգ մը մարդիկ, որոնք նստած տեղերին՝ դիւրաւ դրամ շահելու կերպ մը ստեղծած էին իրենք իրենց: Առանց լրագրող ըլլալու, Թագաւորական շրջանին՝ փոքրիկ գումարի մը փոխարէն շատ դիւրին էր ձեռք բերել թերթ

հանելու արտօնագիր, առանց անպայման զայն օգտագործելու նպատակի: Կը բաւէր, ձեռի համար, տարին մէկ-երկու թիւ հանել, արտօնագիրի իրաւունքը չկորսնցնելու համար:

Ամիջապէս որ թերթ մը գոցուէր՝ այսպիսիները իրենց դարակներէն դուրս կը հանէին իրենց արտօնագիրը եւ զանոնք «վարձու» կու տային գոցուած թերթերու խմբագիրներուն՝ 4-5 ոսկի ամսականի մը փոխարէն: Խմբագրին համար, ասիկա կը ներկայացնէր կրկնակի առաւելութիւն: Նախ՝ աւելի անվախօրէն կ'արտայայտուէր, իսկ երկրորդն ու գլխաւորը այն էր, որ հետապնդումի պարագային խմբագրապետին կամ երգիծանկարիչին փոխարէն արտօնագրին տէրն էր, որ բանտ կը մտնէր, իսկ ինչ տարբերութիւն այդպիսիներուն համար, տո՛ւնը նստիլ, թէ՛ բանտը: Ընդհակառակը, այսպիսով սնունդի ծախքն ալ խնայած կ'ըլլային:

Այս ձեռով, հակառակ տասը անգամ փակուելուն՝ *Ախրը Սաս* ոչ իսկ շաբաթ մը դադրեցաւ հրատարակուելէ: Անուններն էին, որ կը փոխուէին: Այդքան:

1952-ի բարերար յեղափոխութիւնն էր, որ վերջապէս յեղաշրջեց ամէն բան, մէջտեղէն վերցուց ամէն փտութիւն, եւ վերջ տուաւ «տգիտութեամբ ֆելլահին երջանկութիւն պարգեւելու» չնաշխարհիկ դրութեան:

Մոհամէտ Փաշա Մահմուտի Առողջ Դատողութիւնը

Թագաւորական շրջանին Եգիպտոսի մէջ գոյութիւն ունէին մէկէ աւելի կուսակցութիւններ՝ Ուաֆտը, Սահմանադրականը, Ազատականը, Իթթիհատականը, Ազգայնականը, Ժողովրդականը եւլն.: Սակայն, ի տարբերութիւն ուրիշ երկիրներու, հոս գրեթէ բոլորն ալ հիմնուած էին աւելի անհատական շահերու եւ

փառասիրութիւններու վրայ: Ընտրութիւններու ժամանակ՝ ոչ մէկը անոնցմէ կը ներկայանար ընտրական յստակ ծրագիրով: Երբ կարեւոր անձնաւորութիւն մը իր փառասիրական նպատակներուն գոհացում չգտնէր, անմիջապէս կը հիմնէր նոր կուսակցութիւն մը՝ անոր նախագահը ըլլալու միակ նպատակով: Բոլորն ալ կը խօսէին «հայրենիքի», «ազատութեան» մասին, առանց որոշ «պլատֆորմ» մը ներկայացնելու՝ թէ ինչ ձեռով պիտի իրագործէին զանոնք: Չկար ո՛չ յառաջդիմականը, ո՛չ պահպանողականը, ո՛չ ընկերվարականը:

Եւ պայքարը, գոր յաճախ այնպիսի մոլեգնութեամբ կը մղէին իրարու դէմ, ո՛չ մէկ անգամ սկզբունքի կամ տեսակետի շուրջ կը դառնար: Իսկ բրիտանական կառավարութիւնը - յանձին Գահիրէ նստող իր Բարձր Քոմիսիոն - պղտոր ջուրի մէջ ձուկ որսացողի իր օւանդական սովորութեամբ, ոչ միայն կը հրահրէր, այլ ի հարկին կը ստեղծէր զանոնք իրարմէ բաժնող ամէն տարակարծութիւն: Շոյելով անգամ մը մէկ, ուրիշ անգամ միւս կողմիներու փառասիրութիւնն ու մեծամոլութիւնը, լարելով զանոնք իրար դէմ, անիկա կ'ապահովէր Եգիպտոսին կառչած մնալու իր ծրագիրը: Անգամ մը Պալատն էր, որ կը լարէր այսինչ կուսակցութեան դէմ, ուրիշ անգամ՝ հակառակը:

Չեմ գիտեր ուրիշներուն տեսակէտը այս մասին: Գալով ինձի, ես դժգոհելու պատճառ չունէի իրերու այս կացութենէն: Գծագրութեան համար առատ նիւթ կը մատակարարէին ինձի եւ ես երախտապարտ էի իրենց՝ այդ բանին համար:

Կուսակցութիւններուն մէջ ամենէն զօրաւորը, անկասկած, Ուաֆտն էր, Սաստ փաշայի հիմնածը: Ուաֆտ կը նշանակէ պատուիրակութիւն:

Արդարեւ, 6 Մարտ 1919-ին, Զաղլուլի գլխաւորութեամբ՝ չորս հոգիներու պատուիրակութիւն մը կը ներկայանայ

Եգիպտոսի մէջ անգլիական զինուորական ներկայացուցիչ Սըր Ռեճինըլտ Ուինկէյթին³¹, պահանջելով Եգիպտոսի անկախութիւնը: Իբրեւ պատասխան՝ չորսը մէկ կ'աքսորուին Մալթա:

Ժողովուրդը կը պտոթկայ: Պատուիրակներուն շուրջ կը հաւաքուին ժողովրդային գանգուածները եւ մտաւորականները: Այս խմբաւորումը կը վերածուի կուսակցութեան՝ Ուաֆտ անունին տակ:

Երկրորդ գլխաւոր կուսակցութիւնն էր Սահմանադրական Ազատականը, նախագահութեամբ Մոհամմէտ փաշա Մահմուտի: Ամենէն հին կուսակցութիւնը՝ Ազգայնականը, անցած էր Հաֆըզ Ռամատան փաշայի նախագահութեան տակ, բայց որոշ չափով կորսնցուցած էր իր հմայքը: Կային եւ մնացեալները: Ինչպէս յիշեցի, պայքարները այս կուսակցութիւններու միջեւ սկզբունքի շուրջ չէին դառնար: Ընկերային բարեփոխումներու հարցը՝ «անկախութեան» հետ միասին, ընդհանուր խօսքեր էին, բոլորին յատուկ: Բայց ծրագրուած, մշակուած ոչ մէկ յայտագիր, ինչպէս ըսուեցաւ: Ժողովրդական պտոթկումները այս անորոշութեան առջեւ՝ անպակաս էին: Սըտքի փաշայէն առաջ գանոնք զսպելու փորձեր ըրած էր Մոհամմէտ փաշա Մահմուտ: Ան հաստատած էր «երկաթէ բազուկ»ի դրութիւնը՝ տեղի տալով բուռն հակազդեցութիւններու:

Իբրեւ հայ, այդ շրջաններուն, երգիծանկարիչի դիրքս խիստ փափուկ էր, հակառակ որ, ոչ մէկ նախաձեռնութիւն կամ գաղափար կը պատկանէր անձնապէս ինծի: Բոլորն ալ կու գային խմբագրապետէն, եւ ի պաշտօնէ ստիպուած էի ենթարկուիլ անոնց կամքին: Տակի գրութիւնները իմս

³¹Սըր Ռեճինըլտ Ուինկէյթ (1861, Սկոտլիա-1953, Սկոտլիա) - Բրիտանացի զօրավար, Սուտանի ընդհանուր կառավարիչ (1899-1916), Եգիպտոսի Բարձր Յանձնակատար (High Commissioner)՝ 1917-1919:

չէին: Ահա պաշտպանողականս: Պէտք է խոստովանիմ այստեղ, ի պատիւ Եգիպտոսի հանրային կարծիքին, թէ այդ ուղղութեամբ, ո՛չ մէկ դիտողութեան, ո՛չ իսկ ակնարկութեան հանդիպեցայ, ո՛չ մէկ շրջանակի կողմէ, այն օրերուն եւ մինչեւ յիսնամեայ գործունէութեանս վերջաւորութեան:

Անգամ մը՝ վարչապետ Մոհամմէտ փաշա լուր դրկած էր ինծի, թէ կ'ուզէր տեսնել զիս: Բնչ կ'ուզէր ինձմէ. «Երկաթէ բազուկ»ին համը ճաշակել պիտի տար ինծի արդեօք:

Ակնկալածիս հակառակ, խիստ մեղմութեամբ եւ սիրալիիր կերպով ընդունեց զիս՝ ապարանքին ընդարձակ հիրաւրահին մէջ:

-Երգիծանկարներուդ կը հետեւիմ եւ մեծ հաճոյք կը զգամ: Ուզեցի ճանչնալ անոնց հեղինակը, -այսպէս սկսաւ իր գրոյցը, -մանաւանդ «երկաթէ ձեռք»ի վերաբերեալ պատկերներդ շատ կը գուարճացնեն զիս: Այդ բազուկը խիստ եղած է, բայց երբեք տեղի չէ տուած արինսահեղութիւններու, -աւելցուց ան: -Պարագաներ կան, ուր ուժը պէտք է գործածել... այնպէս չէ՛:

Իրաւունք տուի իրեն՝ ինչպէս վայել էր ընել այդ պահուն:

Ո՛վ կ'ըսէր թէ այդ միջոցին դիմացս նստող հեգահամբոյր մարդը օրուան ամենագօր մարդն է, *տիքթաթոր* մը:

- Կը յուսամ, թէ նեղուած չէք դէմս, եթէ երբեմն քիչ մը բռուն նկարներ կը գծեմ Ձեր մասին, -ըսի իրեն ժպտալով:

-Նեղուիմ: Բայց ինչո՞ւ, -յարեց ան: -Քաղաքականութեամբ զբաղող ամէն մարդ պէտք է պատրաստ ըլլայ քննադատութեանց, նոյնիսկ ծաղրանքի ենթակա ըլլալու: Ո՛վ է ըսեր «ինչ որ քաղաքական մարդը կ'ընէ լաւ կ'ընէ, եւ թէ ամէն ոք ենթադրուած է զայն հաւնելու, իւրացնելու»: Այդ է քաղաքական մարդուն ճակատագիրը: Կամ կը մտնես այդ կեանքէն ներս, կամ ոչ: Եթէ մտար,

պէտք է քաջութիւն ունենաս ամենայն հանդարտութեամբ եւ պաղարիւնութեամբ տանելու ամէն քննադատութիւն, ծաղրանք, նոյնիսկ հալածանք, որքան ալ բուռն ըլլան անոնք: Բնական է, պէտք չէ մոռնալ պատշաճութեան ամէն սահման պահել:

- Բնական է, եւ շնորհակալութիւն Ձեզի, ձեր այսքան լայնախոհ խօսքերուն եւ գեղեցիկ դասին համար, -ըսի, ու բաժնուեցանք իրարմէ ձեռքի տաք սեղմումէ ետք:

Ասիկա առիթ մը եղաւ ինձի՝ բաղդատութիւն մը ընելու Մոհամմէտ փաշա Մահմուտի եւ մեր «պետական»ներու վերաբերմունքին միջեւ: Եւ մերինները չեն որ յաղթական ելան դժբախտաբար:

Երգիծանք եւ ... «Ծաղրածու»

Երեսուն տարիներ ետք իսկ, տակաւին մեր կարգ մը մարդիկ չէին հասած պէտք եղած մտքի հասունութեան՝ նոյնքան լայնախոհ եւ ազատամիտ ըլլալու չափ, հակառակ երգիծանկարի կամ «ծաղրանկար»ի ըրած հսկայ յառաջդիմութեան եւ անոր գրաւած պատուոյ տեղին՝ համաշխարհային մամուլին մէջ:

Ճիշդ է, հետեւած ըլլալու համար այդ յեղաշրջումին, անհրաժեշտ է քիչ մը դուրս ելլել իր շրջապատէն եւ հետեւիլ, թէ ինչեր կ'անցնին-կը դառնան աշխարհի մէջ, զիրենք կալանաւորող չորս պատերէն դուրս: Բարացած եւ անտաշ միտքը դժուար թէ զանազանէ «երգիծանք»ը՝... «ծաղրանք»էն: Ան կը տարուի «ծաղրանկար» բառին պատկանած «ծաղր» մասնիկէն եւ ծաղրանկարիչին եւ իր գործին մէջ «ծաղրածու» միայն կը տեսնէ: Կը մոռնայ, թէ ինչ որ ներելի է հասարակ մարդոց, պարագան նոյնը չէ, երբ մարդ՝... «լրագրող» կը դաւանի ինքզինք:

Այս կարգի «խմբագիր»ներէն էր «պարլամենտի

նախկին անդամ»ի հլու-հնազանդ ստրուկներէն՝ Գաբրիէլ Լազեան³²: Հասակէն վեր ելլելով, օրին մէկը, ան թերթին մէջ, օր ցերեկով, այս մասին յայտնեց իր տգիտութիւնը, առանց անդրադառնալու, թէ մեծագոյն ծաղրածուն կարելի է դառնալ առանց «ծաղրանկարիչ» ըլլալու...: Փաստը: Հայաստանի մէջ 1921-ին ցուցաբերած իրենց «քաղաքական» հասունութիւնը:

Երգիծանքը ըմբռնելու կարողութիւնը չունենալ՝ ամօթ մը չէ: Զայն ըմբռնելը՝ ամէնուն տրուած շնորհ մը չէ: Ամօթ կ'ըլլայ այն ատեն, երբ այդպիսի մէկը փորձէ իր կարգին... երգիծանք ընել: Այն ատեն՝ կը դառնայ իսկական...

Միակ բարիքը զոր գործած են այսպիսի տիպարները՝ մեծագոյն երգիծագիր Օտեանին զմայլելի Փանջունիին նիւթ հայթայթած ըլլալն է, այսպիսով գլուխ գործոցով մը ճոխացնելով հայ գրականութիւնը:

Չմոռնանք, որ առողջ եւ սրամիտ ծիծաղ յառաջ բերելը շատ ատելի դժուար արուեստ է, քան ժողովուրդ մը լացնելը: Հայ ժողովուրդը ներողամիտ է եւ ո՛չ ռիսակալ: Բայց չի հանդուրժեր, որ կէս դար առաջուան սխալները կրկնողներ գտնուին դեռ մինչեւ այսօր:

Բայց... Ինչ Էր Ապտէլքատէրին Խորհուրդը

Վերջին հարցում մը՝ լոյս մը սփռելու Ապտէլքատէրի խորհրդատու վարմունքին եւ աներեւութացումին վրայ: Ինչո՞ւ այնպէս լռակեաց կեցուածք մը ունէր ինծի հանդէպ՝ առաջին իսկ վայրկեանէն՝ մինչեւ վերջ: Վայրկեան մ'իսկ

³² Գաբրիէլ Լազեան (1893, Երզնկա-1959, Գահիրէ) -հասարակական-քաղաքական գործիչ եւ պատմաբան: ՀՅԴ-ի անդամ: Հեղինակ՝ պատմական ուսումնասիրութիւններու, Հայ Դատի վերաբերեալ հատորներու:

կարելի չէ միտքէ անցընել, թէ մասնատր հաշի մը ունէր, զիս- ո՛վ էի ես իրեն համար- Վիեննաներէն Եգիպտոս բերել՝ տանջելու համար: Ինչ որ ալ ըլլայ, ճամբորդութեանս եւ գրպանի ծախքերուս համար ծախսած իր գումարը չէր արդարացներ այդպիսի... վայելք մը: Այն ժամանակ, եւ դեռ մինչեւ այսօր, հաստատ համոզուած եմ իր անկեղծութեան եւ բարեմտութեան:

Առաջին օրերուն եւ ամիս մը ետք, իր դէմքին արտայայտութիւններուն միջեւ կարդալիք շատ տողեր գրուած կային: Կասկած չկար, թէ սխալած էր իր բոլոր հաշիներուն մէջ: Ո՛չ մէկ բան իր անկկալածներէն իրականացած էր: Ինչ էին այդ հաշիները, ինչ բան տակնուվրայ ըրած էր զանոնք: Ո՛չ մէկ բան, ո՛չ մէկ բացատրութիւն, ո՛չ մէկ գլուխ-գլխի խորհրդակցութիւն: Բայց թէ պզտիկ կը զգար իմ առջեւ՝ բացայայտ էր:

Իր պատահական մեկնումները դէպի Մանսուրա, անելի մը մէջ ճամբայ գտնելու ապարդիւն փորձեր էին, որքան զինք, նոյնքան եւ զիս փրկելու համար: Իր բարեմտութեան ապացոյցներէն մին այն էր որ զիս վերջնականապէս լքեց, երբ սիրտը հանգստացած էր կացութեանս մասին: Ուսուցչութեան պաշտօն մը - թէպէտեւ համեստ - ապահոված էի ինծի, նաեւ հայերու մէջ շրջանակ մը ստեղծած էի: Մէջտեղ պիտի չմնայի, գիտէր:

Այսուհանդերձ, խորհուրդը չէր դադրեր խորհրդատր ըլլալէ: Ձեռքիս տակ ո՛չ մէկ տուեալ ունէի՝ գտնելու համար իր հետքը: Գաղտնի ոստիկանի դեր ալ կատարելու ո՛չ ժամանակ, ո՛չ ալ տաղանդը ունէի: Նոյնիսկ եթէ գտնելու ըլլայի զինք, ինչ պիտի կարենայի ընել: Այսպիսով ժամանակի ընթացքին՝ մոռցայ իր գոյութիւնն իսկ:

Անցան տարիներ: Արաբական մամուլի մէջ գրուած էի տեղ մը. *Ռոզ ԷլԵուսէֆէն* անցած էի ԷլԹապի-ի *Ախրր Սասս* թերթը:

Պատահեցաւ, որ Գեղարուեստասիրաց ակումբի խումբի մը հետ Աղեքսանդրիա երթալի զբօսապտոյտի: Հոս ըմբռշխնեցի Աղեքսանդրիա ճամբորդելու ամբողջ հաճոյքը: Ինչ տարբերութիւն առաջին անգամուան եւ ասոր միջեւ: Այլեւս չմեղքցայ մեր մտաւորականներուն, որոնք Գահիրէ-Աղեքսանդրիա եւ հակառակ ուղղութեամբ ճամբորդելու ստիպուած էին: Գիշերը, ճիշդ տասը տարի առաջուան նման, փափաքեցայ անգամ մը եւս շրջիլ շքեղօրէն լուսազարդուած խանութներուն ցուցափեղկերուն առջեւէն, հանգիստ սրտով դիտել զանոնք, մինչեւ իսկ գնումներ ընելու նպատակով:

Լուսանկարիչներ, որոնց կարելոր մէկ մասը հայեր էին՝ մասնաւոր քառողականութիւն մը ունէին ինծի համար: Ասոնցմէ իւրաքանչիւրին ցուցափեղկին առջեւ երկարօրէն կանգ կ'առնէի, ծանօթ դէմքեր փնտռելով անոնց մէջ: Այդպիսի պահ մըն էր, որ քիչ մը հեռուն կանգնող եգիպտացիին դարձուցի ակնարկս եւ... ղվ տեսնեմ: Ապտէլքատէրը: Երեւի ինք ալ ճանչցած էր զիս: Հազիւ քայլ մ'առի դէպի իրեն, երբ յանկարծ աներեւութացաւ քովստի մութ փողոցին խաւարին մէջ: Աւելորդ էր հետապնդել զինք, որքան խաւարին՝ նոյնքան եւ փողոցներուն նեղ ու զիկ զակ ըլլալուն պատճառաւ: Անպիտանը անգամ մը եւս խոյս տուած էր ձեռքէս: Ո՛ր եւ ինչպէս պիտի ձեռք անցընէի զինք անգամ մը եւս:

Գահիրէ վերադարձիս՝ ամէն ինչ մոռցած էի:

Ախրր Սասի գրասենեակս, աշխատանքիս լծուած էի, երբ սպասաւորը մտաւ եւ հետը ներս հրամցուց խարտեաշ մագերով, կապուտաչուի երիտասարդ «խաւակ» (տիտղոս՝ պարոն) մը, ինչպէս սովոր են կոչել եւրոպացիները՝ Եգիպտոսի մէջ: Երիտասարդը բարեւեց զիս եւ գերմաներէն լեզուով գրուած քարթ մը երկարեց ինծի: Անմիջապէս նայեցայ ստորագրութեան: Իրան էր

արդեօք: Ապտելքատեր ԷլՇեննատի, Աղեքսանդրիա, քովը տպարանի մը հասցէն: Տպարան, տպարան: Իր միակ երազը, իտէալը, իր հիւանդութիւնը: Ինչպէս բարեկամս՝ Միքայէլ Կիրճեան³³ կ'ըսէր՝ «Սիրահարուած եմ անոր մեքենաներուն ճայնին, մելանին հոտին...»: Քարթովը կը խնդրէր, որ Գահիրէի տպարաններէն մէկուն մէջ գործ մը գտնելու օգնէի երիտասարդին, որ մասնագետ էր այդ ճիւղին մէջ: Խոստացայ ձեռքէս եկածը ընել, ապա հետաքրքրուեցայ Ապտելքատերին վիճակով:

- Տպարանը իրը չէ, -ըսաւ, աւստրիացի տղան, -ան հոն պարզ պաշտօնեայ է, -աւելցուց: -Շատ շատ բարեւներ իր կողմէն:

Յուզուեցայ, բայց չկրցայ զսպել արցունքս, երբ անգամ մը եւս աչք նետելով քարթին վրայ, կարդացի «յետ գրութիւն»ը: «Անչափ ուրախ եմ գտած յաջողութեանդ համար: Կը նախանձիմ անոնց, որոնք այսօր, իմ փոխարէն կը վայելեն պտուղները այն ծառին, զոր ես ձեռքովս տնկեցի այս երկրին մէջ...»:

Դիրքերը փոխուած էին: Ան է, որ այսօր նեղ վիճակի մէջ կը գտնուէր:

Նոյն վայրկեանին, ամէն ինչ ներեցի իրեն:

Այժմ որ հասցէն ունէի, որոշեցի առաջին առթիւ Աղեքսանդրիա իջնելուս հանդիպիլ իրեն, ողջագործուիլ ու անձամբ ըսել իրեն, թէ թաղուած էր անցեալը:

Արդարեւ, գացի գտայ զինք: Երկրորդական փողոցի մը վրայ հաստատուած ամենէն համեստ տպարանի մը դրան առջեւ, աթոռակի մը վրայ նստած էր Վիեննա ճանչցած Ապտելքատերին իլեակը: Համբուրուեցանք երկու հարազատներու նման: Աչքերուն արցունքը հազիւ կը զսպէր եւ ամօթահար կը զգար ինքզինք իմ առջեւ: Գացինք

³³ Միքայէլ Կիրճեան (1878, Պոլիս-1965, Գահիրէ) - արձակագիր, հրապարակագիր եւ երգիծագիր:

քովնտի սրճարան մը: Ամէն ինչ սրտբացօրէն պատմեց ինծի:

Ձոռ գացած էր իսկական ողբերգութեան մը: Նոյնքան, եթէ ոչ ատլի դժնդակ քան այն, որուն առարկան եղած էի ես Աղեքսանդրիոյ քարափը, տարիներ առաջ: Եթէ իմս եղած էր ժամանակաւոր, պատահական դիպուած մը, իրենը եղած էր իսկական փլուզում մը: Ճոխ եւ փարթամ կեանքէ մը ետք՝ խղճուկ պաշտօնեայ մը, ատլի խեղճուկ տպարանի մը մէջ: Եւ այս՝ տեւական ու երկար ժամանակի մը համար:

Իր մեծհայրը մեռած էր, նախքան իմ հասնիլս: Հօրեղբայրը ամբողջութեամբ իրացուցած էր իր եղբօր զաւակներուն ժառանգութիւնը, որոնց կարգին եւ Ապտէլքատէրինը, փոխարէն իրեն եղած պարտքերուն: Ապտէլքատէր՝ իր բոլոր ծրագիրները հիմնած էր իր ստանալիք ժառանգին վրայ: Այդ օրերուն է որ կը հասնէի ես: Այսինքն, երբ ան մոխիրի վրայ նստած՝ ոչ միայն տպարան հիմնելու, այլ սովորական օրապահիկն իսկ ճարելու ի վիճակի չէր: Դատ բացած էր, եւ անոր բարուք լուծումին յոյսով է որ կը քաշքշէր հարցը: Վերջին մեկնումները դէպի Մանսուրա ոչինչ ունէին խորհրդաւոր: Անոնք տեղի կ'ունենային դատին առնչութեամբ, զոր ի վերջոյ կորսնցուցած էր:

- Ինչ երեսով վերադառնայի, -ըսաւ ան դառնօրէն: -Ինչ ունէի ըսելիք քեզի:

- Երբեք չխորհեցա՞ր իմ մասին: Չհարցուցի՞ր դուն քեզի, թէ ինչպէս մէջէն պիտի ելլէի:

- Ինչպէս չէ: Դատիս կորուստին չափ՝ քու վիճակդ կը մտահոգէր զիս: Բայց մեծ վստահութիւն ունէի վրադ: Գիտէի, թէ ճարպիկ ես եւ հայ բարեկամներ ունէիր, որոնք պիտի չլքէին քեզ...: Հիմա ուրախութեամբ կը հաստատեմ, թէ խաբուած չէի լուստեսութեանս մէջ: Ծանօթ անուն մըն եւ արաբական մամուլին մէջ...: Աւանդ, ո՛չ իմ թերթիս մէջ, - ատելցուց տխրութեամբ:

- Իսկ դուն ինչ ըրիր, ինչպէս ելար գործին մէջէն:

Նշանակալից նայուածք մը նետեց վրաս ու ապա ինքզինք բաղդատեց հետս:

- Իմաստ չունէր այլեւս Մանսուրա մնալս, -շարունակեց, - եկայ Աղեքսանդրիա, ուր դատարանին մէջ պաշտօն մը ձեռք բերի՝ ամսական ութ ոսկիի փոխարէն...:

Ութ ոսկիի...: Մէկը, որ Վիեննայի մէջ, իբրեւ ուսանող՝ ամիսը 30 ոսկիէն անելի կը ծախսէր:

Կրկնեցինք սուրճի գաւաթները: Ինքը գարեջուր չէր խմեր: Պահ մը լռեցինք երկուքս, վերապրելու համար հին յիշատակները: Երբ գաւաթը պարպեց՝ յանցաւոր ձեռով հարցուց.

- Նեղուած ես ինձմէ:

- Սկիզբները՝ այո: Ամենէն անելի՝ քու լրակեացութիւնդ եւ կացութեան մասին զիս անտեղեակ պահելդ՝ ուղղակի կը ջղայնացնէին զիս: Կացութեանս անորոշութիւնը յուսահատութեան կը մատնէր զիս:

Ամօթահար՝ իր լռութեամբ իրաւունք կու տար ինծի:

- Թէ՛ որախոյութեամբ եւ թէ՛ նախանձով կը հետեւէի արաբական մամուլին մէջ օրէ օր յառաջացումիդ, - ըսաւ, գրեթէ անլսելի ձայնով:

- Իսկ ինչո՞ւ ձգեցիր դատարանի պաշտօնդ, - հետաքրքրուեցայ ես:

- Դուն կը ճանչնաս զիս, - ըսաւ, - ես ծնած չէի որեւէ տեղ պաշտօնեայ ըլլալու: Տպարանը, անոր մթնոլորտը ամէն ինչ էր ինծի համար: Հակառակ որ իբրեւ վարձք, թերեւս քիչ մըն ալ պակաս է նախկինէն՝ այսուհանդերձ իմ երազած միջավայրս է...:

- Ճաշմ՞ ես, - հարցուցի: - Երթանք ծովեզերեայ տեղ մը նստինք, պատառ մը բան ուտենք:


Մերժեց՝ «նոր կերած եմ» ըսելով: Իրան էր, թէ՛ չէ՛ չեմ գիտեր: Չպնդեցի: Ու բաժնուեցանք իրարմէ, երկար գիրկընդխառնումէ մը ետք: Իր դէմ ունեցած դառնութեան

վերջին հետքերէն թեթեցած՝ խոստացանք դարձեալ տեսնուիլ:

Այս անգամ՝ Աղեքսանդրիոյ փողոցները կը չափչփէի՝ ճակատս բարձր, հպարտ եւ երջանիկ: Սակայն, Ապտէլքատէրի ճակատագիրը կը հալածէր միտքս: Վերյիշելու համար անցեալը, մտայ ծովեզերքի գարեջրատուներէն մին, ապսպրեցի պաղ գարեջուրը եւ այս անգամ անվախօրէն լափեցի սեղանիս վրայ առատօրէն փռուած պէսպէս *մեզէները*՝ լուծելու համար վրէժը այն օրուան, ուր սաստիկ անօթութեանս հակառակ՝ զանոնք ետ ճամբած էի, գրպանիս մէջ գտնուող երեք դրուշը խնայելու մտահոգութեամբ:

Գահիրէ դարձիս՝ յաճախ կը վերյիշէի Ապտէլքատէրի հետ հանդիպումս: Ո՞վ կ'ըսէր թէ ատիկա վերջինը պիտի ըլլար: Արդարեւ, հազիւ երկու տարի անց՝ լսեցի, թէ վերջին ծայր թշուառութեան ու դառնութեան մէջ, միայնակ ու անօգնական՝ հեռացած էր այս աշխարհէն, իր այնքան սիրելի երագներուն մահը տեսնելէ ետք...:

Խ՛եղճ Ապտէլքատէր:



Ինչպէս Երգիծանկարիչ Եղայ¹

Որո՞նն հոգը, թէ ինչպէս երգիծանկարիչ եղայ: Ամէն ոք, կեանքի մէջ ասպարէզ մը ընտրած է, դուն ալ երգիծանկարիչ եղեր ես: Մե՞ծ բան:

Կը հասկնայինք, եթէ միլիոնատէր մը պարզեր հարստանալու իր գաղտնիքը: Չկայ մարդ, որ չերագէ օր մը՝ տիրանալ միլիոններու: Ա՛յ, եթէ Կիւլպենկեան մը, Մանթաշէֆ մը, Ալեք Մանուկեան մը եւ ոսկիներու մէջ լողացող ուրիշ միլիոնատէրեր փափաքէին տալ ոչ թէ ոսկիներ, այլ՝ անոնց տիրանալու գաղտնիքը, կը հասկնայինք: Ասկէ զատ, եթէ երգիծանկարիչ ըլլալուն կերպն իսկ ունենանք, ո՞վ պիտի փափաքէր մտնել այդ ասպարէզը:

Այս է հանրութեան կարծիքը այդ արուեստին մասին, ընդհանուր առմամբ: Եւ իրատունք ունին: Եղողը ինչ եղեր է որ իրենք ալ փորձուին:

Բայց այսօր ընդհանուր զարգացումի դարուն մէջ կ'ապրինք: Ամէն բանի մասին գաղափար ունենալը անհրաժեշտութիւն է:

Ընտրուած ասպարէզը կախում ունի մարդուն խառնուածքէն, նախաձեռնութեան ոգիէն, զինք

¹ Ինքնակենսագրական յօդուածներ, առաջին անգամ հրատարակուած որպէս թերթօ՛ւ 10-21 Դեկտեմբեր 1983, *Արևու* Օրաթերթի մէջ, Գահիրէ:

շրջապատող պայմաններէն եւ վարած կեանքէն: Ահա թէ ինչու, երբ մէկը կը խօսի իր ընտրած ասպարէզին մասին, ուզէ կամ չուզէ կը ստիպուի անդրադառնալ իր կեանքի զանազան փուլերուն մասին: Երբեմն ասպարէզն է որ մարդը կը գտնէ եւ ոչ թէ մարդս՝ իր ասպարէզը: Այս վերջինը՝ կերպով մը կը պարտադրէ ինքզինքը: Չեմ գիտեր, թէ ուրիշներ ինչ կերպ վաճառական, ատաղձագործ, ճարտարագէտ, բժիշկ կամ վաշխառու եղած են, բայց իմ պարագայիս երգիծանկարիչ եղած եմ, որովհետեւ... անգործ էի: Հիմա հարցնողներ պիտի գտնուին, թէ ամէն անգործ դատապարտումն է երգիծանկարիչ դառնալու: Հարցնողը թող ըլլայ...: Ես այս վերջին դասակարգին կը պատկանիմ: Ահա, թէ ինչո՞ւ հիմա քանի մը դրուագներ պիտի տամ, որոնք իրենց դրոշմը դրած են կեանքիս յետագայ ուղիին վրայ:

Ծնած եմ Կովկասի Արտանուշ քաղաքը 1898-ին, Վրաստան, Կովկաս: Կեանքս մինչեւ 11 տարեկան անցուցած եմ Պաթում քաղաքի մէջ, որուն *գիմնագիայի* (նախակրթարան) մէջ ստացած ենք մեր նախնական կրթութիւնը, կրտսեր եղբայրս եւ ես: Տարօրինակ կերպով երկուքս ալ շեշտուած հակում ցուցաբերած ենք գծագրութեան հանդէպ: Մեր առաջին փորձերը ըրած ենք տան մէջ, ղեկավարութեամբ հօրս, որ ... գծել չէր գիտեր: Միկարէթի տուփերուն վրայ կը գծէր բաներ մը, որոնք ենթադրուած էին մարդ, կով եւ կամ տուն ըլլալու: Իսկ մենք, քաջալերուած անոր օրինակէն, տան մէջ ճերմակ թուղթի կտոր չկար՝ որուն վրայ մեր «փորձերը» չընէինք, լեցնելով մինչեւ իսկ դասագիրքերուն պարապ անկիւնները:

Գիմնագիայի գծագրութեան ռուս ուսուցիչին մասնաւոր ուշադրութիւնը գրաւած էինք մեր վրայ: Ինք ունէր ուսուցանելու իր մեթօտը: Հակառակ էր գծագրութիւններու վրայէն, կամ սեղանի վրայ դրուած այլազան

առարկաներու վրայէն գծելու դրութեան: Ինք կը ջանար աշակերտին մօտ երեւակայութիւնը զարգացնել եւ ըլլալ ինքնուրոյն: Կ'արհամարհէր ընդօրինակուած գծագրութիւնները, աչք մ'իսկ չէր նետեր անոնց վրայ, զանոնք նկատելով ձեռքի ճարտարութեան արդիւնք, ոչինչ աւելի: Իսկ ո՛չ սափոր, ո՛չ ալ ուրիշ որեւէ առարկայ կը դնէր սեղանի վրայ, ինչպէս սովորութիւն եղած է, բայց հեռու է ստեղծագործական աշխատանք մ'ըլլալէ: Եղած են աշակերտներ, որոնք կը գանգատէին, թէ բրո՛ւտ պիտի ըլլային ապագային, տեսալէս սափոր գծելով, որքան ալ իրարմէ տարբեր ըլլային անոնք՝ ձեւով, մեծութեամբ եւ ուրիշ մանրամասնութիւններով: Իր մեթօտը այլ էր: Դասի սկիզբին՝ կը հարցնէր աշակերտներուն թէ Քրիլոֆի (ռուս Լա Ֆոնթէնը) ո՞ր մէկ առակին ծանօթ էին: Ապա, զատելով անոնցմէ մին կը յանձնարարէր նկարագարողել անոր դրուագներէն մին: Օրինակ, առնենք աղուէսին, ագռաւին եւ պանիրին առակը: Դիւրացնելու համար աշխատանքը, քարտախտակի վրայ կը գծէր աղուէս, ագռաւ եւ ծառ մը: Ու ապա 2-3 վայրկեան ուշադրութեամբ զննել տալէ ետք, սպունգով կ'արէր զանոնք եւ կը յանձնարարէր սկսիլ գծագրութեան: Տղաքը ստիպուած էին գլուխ քերել, չարչարել իրենց միտքը եւ գծել իրենց նախընտրած դրուագը: Աշակերտներուն գործին ասարտին, ուսուցիչը շրջան մը կ'ընէր դասարանին մէջ եւ կանգ առնելով իւրաքանչիւրին մօտ, կու տար բացատրութիւններ: Ապա եւ կ'ընէր թելադրութիւններ: Անցնելով քարտախտակին մօտ, այս անգամ ինք կը գծէր նկարը, իր լաւագոյն ձեւով: Իւրաքանչիւր աշակերտ իր գծագրութիւնը կը բաղդատէր ուսուցիչին գծածին հետ, ու կ'ընէր վերջնական սրբագրութիւնը:

Ինքնուրոյն ըլլալու, ստեղծագործելու այս դրութիւնը խորապէս ազդած է գէթ վրաս այնքան, որ կեանքիս մէջ կիրարկած եմ զայն գործունէութեանս զանազան մարզերու

ընթացքին, ըլլան անոնք գծագրութիւն, գրութիւն, բանախօսութիւն, եւլն.: Ոմանք, կառչած կը մնան հնաւանդ սովորութիւններու, որոնցմէ ամենափոքր շեղումն իսկ իրենց համար անմարսելի, չըսելու համար... ծաղրելի է: Իհարկէ, ասոնց կարծիքը ոչ մէկ կշիռ կրնար ունենալ մեր նժարին մէջ: Այս մտայնութեամբ տոգորուած էինք կրտսեր եղբայրս՝ Լեւոնը եւ ես, երբ օսմանեան սահմանադրութիւնը վրայ հասաւ, եւ հայրս 1909-ին քարհիղի իր գործը փոխադրեց Պոլիս, իր հետ քաշելով ընտանիքը, բոլոր անդամներով՝ երեք աղջիկ եւ երկու մանչ:

Ամէն ինչ նոր էր մեր շուրջ, սկսեալ թրքերէնէն, որմէ մէկ բառ իսկ չէինք հասկնար ռուսերէնէն ետք: Այսուհանդերձ, շուտով ընտելացանք շրջապատին: Ինչ որ սակայն խորթ կը թուէր ու կը գայթակղեցնէր մեզ տարեցներու միջեւ տեղի ունեցած խօսակցութիւններն էին, որոնց նիւթերը կը կազմէին 1895 եւ 1896 տարիներու հայկական կոտորածները, ամէն տեսակ մանրամասնութիւններով, որոնք կը ցնցէին մեր հոգիները, անջնջելի կնիք դրոշմելով անոնց վրայ: Մեր դեռատի միտքերը չէին կրնար հաշտուիլ այն գաղափարին հետ, թէ ինչպէ՛ս կարելի էր ժողովուրդի մը համար այնքան դիրքութեամբ հանդուրժել այսպիսի խժոժութիւններ: Իբրեւ պատանիներ, մեր ընդվզումը արտայայտելու ուրիշ միջոց չունէինք, եթէ ոչ՝ հրատարակել շաբաթաթերթ մը, որուն մէջ թէ՛ գրութիւններով, թէ՛ նկարներով, պիտի յայտնէինք մեր «պոռթկումը» եւ մղէինք ժողովուրդը «ինքնագիտակցութեան»: Այս «յանդուզն» ծրագիրը գործադրող «օրկան»ը պիտի ըլլար ձեռագիր, տպագիրի նմանատիպութեամբ եւ երկու օրինակ տպաքանակով, չորս էջի վրայ...: Ո՛վ պատանեկութիւն, ինչ բաներու ընդունակ չես դուն: Եւ ասիկա այն օրերուն, երբ հօրս ձեռնարկած քարհիղի գործը ձախող ըլլալով, տան մէջ 6-8 հոգիի բաւելիք դրամ հագիւ կը մտներ: Ինչո՞ւ երկու

օրինակ: Որովհետեւ թուղթին դրամն իսկ չունենալով, երկրորդ օրինակ մը եւս հանելու ստիպուած էինք մեր կնքահօր համար, որ կը հայթայթէր տարեկան դրամը՝ 5 դրուշ, հանդիսանալով միակ բաժանորդը: Թերթին անունը: Լաւ է չհարցնէք: Ամենէն արտառոց անունը, զոր կրնաք երեւակայել: «Ղուղիկօ»..., կամ «Մանկական Փունջ»:

Սահմանադրութեան սկիզբները բազմաթիւ հայերէն թերթեր բուսած էին Պոլսոյ մէջ, որոնցմէ *Կաւոշ* երգիծաթերթը՝ Երուանդ Թօլայեանի² եւ *Կիկօս*՝ Գրիգոր Թորոսեանի³ խմբագրութեամբ: Այս *Կիկօ* անունը տարօրինակ կը թուէր, իր նշանակութիւնը Կովկասի մէջ ցցուած կոկորդ էր: Ինքնուրոյն ըլլալու մեր մոլուցքին մէջ առինք «ուղեղ» բառը եւ զայն վերածեցինք «Ղուղիկօ»ի:

Թերթին գրական եւ տպագրական գիրերով գրելու մասը առաւելաբար ստանձնած էր Լեւոնը, իսկ նկարչական, մանաւանդ երգիծագրական մասը՝ ես:

Ինքնուրոյն էր նաեւ թերթը ծախելու եւ կարդալու ձեւը: Թերթը հրապարակ կ'ելլէր Կիրակի առաւօտները: Այդ առաւօտ մեր ամբողջ ընտանիքին համար բացառիկ օր մը կ'ըլլար: Բոլորս ալ սենեակը կը հաւաքուէինք՝ մէջը ըլլալով մեր անբաժան միակ բաժանորդը, որ իր «մեկենասութեան հանգամանքով» ամենէն հպարտ կեցուածքը կ'ունենար բոլորին մէջ: Չորս կողմը ինքնագոհ ակնարկներ կը նետէր՝ «թուղթին փարան ես տուած եմ» նշանակութեամբ: Այդ միջոցին դուռը կը բացուէր եւ թելերուն տակ մէկ երկու թերթ՝ *Տաւանակ*, *Կաւոշ* եւլն. բռնած, ներս կը մտնէր մեր ամենէն փոքրիկ քոյրը՝ Սաթենիկ, բարձրաձայն պոռալով.

² Երուանդ Թօլայեան (1883, Պոլիս-1937, Երեւան), կեղծանունը՝ Կաւոշ. -երգիծաբան, խմբագիր, դերասան: 1926-ին Պոլսէն տեղափոխուած է Փարիզ, 1932-ին հաստատուած է Երեւան, 1937-ին մահուան դատապարտուած է եւ՝ գնդակահարուած:

³ Գրիգոր Թորոսեան (1884, Ակն-1915) - խմբագիր, գրող եւ լրագրող:

«Ժամանակ, Կառօճ, Կիկօ, Ղուղիկօ...»: Ամէն կողմէ բարձրաճայն կը կանչէին «Ղուղիկօ, կէլ (եկու՛ր)»: Այդ միջոցին թերթավաճառը կը վերածուէր ընթերցողի եւ թերթը կը կարդար մէկ ծայրէն միւսը, որուն կը հետեւէին բուն ծափահարութիւններ: Ապա, թերթը ձեռքէ ձեռք կ'անցնէր՝ դիտելու համար երգիծանկարները, որոնց թիւր 4-էն 6-ի կը հասնէր: Այդ միջոցին, մենք՝ խմբագիրներս, լուռ ու մունջ ու ժպիտը մեր դէմքին՝ կը հետեւէինք դէպքին:

Մօտ երկուքուկէս տարի այս արարողութիւնը կը կազմէր մեր տան ասանդական միակ զուարճալի ժամանցը: Ժամանց մը, սակայն, որ մեր մէջ ամբացուց յարատեւութեան, ինքնուրոյնութեան եւ մտային փնտռողութի տեսական մարզանք մը, որ իր կնիքը պիտի դնէր յետագայ մեր կեանքի գործունէութեան վրայ:

Ծնողաց Կովկաս վերադարձէն ետք, մենք դրուեցանք Պոլսոյ Փանկալթիի Վիեննական Մխիթարեան Վարժարանը⁴, իբրեւ գիշերօթիկ: Ա. Պատերազմին ծագումով՝ քանակապէս վարժարանին թէ՛ աշակերտութիւնը, թէ՛ ուսուցչութիւնը իրենց նուագագոյն աստիճանին իջան: Բարձրագոյն կարգերէն չորսը գոցուեցան՝ օտար ուսուցիչներուն մեկնումով եւ ուսանողութեան մեծ մասին զինուորագրումով: Ջնջուեցաւ գիշերօթիկի դրութիւնը եւ մնացինք վեց հոգի՝ քառասունին վրայ: Եղբայրս եւ ես՝ ռուսահպատակ, մնացեալ երեքը՝ էրզրումցի, իսկ մէկը՝ բաբերդցի, որոնք իրենց ընտանիքին մօտ երթալու ի վիճակի չէին: Ատոնցմէ երկուքը՝ Գեղամ եւ Վահէ Բաստրմաճեանները, խարդախ միջոցով մը ոստիկանութեան ձեռքը ինկան ու հեռացուեցան, ապա, բուն տանջանքներու ենթարկուելով՝ սպանուեցան: Մնացեալ չորսը՝ եղբայրս ու ես եւ Սարգիս Միմոնեանն ու

⁴ Պոլսոյ Փանկալթիի Վիեննական Մխիթարեան Վարժարան, 1811-ին, Պոլսոյ մէջ հիմնուած դպրոց:

Լեւոն Էֆթեանը, ծակերուն մէջ թաքնուած՝ կը սպասէինք պատերազմի վախճանին: Մէկ բան միայն կ'ապահովէր մեզ: Վարժարանը աստրիական պաշտպանութիւնը կը վայելէր, եւ թուրքերը չէին ուզեր անոնց թշնամութիւնը հրաւիրել՝ իրենց դաշնակից երկրի մը հողամասը խուզարկութեան ենթարկելով: Այս կերպով, մենք մեր կեանքը փրկած եղանք: Սակայն, կար *Ղուղիկօ*ի հաւաքածոն, որ մեզի մղձաւանջ դարձած էր, եթէ այս կամ այն կերպով թուրքերու ականջին հասնէր գոյութիւնը հակաթուրք պարունակութեամբ լի այդ հաւաքածոյին, հակառակ ամէն բանի, թուրքերը միջոցը կրնային գտնել մեր հաշիւը մաքրելու: Բաստրմաճեաններուն օրինակը մէջտեղն էր:

Յետ երկար վարանումներու, վերջ ի վերջոյ առինք որոշումը: Փճացնել զայն: Որքան որ հարազատ մը սեփական ձեռքերով սպաննելու համազօր ոճիր մը ըլլար զանոնք այրելը, բայց Եղեռնի այդ օրերուն հարազատ մը կորսնցնելը ամէնօրեայ սովորական երեւոյթ մը եղած էր: Այրեցինք, եւ ինչպէս ուրիշ հարազատներու կորուստը, այս մէկն ալ պատմութեան անցաւ: Չեմ գիտեր, թէ «մեկենաս»ին մօտ գտնուած օրինակը ինչ ճակատագիր ունեցաւ, բայց կրնամ երեւակայել, թէ ան ալ կորսուած զացած է (կնքահայրս այս ընթացքին Կովկաս վերադարձած էր):

Գիտեմ սակայն, թէ միայն մէկ օրինակ կը գտնուի *Ղուղիկօ*էն, Վիեննայի Մխիթարեաններու Վանքին մէջ: Ինչպէս իր գլուխը փրկած էր այդ թիր: «Պատիժ»ի մը գինն էր ան: Օր մը, դասամիջոցին, ուսուցիչէն գաղտնի՝ ընդօրինակելու վրայ էի *Ղուղիկօ*ի զոյգ օրինակները, երբ օրուան հսկիչը՝ տնօրէն Հ. Վարդան Մելիքսէթեան, աղուէսի մը խորամանկութեամբ եւ արագաշարժութեամբ կռնակէս յափշտակեց պատրաստ օրինակը, եւ իբրեւ պատիժ՝ չվերադարձուց զայն, հակառակ բոլոր

խնդրանքներու: Ու այսօր, անիկա ապահով եւ ամէն վտանգէ զերծ՝ կը հանգչի ամենէն ապահով տեղը: Պատիժ մը, որ իսկական բարիք մը եղած էր, հայութեան աննման գանձ մը, մէկ հատիկը ամբողջ աշխարհի մէջ: Եղեռնէն փրկուած նմոյշ մը:

Ինչպէ՛ս կ'անցընէինք մեր ժամանակը մօտ 3-4 տարի փակուած վարժարանի չորս պատերուն մէջ: Բարերախտաբար մեր տրամադրութեան տակ ունէինք ընդարձակ պարտէզ մը, ուր կրնայինք ազատօրէն զբօսնել, մարզանքներ ընել, նաեւ պատերազմի աւարտէն ետք, մեր «անկախ Հայաստանին» մէջ հիւսել «երազներ», որոնք պիտի իրագործուէին ինչպէս հարիւրաւոր խոստումներով ողողած էին մեզի՝ մեր աննման, ազատատենչ, մեծագոր ու քաղաքակիրթ դաշնակիցները: Հոն պիտի զբաղէինք երիտասարդներով եւ Եւրոպայի մէջ գոյութիւն առած երիտասարդ «անկախ պետութիւններ»ու նմանները ստեղծելով: Ապա, պիտի հրատարակէինք երիտասարդական օրկան մը՝ «Հայ Պատանի» անունով, որ պիտի ընդգրկէր գիտական, մարզական, մշակութային նիւթեր, հետետողութեամբ ֆրանսական «*Քի, Փուրքուս, Բուման*»⁵ սքանչելի օրկանին:

Տարիներու տքնաջան աշխատանքով հրատարակած էինք մեր ծրագրած թերթին մէկ օրինակը, որ կը մնայ մեր մօտ: Երիտասարդ բանասէր-գրագէտ Տիգրան Գէորգեան, որ առիթը ունեցաւ տեսնելու այդ օրինակը, *Արեւ* թերթին մէջ երկարօրէն գրած է այդ թերթին մասին:

Մեզի տրուած ասպնջականութեան ու ապահովութեան դիմաց ապերախտ չգտնուեցանք: Ուսուցիչներու

⁵ *Qui-pourquoi-comment? Encyclopédie de la Jeunesse* - «Ո՛վ - ինչո՞ւ - ինչպէ՛ս» Երիտասարդութեան Համայնագիտարան, ֆրանսատառ յայտնի պարբերաթերթ, հրատարակուիլ սկսած է 1914-ին, Librairie Larousse Parisի կողմէ:

մեկնումով գոյացած բացը գոցեցինք, ամէն մէկս ստանձնելով դասաւանդութիւններու մէկ մասը՝ թուաբանութիւն, աշխարհագրութիւն, գեղագրութիւն, գծագրութիւն, ինչպէս նաեւ գերմաներէն, թրքերէն, ֆրանսերէն լեզուները, ապա նաեւ հսկողութիւն, ելն.: Մեզի տրուած սնունդին հետ բաղդատուած՝ լա փոխադարձութիւն էր: «Պոպոթա» ըսուած հացը, որ պատրաստուած էր եգիպտացորենի ալիւրով, խառնուած միասին աղացուած կոճղով: Մնացեալները՝ նոյն ոգիով պատրաստուած սնունդ էին: Մեղադրելի չէին վարդապետները: Ամէն ոք կ'ուտէր ինչ որ կը գտնէր, բայց երբեք ուզածը:

Այս կամ այն կերպ, վերջապէս բարի օր մը վերջ գտաւ պատերազմը: Եկած էր մեր հիւսած երազներուն իրականացումով զբաղելու այնքան անհամբերօրէն սպասուած ժամը:

Բոլոր հայերը մէկիկ-մէկիկ դուրս կ'ելլէին գաղտնի թաքստոցներէն, 4-5 տարի հոն պահուրտած մ'նալէ ետք: Այս մարդիկը կը կազմէին «Թաւան թապուր»ը⁶...: Բոլորը արցունքոտ աչքերով կ'ողջագուրուէին: Մենք, «մեր դաշնակիցներու» կողքին յաղթական, իսկ արիւնարբու գազանը ջախջախուած էր:

Բայց, ինչպէս մեր «բարեկամները» վարժեցուցած էին մեզի պատմութեան ընթացքին, կը զգայինք թէ մեր ակնկալածները յօդս կը ցնդէին եւ անոնք անգամ մը եւս պիտի դաւաճանէին մեզի: Արդարեւ, անգլիացի զօրավար Հարրինկթըն, Մուտրոս Կոզիի⁷ մէջ կը ստորագրէր զինադադարը եւ թուրքերուն պարտադրուած պայման-

⁶ Զինուորական ծառայութենէ փախած:

⁷ Մուտրոս - Յունաստանի Լեմնոս կղզիի վրայ նաւահանգիստ, ուր կնքուած է նոյնանուն զինադադարը 30 Հոկտեմբեր 1918-ին, Համաձայնական Պետութիւններու եւ Օսմ. Կայսրութեան միջեւ:

ները: Ոչ մէկ ակնարկութիւն Եղեռնի, հատուցումի մասին: Ոչ մէկ յիշատակութիւն «Հայ» անունին, եւ անոր արդար դատին մասին...:

«Յաղթական»ները առաջին իսկ վայրկեանին իրենց մէջքը կը կքէին ջախջախուած թշնամիին առջեւ, անոր բարեկամութիւնը շահելու մտքով, 4-5 տարի ետք, Լոզանի մէջ, հլու հնազանդ ստրուկները դառնալով անոր: Եթէ Տոսթոյեւսքի գրած է *Ոճիր Եւ Պատիժ*⁸, ապա Լոզանի մէջ յաղթական մեծ դաշնակիցները փոխեցին ընդունուած օրէնքը եւ հռչակեցին «Ոճիր եւ ... վարձատրութիւն»: Արիւնարբուի գեղեցիկ աչքերուն համար ոտնակոխ ընելով փոքրիկ դաշնակիցը եւ իր բոլոր իրաւունքները, մոռացութեան տալով իրենց տուած բազմառատ խոստումները:

Մուտրոսի յուսախաբութիւնը կերպով մը փարատեցաւ, երբ 3-4 տարի ետք, Սեւրի Դաշնագիրը պաշտօնապէս նուիրագործեց Հայկական Պետութեան մը կազմութիւնը: Կասկածի որեւէ հետք չմնաց, մանաւանդ, երբ Ամերիկայի նախագահ Ուուտրօ Ուիլսընի⁹ վստահուեցաւ անոր վերջնական սահմանները գծելու պաշտօնը: Կրնային մեզ խաբել, բայց Ուիլսընի մը: Ո՛վ պիտի համարձակէր խաբել: Մեր մեծ «դաւաճան» դաշնակիցները ատոր ալ ճարը գտան, եւ տարի մը ետք, 1923-ին՝ Լոզանի մէջ առօք փառօք թաղեցին մեր մեռելածին հայրենիքը: Ինչո՞ւ զարմանալ: Առաջին անգամը չէր, ոչ ալ վերջինը, որ մեր «պաշտպանները» անյագօրէն ծծելէ ետք մեր արիւնը եւ

⁸ *Ոճիր Եւ Պատիժ* - Ֆիոտոր Տոսթոյեւսկիի դասական վէպը, որ առաջին անգամ հրատարակուած է ռուսական պարբերականի մէջ 1866-ին:

⁹ Ուուտրօ Ուիլսըն (1856-1924) - Ամերիկայի Միացեալ Նահանգներու 28-րդ նախագահ (1913-1921): Ազգերու Լիկայի կողմէ նշանակուած գերագոյն իրաւարար, 22 Նոյեմբեր 1920-ին արձակեց իր վճիռը Միացեալ Հայաստանի սահմաններուն մասին, ըստ Սեւրի դաշնագրին:

իրենց ակնկալած շահը ձեռք բերելէ ետք, մեր ոսկորները նետած էին արիւնտուշտ գազանին երախը: Ահա թէ ինչո՞ւ անիկա իր փրկութիւնը փնտռեց այլուր: Եւ գտաւ ալ: 29 Նոյեմբերը փրկեց մեզ ոչ թէ թշնամիներէն, այլ՝ մեր... բարեկամներու ձեռքէն: Յուսախաբ եղած հայութիւնը ապաստան գտաւ հոն, ուր կրցաւ: Ինծի բաժին ինկաւ Եգիպտոսը:

Զարմանալին այս չէր, այլ այն որ կային դեռ հայեր, մասնաւորապէս «քաղաքագէտ»ներ, որոնց դաս չէր եղած այսքան շնականութիւն: Անոնք տակաւին կէս դար ետք իսկ, չեն դադրիր դաւադիրներուն կապելու իրենց յոյսը, եւ հալած իդի պէս կը կլլեն անոնց բարձրադաղակ սուտերը, կեղծիքները, կը հանդուրժեն «ազատութեան, ազատասիրութեան ու արդարութեան» սկզբունքներուն լլկումը: Մարդիկ, որոնք ոչ միայն Հայ Ազգը կ'անգիտանան, այլ՝ անոր անունն իսկ: Անոր իրաւունքները մոռացութեան տալու քաղաքականութեան կը հետեւին: «Քոնսփիրասիոն տի սիլանս»¹⁰, ինչպէս կոչած էր իր ատենին Կամալ Ապտէլ Նասէր¹¹ Եգիպտոսի իրաւունքներուն մասին խօսելով: Մեր պարագային՝ թուրքերուն հաճելի ըլլալու, իսկ իրենց պարագային՝ իսրայէլցիներուն:

Բնութիւնը իր կարգին ունի իր անյեղլի օրէնքները, որքան ալ որ անբարոյականացած ըլլայ աշխարհը: Յաւիտենապէս չէինք կրնար մնալ դպրոցին մէջ: Ելանք անկէ դուրս: Ես մտայ անգլիական բանակին մէջ, իբրեւ ռուսերէնի, թրքերէնի եւ անգլերէնի թարգման՝ անգլիացիներուն կողմէ թուրքերու ձեռքէն ազատուած ռուս զերիներուն համար: Զիս ղրկեցին Տարտանէլի Նեղուցը

¹⁰ «Քոնսփիրասիոն տի սիլանս» (conspiration du silence)՝ դաւադիր լռութիւն:

¹¹ Կամալ Ապտէլ Նասէր (1918-1970) - Եգիպտոսի երկրորդ նախագահ 1956-էն մինչեւ իր մահը՝ 1970:

գտնուող Նակարա ասանը, ուր մեկուսացուած վրանակայան մը հաստատուած էր անոնց համար: Այնուհետեւ փոխադրուեցայ Իզմիր, երբ ռուսերը իրենց հայրենիքը դրկուեցան:

Հոս մնացի մէկ քանի ամիս, ուր ինձմէ գատ երեք հայ թարգմաններ եւս կային, որոնք սակայն, հրացան կրելու արտօնութիւնը չունէին: Այդ օրերուն Քեմալական Շարժումը բաւական լայն ծաւալ ստացած էր: Անոնք մինչեւ իսկ Իզմիրի վրայ յարձակումներ սկսան գործել: Թարգմաններէն մին զոհ գնաց անգլիացիներու կողմէ դրկուած արշաւանքի մը ընթացքին: Երբեմն փոքրիկ անհանգստութիւններէ կը գանգատինք: Ինծի համար նախախնամական բարիք մը եղաւ ան: Ես էի, որ նշանակուած էի ընկերանալու արշաւախումբին: Բայց, իմ տեղս՝ ընկերս դրկուեցաւ...:

Մէկ երկու յատկանշական դէպքեր պատահեցան նաեւ ինծի: Երբ Ատաբազարի¹² ճամբան բացուեցաւ, անգլիացի տասնապետի մը ընկերացայ, որ պաշտօնով Ատաբազարի կառավարիչին մօտ կը դրկուէր:

Երեք ժամ ետք, Իզմիր պիտի վերադառնայինք: Տասնապետին առաքելութիւնը հազիւ կէս ժամ տեւեց: Մեր առջեւ ունէինք տակաւին երկուքուկէս ժամ: Խորհեցանք շրջան մը ընել քաղաքին մէջ: Առաջին առթիւ, գտանք հայոց վարժարանը, եկեղեցիին կից: Լքուած եւ թափուր: Արդէն ուրիշ ինչ վիճակ կարելի էր երեւակայել անոնց մասին, այդ օրերուն: Փոքր ճաշէ մը ետք, երբ հազիւ քառորդ ժամ ունէինք, ամայի փողոցի մը մէջ հանդիպեցանք թուրք իշապանի մը: Տասնապետը, աչքաբաց եւ խորամանկ մէկը, խիստ կերպով մօտեցաւ անոր ու իբրեւ գող ամբաստանելով զայն... գրաւեց էջը,

¹² Ատաբազար - քաղաք՝ ներկայ Թուրքիոյ հիւսիսարեւմտեան մասին մէջ:

հակառակ մարդուն բողոքներուն: Բռնած իշուն սանձէն՝ մօտ 100-150 մէթր քաշքշեցինք զայն: Բայց ինչ ընել եւ ո՞ր տանիլ չորքոտանին: Ատոր ալ ճարը գտաւ: Քաշուած թաղ մը հանդիպեցանք ուրիշ գիւղացիի մը: Առանց այլեւայլի մօտեցաւ անոր եւ ըսաւ.

-Սքանչելի այս էշը ծախու է,- ըսել տուաւ ինծի,- աժան է, օգտուէ՛ առիթէն: Գիւղացին, լաւ մը քննելէ ետք, համաձայնեցաւ 40 թրքական ոսկիի գնել զայն: Ընկալագիր մը պահանջեց: Առանց տատամսելու թողթի մը վրայ բաներ մը մրոտեց, եւ քանի մը գիծ քաշեց իբրեւ ստորագրութիւն:

Իշաբեռէն հազիւ օձիքնիս ազատած՝ քայլերնիս ուղղեցինք կայարան: Հազիւ տասը վայրկեան ունէինք: Բայց յանկարծ կանգ առինք: Հրապարակին վրայ կոնի, պոռչտուք, ծեծկոտուք եւ ահագին իրարանցում կը տիրէր, իշու մը սեփականութեան շուրջ: Մին կը պոռար եւ կ'երդնուր, թէ էշը իրենն էր, իսկ միւսը՝ օդին մէջ թուղթ մը օրօրելով կը պնդէր, թէ իր օրինաւոր սեփականութիւնն էր: Ժամանակ չունէինք անելի երկար սպասելու, շոգեկառքի մեկնումին հինգ վայրկեան մնացած էր, վագելով հասանք կայարան: Թէ ինչպէ՛ս վերջացաւ իշակոխը՝ Աստուած միայն գիտէ: Բայց հոն, ուր թուրք կայ՝ արհիւն թափած պէտք է ըլլայ:

Հակառակ այս փաստին, ցաւ կը զգայի, ակամայ այսպիսի դէպքի մը անուղղակիօրէն մասնակցած ըլլալուս համար: Հոս է հայուն եւ թուրքին տարբերութիւնը:

Երկրորդ դէպքը: Զինադադարէն ետք, Իզմիրի նախկին առաջնորդ Ստեփանոս Արք. Յովակիմեան, վերագրուած էր իր աթոռը: Բացառիկ տիպար մը, իսկապէս: Հակառակ գիտական իր համեստ պաշարին, դիւանագէտի անուրանալի բնագոյով օժտուած էր: Երբ իր հօտը կ'օժտէր որեւէ բարիքով, չէր մոռնար նոյնը ընել նաեւ տեղացի թուրքերուն: Այդպէս բազմաթիւ վարժարաններ կանգնած

էր անոնց համար: Նոյնքան սիրուած ու յարգուած էր թուրքերէն, որքան՝ հայերէն: Տարագրութեան ժամանակ, երբ իր հօտը դէպի մահ կ'նուղարկուէր, թուրք կառավարութիւնը մասնաւոր շնորհ մը ըրած ըլլալ կը կարծէր, խնայելով իրեն այդ տեղահանութիւնը: Բացարձակապէս կը մերժէ. «Ուր իմ հօտս, հոն նաեւ իր հովիւր», - կը պնդէ, եւ գլուխը անցնելով իր ժողովուրդին, կը բռնէ աքսորի ճամբան: Բայց կը բաշխուի իրեն իր կեանքը, եւ ողջ առողջ կը վերադառնայ Իզմիր: Լսելով, որ հայ թարգման մը կը գտնուի անգլիական բանակին մէջ, հրաւեր կը դրկէ ինծի՝ այցի երթալու իրեն: Արդարեւ, ամէն մէկ հայու կենսագրութիւնը, պաշտօնը առանձին մեծածաւալ հատորի մը մէջ կ'արձանագրէր ամենայն մանրամասնութեամբ: Կը կարծեմ թէ, եթէ չէ փճացած այդ հատորը, ապա անիկա Իզմիրի եւ շրջակայքի պատմութեան թանկագին վաւերաթուղթ մը կը կազմէ:

Իր գրասենեակը ամենահամեստ կերպով կահաւորուած էր: Սեղան չկար, հիւրերուն համար կային մէկ երկու յարդէ աթոռներ: Ինք ծալապատիկ նստած էր գետինը փռուած կապերտներուն վրայ, որոնց վրայ քանի մը բարձ դրուած էր: Այդ վիճակին մէջ է որ կ'առնէր իր նօթագրութիւնները: Մէկ քանի խօսքերէ ետք՝ անցաւ կենսագրութեանս: Հօր ու մօր անուն, ծննդեան վայր ու թուական, յարանուանութիւն եւլն.: Երբ լսեց կաթոլիկ ըլլալու մասին, յանկարծ կանգ առաւ... չէր սպասեր:

- Ճիշդ է, մէկ քանի կաթոլիկներ անցած են այս քաղաքէն, - ըսաւ եւ ամենայն համբերութեամբ սկսաւ թղթատել իր հսկայ հատորին էջերը՝ գտնելու անոնց անունը, եկած թուականը եւ այլ մանրամասնութիւններ:

Իմ մասին գրեց.

«Ալեքսան Յակոբի Սարուխանեան, ծնեալ ի Կովկաս, յամի Տեառն 1898 Հոկտեմբեր ամսոյն՝ յԱրտանուշ, ի Պաթում նահանգի (Կովկաս), ժամանեալ յԻզմիր յամին

1921, որպէս թարգման բանակի անգլիական ... եւ այլն»:

Թարգմանութենէ քաշուելով՝ վերադարձայ Պոլիս: Հոս, քիչ ատեն վերջ գործ մը գտայ անգլիական վաճառականական մեծ հաստատութեան մը մէջ՝ «Պէլքըր», ուր անմիջապէս եւ ամսէ-ամիս յառաջ-դիմութիւններ ունեցայ, քսան տարուան պաշտօնեաներուն նախանձը գրգռելու աստիճան: Բայց ինչպէս ըսած եմ, նկարագրիս գլխաւոր գիծը միշտ անկախ ըլլալ եւ ժամերու կաշկանդումներէ զերծ մնալը եղած է: Քանի մը ամիս ետք քաշուեցայ գործէս՝ «անկախ գործի» լծուելու նպատակով: Սակայն, ինչպէս: Գէթ նախապէս պատրաստած ըլլայի ծրագիրս:

Ամիսներ անգործ պտըտելէ ետք յիշեցի, թէ պատանեկութեանս երգիծանկարներ կը գծէի: Ինչպէս կ'ըլլար, եթէ այդ ճիւղին նուիրուէի: Ու պատրաստեցի քանի մը երգիծանկար՝ զանոնք Պոլսոյ գլխաւոր երգիծաթերթ *Կաւոօշին* տալու մտադրութեամբ: Բայց որոշումը առնելուն եւ զայն գործադրելուն միջեւ շատ մեծ տարածութիւն կայ: Ի գին ոչ մէկ բանի, քաջութիւնը պիտի ունենայի անձամբ ներկայանալու Երուանդ Թօլայեանին, մականունանեալն *Կաւոօշ*, գործս ներկայացնելու իրեն: Դողդոջ քայլերով մտայ թերթին անշուք խմբագրատան մուտքէն, ուր նամակատուփ մը կար: Պատկերները նետեցի տուփին ճեղքէն ներս եւ մէկը զիս չտեսած փախուստ տուի հոնկէ:

Սրտատրոփ կը սպասէի արդիւնքին: Պիտի պատուէր եւ զամբիւ՞ղը նետէր, թէ... հրատարակէր: Որքան մեծ եղաւ ուրախութիւնս, երբ նկարս թերթին առաջին էջին վերելը մեծագիր հրատարակուած տեսայ: Սակայն, այսքանը չբաւեց ինծի վստահութիւն ներշնչելու անձիս մասին: Այս անգամ, մէկ քանի նկար պատրաստելով՝ ճիշդ նոյն կերպով նետեցի տուփը: Եւ սպասեցի, սակայն, աւելի հաւատքով, արդիւնքին: Ոչ միայն դրկած 4-5

պատկերներն տպուած գտայ, այլ 10-15 տողնոց գրութիւն մը իմ մասին՝ «Նոր Երգիծանկարիչի մը Յայտնութիւնը» վերնագրով, քաջալերական ու գնահատական տողերով: Այլեւս կարելի չէր կասկածիլ: Ճակատաբաց ներկայացայ *Կաւոջին* եւ երբ ինքնութիւնս լսեց, անմիջապէս փաթթուեցաւ ինծի, ճակատէս համբուրեց:

- Այդ դո՛ն ես Սարուխանը, -հարցուց: -Ապրի՛ս, շատ լաւ ես դրկածներդ, շարունակէ՛, քեզի նման մէկու մը պէտք ունիմ, -ըսաւ եւ ափիս մէջ կէս ոսկինոց մը դրաւ: Մեծ բան մը չէր: Անոր արժէքը ատելի խորհրդանշական էր: Նոր ասպարէզիս մէջ առաջին դրամական վարձատրութիւնս:

- Քիչ բան է տուածս, սակայն, ամէն պատկեր բերելուդ բան մը կու տամ քեզի: Բայց այլեւս նամակատուփին մէջ մի՛ նետեր գծածներդ: Շիտակ վեր ել եւ իմ մասիս հարցուր, -ատելցուց:

Քաջալերական այս նախաքայլէն ետք սկսայ անխտիր շրջիլ բոլոր խմբագրատուները՝ *Ճակատամարտ*¹³, *Ժողովուրդի Չայն*¹⁴, *Վերջին Լուր*¹⁵, Ֆրանսերէն *Լը Րէվէյ* թերթը, որուն տէրն ու տնօրէնը Տիգրան Զաւէն¹⁶ անունով հայ մըն էր: Բոլորն ալ ոչ միայն սիրով տեղ կու տային գծագրութիւններուս, այլեւս կ'ընէին համեստ վճարումներ, որոնք քով քովի գալով՝ ամսագլխուն կոկիկ գումար մը կը

¹³ Ճակատամարտ - ՀՅԴ Օրաթերթ, քաղաքական, գրական, ազգային օրկան: Հրատարակուած է Կ. Պոլիս 1918-1924:

¹⁴ Ժողովուրդի Չայն - օրաթերթ, հրատարակուած է առաջին աշխարհամարտի ւարտին Պոլիս փութացած Վահան Թէքէեանի կողմէ :

¹⁵ *Վերջին Լուր* - երեկոյեան օրաթերթ, հրատարակուած է Պոլիս՝ 1914-1930:

¹⁶ Տիգրան Զաւէն (Չուքասզեան) (1874-1938) - արաբերէն լեզուով գրող, հրապարակախօս, հրատարակիչ, ազգային-քաղաքական գործիչ, թրքական լուծին դէմ արաբական ազատագրական շարժման մասնակից:

կազմէին:

Այլեւս ճամբաս բացուած էր: Երգիծանկարիչ պիտի ըլլայի՝ ինչ որ ըլլար: Ազատ գործ. կ'աշխատիս՝ երբ եւ ուր որ ուզես, առանց մէկու մը հաշի տալ ստիպուած ըլլալու: Ընդարձակելով գործունէութեանս սահմանները, ելայ երկրի սահմաններէն դուրս, մինչեւ Ամերիկա, Պոսթընի *Հայրենիքը*, որուն քանի մը հատ միջազգային, սակայն հայութեան հետ կապուած նիւթեր շօշափող նկարներ դրկեցի¹⁷: Հոսկէ եւս՝ քաջալերական նամակ: Երեք տոլար պիտի վճարէին հատին եւ կը խնդրէին կանոնաւոր աշխատակցութիւնս: Ինչ լաւ հեռապատկեր, վերջապէս:

Վերջապէս, այո... եթէ չծագէր Քեմալական Շարժումը:

Սերի Դաշնագիրը պատառ պատառ:

Ամէն նախաձեռնութիւն կանգ առաւ:

Իզմիրի աղէտ:

Դարձեալ կրակ, դարձեալ կոտորած, դարձեալ փախուստ...:

Երեւի Թուրքիոյ մէջ հայուն տեւական ճակատագիրը այս պիտի ըլլայ մշտապէս: Այլեւս անտանելի էր մթնոլորտը:

Ամէն ոք կը մտածէր երկրէն հեռանալու մասին:

Այդ օրերուն Պոլիս կը գտնուէր մօրեղբայրս, Անտոն Ռեստակեան: Վաճառական ծնած, վաճառականութիւն ընող եւ վաճառականի խելք ունեցող մէկը:

- Ո՞ր այդպէս, առանց դրամի, առանց ծրագրի, -ըսաւ:

- Ինչո՞ւ առանց ծրագրի: Երգիծանկարչութիւն պիտի ընեմ գացած տեղս:

Վաճառականը մինչեւ ականջներուն ծայրերը կարմրեցաւ:

¹⁷ Հայրենիք - հայ մամուլի նահապետն է. 1 Մայիս 1899-էն մինչեւ 1913 լոյս տեսած է որպէս շաբաթաթերթ, ապա՝ երկօրեայ, իսկ 4 Դեկտեմբեր 1915-էն՝ օրաթերթ, 1991-էն՝ շաբաթաթերթ:

- Խենթ ես, ինչ ես, -գոռաց: -Անօթի՛ մեռնիլ կ'ուզես: Լեզուներ գիտես, վաճառականական գիտելիքներու տիրացած ես դպրոցի մէջ: Դրամատուն մը մտիր, վաճառատուն մը մտիր, մարդու պէս գործի մը լծուէ... այդ տղայական գաղափարները մտքէդ հանէ, քեզ տեսնեմ...:

- Ինչո՞ւ տղայական, -ըսի:- Հաստատուելիք երկիրս չեմ գիտեր: Սակայն, Չինաստան ալ երթամ՝ պատկերով կրնամ խօսիլ բոլորին հետ, առանց լեզուն գիտնալու, -ըսի հանդարտօրէն:

Կ'ապշէր կը մնար պաղարիւնութեանս վրայ:

Թեւերը օդը բարձրացուցած՝ կարծես Աստուծոյ օրհնութիւնը հայցելով ինծի համար, անխօս հեռացաւ: Ոչ իսկ մտքէն անցուց, քանի մը ոսկիով օգնութեան հասնելու «անառակ որդի»ին:

Եղբայրս՝ Լեւոնը եւ ես միասին, 11 անգլիական ոսկի ունէիք գրպաննիս: Ամենայն պաղարիւնութեամբ - եւ չես գիտեր ինչու - ապագային մասին առանց մտահոգութեան՝ ճամբայ ելանք դէպի Վիեննա՝ Պուլկարիոյ ճամբով, հոնկէ երթալու համար Պրիւքսէլ, ուր Սովետական Ռուսաստանէն եկած-հաստատուած էր հօրեղբայրս՝ Առաքել Սարուխան, Մանթաշէֆ Տան ընդհանուր տնօրէն: Երբ հոն հասնէիք, ամէն ինչ կը պարզուէր:

Պոլսէն հեռանալէս առաջ՝ նամակ մը գրած էի *Հայրենիք*ին, պարզելով կացութիւնը եւ խնդրելով, ինչ որ առնելիք ունէի՝ դրկել Վիեննա, Միսիթարեան Վանքը: Ուր որ երթայի՝ կրնայի միշտ հաղորդակցիլ վանքին հետ եւ ստանալ գումարս: Հազիւ Վիեննա հասած, երբ վանք այցելեցիք, մեզի յանձնեցին Ամերիկայէն եկած ապահովագրեալ նամակ մը՝ իմ անունիս:

Բացի եւ մէջէն ելաւ 50 տոլարնոց չէք մը: Կրնաք երեւակայել ուրախութիւննիս: Փրկուած էիք: Հիմա ըսողներ գտնուին թերեւս, թէ ես ալ ... տոլար առած եմ...:

Յիսուն տոլարնոց չէքը, եթէ գիտնաք, թէ ինչ հրաշքի

դեր կատարեց ճակատագրիս վրայ...:

Շաբաթի մը չափ Վիեննա մնալէ ետք, ուղղուեցանք Պրիսպէլ՝ հօրեղբօրս մօտ, որ այն ատեն քարիւղի ուրիշ ընկերութեան մը մօտ՝ Լիանոզով կ'աշխատէր: Չեմ գիտեր, ոչ ալ հարցուցի ինչ հանգամանքով կ'աշխատէր, բայց որոշ կերպով կ'երեւար, թէ բաւական լաւ դիրքի վրայ էր: Հետաքրքրուեցաւ մեզմով: Ինչ կ'ընէինք, ինչ ընելու մտադիր էինք: Հաստատ ոչինչ գիտէինք: Ցոյց տուի 50 տոլարանոց չէքը:

- Այս դրամը երգիծանկարներուդ փոխարէն ստացար, -հարցուց:

- Այո, պատասխանեցի:- Անկէ առաջ Պոլիս ալ դրամ շահած եմ:

Գոհ երեւոյթ մը ստացաւ դէմքը: Մտքին մէջ շինած էր ծրագիրը:

- Լաւ, -ըսաւ,- թէպէտ նախկին վիճակս չունիմ, բայց պատրաստ եմ համեստ ապրուստ մը ապահովելու քեզի: Գնա՛ Վիեննա եւ կատարելագործէ՛ արուեստդ:

Չուզած բանս... Անմիջապէս հաւանութիւնս տուի եւ մէկ երկու օրէն, 1922-ի Դեկտեմբերի վերջերը ճամբայ ելայ եւ հասայ Վիեննա: Արձանագրուեցայ Կրաֆիք Արուեստներու Ինսթիթուտը: Ակադեմիա չէր, այլ պարզապէս լիթօ-կրաֆ-ի, ֆոթօկրաֆ-ի, փորագրութեան ու տպագրական արուեստներու ուսուցման գործնական վարժարան մը: Այդ միջոցին Վիեննա կը գտնուէին բաւական թիւով հայ ուսանողներ, ի միջի այլոց՝ նկարիչներ Օննիկ Աւետիսեան¹⁸, Աշոտ Զօրեան¹⁹, արձանագործ Արա

¹⁸ Օննիկ Աւետիսեան (20 Նոյեմբեր 1898, Պուրսա - 23 Նոյեմբեր 1974, Գահիրէ), սփիւռքահայ նկարիչ, քանդակագործ, հայկական տպագրական տառատեսակներ ձեւաորոշ:

¹⁹ Աշոտ Զօրեան (1905, Կիրասոն-1970, Գահիրէ) - գեղանկարիչ:

Սարգսեան²⁰, ջութակահար Օննիկ Սիրմելեան²¹, բանասիրական ուսմանց հետետող Արամ Երեմեան²², որոնք յետագային պատուաւոր դիրքեր գրաւեցին՝ իւրաքանչիւրը իր ճիւղին մէջ, Սփիւռքի թէ Հայաստանի մէջ:

Ասկէ գատ, Աւետիսեանի հետ միասին, գծագրութեան ազատ դասընթացքներու կը հետեւէինք: Չափազանց համեստ էին մեր ապրելու պայմանները: Ստացած գումարիս մէկ երրորդը կու տայի սենեակիս իբրեւ ամսավճար՝ մօտ 300,000 աստրիական քուրոն, որ կ'արժէր մօտաւորապէս երեք անգլիական սթերլին: Սենեակկիցս էր Պոլսոյ Մխիթարեան Վարժարանի աշակերտներէն Արամ Տէրունեան, որ նոյն քաղաքին ծանօթ վաճառականներէն Աբրահամ Պոյաճեանի մօտ կ'աշխատէր, ու յետագային իր կարգին սեփական գորգի վաճառատուն մը ունեցաւ:

Մեր ինսթիթուտը ունէր արուեստի վերաբերեալ գիրքերու ու թերթերու մասնագիտական ընթերցարան-գրադարան մը, ուր յաճախ Աւետիսեանի հետ կ'ելլէինք զանոնք թղթատելու: Սովորութիւն էր անունը արձանագրել ամէն այցելութեան: Անգամ մը, երբ կը պատրաստուէինք ստորագրելու, աչքերնուս զարկաւ Ապտէլքատէր ԷլՇեննատի-ի անունը:

- Երեւի թուրքեր ալ կան հոս, -ըսինք:

Այն ատենները, մեզի համար թուրքերէն գատ ուրիշ ոչ

²⁰ Արա Սարգսեան (1902, Պոլիս-1969, Երեւան) - քանդակագործ, Երեւանի Նկարիչների Միութեան հիմնադիր (1932) եւ առաջին նախագահ:

²¹ Օննիկ Սիրմելեան (1904, Տրապիզոն) - հեղինակ՝ *Կեանքիս Գուպարը Ջութակիս Հետ* ինքնակենսագրական հատորին (Պէլլրութ, 1988):

²² Արամ Գարեգին Երեմեան (1898, Մարզուան - 1972, Իրան) - Գրող, գրականագէտ, արուեստաբան:

որ այդպիսի անուն կրնար կրել: Սակայն, յայտնուեցաւ, որ եգիպտացի մըն էր:

Թխադէմ իր դէմքը կը մատնէր զինք: Մասնաւորապէս չհետաքրքրուեցանք իրմով: Պէտք ալ չունէինք:

Բացառիկ առիթ մը, սակայն, պիտի կապէր զիս անոր հետ: Արդարեւ, շատ չանցած յայտարարուեցաւ որ Եգիպտոս երթալու տրամադիր երգիծանկարիչ մը կը փնտռուի: Այդ միջոցին, վարժարանին մէջ միակն էի, որ ճանչցուած էի այդ հանգամանքով: Արդարեւ, դասամիջոցներուն գրեթէ բոլոր ուսանողներուն եւ փրոֆէսորներուն երգիծանկարները գծելու սովորութիւնը ունէի: Ինծի առաջարկուեցաւ պաշտօնը: Ամսական 15 եգիպտական ոսկի, որ այն օրերուն շատ լաւ թոշակ մըն էր, մանաւանդ որ բնակարանը եւ սնունդն ալ Ապտէլքատէրին վրայ էին: Պէտք է ըսեմ, թէ շատ չխանդավառուեցայ: Արեւելքէն գալէս եւ Վիեննայի պէս քաղաք մը ապրելէս ետք՝ վերստին Արեւելք վերադառնալու գաղափարը երբեք չժպտեցաւ ինծի: Սակայն, տրուած պայմանները եւ իմ ապրած պայմաններս իրարու բաղդատելէ ետք՝ հաւանութիւնս տուի եւ 27-31 Յուլիս 1924-ին, իտալական «Հելուան» շոգենաւով Թրիէսթէ-էն մեկնեցայ Եգիպտոս, Աղեքսանդրիա:

Եգիպտոս հասնիլս յուսահատական եղաւ: Ոչ ոք եկած էր զիս ընդունելու, եւ ես երկրին ու լեզուին անծանօթ՝ ողբերգական պահեր ապրեցայ մէկ քանի օր, մինչեւ որ ինքզինքս գտայ: Ապտէլքատէր Վիեննայի մարդը չէր բնաւ: Եգիպտոսի մէջ բոլորովին տարբեր ու խորհրդաւոր մէկը դուրս եկաւ: Գահիրէ հաստատուեցանք, ուր մէկ երկու թիւ թերթ հանելէ ետք, օր մըն ալ անձայն, անշշուկ անհետացաւ:

Գալուստեան Վարժարանի մէջ գծագրութեան դասեր ստանձնեցի եւ 1925-էն սկսեալ՝ հրատարակել սկսայ հայերէն լեզուով, բազմագոյն վիմատիպ պատկերներով

հայերէն շաբաթաթերթ մը՝ *Հայկական Մինեան*, որուն վերջին 12 թիւերը՝ Երուանդ Օտեանի հետ: *Հայկական Մինեան* դադրած էր 1926-ի Ապրիլին: Գալուստեանէն ալ կերպով մը ոտքս սահեցուցած էին, մանրամասնութիւնները ուրիշ տեղ գրած եմ արդէն²³: Նեղ կացութեան մատնուեցայ: Կարելի էր այստեղ շարունակել: Ո՞ր պիտի երթար ծայրը: Վճռակամութիւնը, զոր մինչեւ վերջ ունեցած էի արուեստիս մասին, սկսաւ պահ մը տկարանալ: Արդեօք իրաւունք ունէր մօրեղբայրս: Նախընտրելի չէր դրամատուն մը մտնել եւ միւս բարեկամներուս նման կայուն գործ մը ունենալ:

Այսպէս սկսայ տարուբերիլ: Հապա ինչ պիտի խորհէր հօրեղբայրս: Ինչ պիտի խորհէին շուրջիններս: Այդուհանդերձ, «փար աքի տը քոնսիանս»²⁴, որոշեցի դիմել Գահիրէի մէջ նոր բացուած գերմանական «Տրեգունտեր Պանք», որուն տնօրէնը հայ մըն էր՝ Արամ Տրենց-Մարգարեան, իսկ փոխ-տնօրէնը Պոլսէն ծանօթ եւ Վիեննական Մխիթարեան Վարժարանի հին շրջանաւարտներէն Արշակ Սեդրոսեանն էր:

Ուժերս հաւաքելով դիմեցի, բայց գաղտնօրէն ներս մտայ՝ մերժուելու ջերմ փափաքով տոգորուած: Պատասխանը եղաւ դրական: Փոխանակ ուրախանալու՝ տխրեցայ:

Ինչ, այսքան տարուան աշխատանքը ծալել մէկդի նետել եւ երթալ պաշտօնեայ ըլլալ, ժամացոյցի եւ փաթրոնի գերի... Այս մէկը՝ երբէք: Չէ, ամէն միջոց եւ փորձ չսպառած՝ իրաւունք չունէի ինքզինքիս եւ սկզբունքիս դէմ դաւաճանելու: Այս որոշումը կոփեց կամքս, վերագտայ վճռականութիւնս, նոր եռանդ եկաւ վրաս եւ որոշեցի անպայման յաջողիլ նախապիրած արուեստիս մէջ:

Ինչո՞ւ չփորձել ցուցահանդէս կազմակերպել: Իբրեւ

²³ Տես՝ այս գիրքին «Ինչպէս Եգիպտոս Եկայ» հատուածը:

²⁴ Խղճի հանգստութեան համար:

երգիծանկարիչ արդէն անուն մը շիներ էի հրապարակի վրայ: Ինչո՞ւ չօգտագործել զայն: Իրաւ ալ, 1927 Մայիսին Գահիրէի Հայկական Սրահին մէջ, նկարիչ Առաքել Պատրիկի հետ միասին, կազմակերպեցինք քաղաքի աչքառու ազգայիններուն դէմքերը ներկայացնող երգիծանկարներու ցուցահանդէս մը, որ նիւթական թէ բարոյական նշանակալի յաջողութիւն մը ունեցաւ:

Քաջալերուած առաջին փորձէն, նոյն տարւոյն Նոյեմբեր ամսուն, նոր ցուցահանդէս մը կազմակերպեցի Աղեքսանդրիոյ մէջ, այս անգամ հայերուն միացնելով նաեւ օտար քանի մը հոգիներու գլուխները: Ասիկա առաջինէն ասելի մեծ յաջողութիւն գտաւ: Զարմանալի չէր: Չէ՞ որ նախընթաց մը ունէի, որուն համբաւը հասած էր Աղեքսանդրիա:

Ճամբաս հարթուած էր: Այլեւս տասը դրամատուն ալ գործ առաջարկէին ինծի՝ պիտի մերժէի: Իսկապէս ալ այս երկու ցուցահանդէսները անուն մը շինեցին ինծի եւ այսուհետեւ ֆրանսական եւ արաբական մամուլին դռները բացուեցան առջեւ: Սկիզբները բնական է, որոշ դժուարութիւններու բախեցայ, բայց դասս սերտած էի: Յուսահատիլ բառը ջնջուած էր բառարանէս:

Եթէ շուտով վիատած ըլլայի եւ կամքի ու յարատեւութեան ուժով յաղթահարած չըլլայի յուսահատական պահերս, այսօր թերեւս դրամատան մը պաշտօնեայ պիտի ըլլայի: Առտուան 9-էն մինչեւ երեկոյեան ժամը 5-ը գրասենեակ, մէկին հանգիստ, երեքէն դարձեալ գրասենեակ, աչքերս ժամացոյցին յառած սպասելով, որ հաճին ինծի ազատութիւն շնորհել՝ դուրսը ուզածիս պէս, ուզածիս չափ օդ շնչելու ազատօրէն, յաջորդ առաւօտ նոյն արարողութիւնը վերսկսելու համար:

Ես կը կարծեմ, որ աշխարհի մէջ յաջողութեան պայմանը երբեք չյուսահատիլն է, անվիատ պայքարիլը՝ ճախողութիւններու դէմ: Գործին տեսակը չէ որ կարելոր է: Կարելորը այդ գործին հանդէպ ունեցած սէրն ու զայն

կատարելագործելու ճիգն է: Բժշկութիւնը, փաստաբանութիւնը, գիտութիւնը սքանչելի մասնագիտութիւններ են: Սակայն, եթէ մէկը բժիշկ, փաստաբան կամ գիտնական չէ ծնած՝ աւելի լաւ է գանոնք մէկդի ծալել ու նուիրուիլ ճիւղի մը, որուն համար ծնած է ինք. ճիւղ մը, գոր կը սիրէ եւ զայն կիրարկելու հաճոյքը կը զգայ, նոյնիսկ եթէ պարզ արհեստաւոր մը ըլլայ ինքը: Էականը իր ընտրած ճիւղին մէջ լաւագոյնն ու կատարեալը ըլլալուն մէջ կը կայանայ: Չկան ճախող բժիշկներ: Կան: Ինչո՞ւ: Որովհետեւ ծնողքն է, որ ընտրած է այդ մասնագիտութիւնը իր զաւկին համար:


Տաղանդը լաւ բան է: Բայց կիրարկուած ճիւղին հանդէպ կիրքը աւելի լաւ է: Կարելի է ըսել, թէ լաւ է նուաճ տաղանդ ունենալ, բայց սէր ու կիրք ունենալ գործի մը հանդէպ, քան մեծ տաղանդ ունենալ, բայց չսիրել ընտրուած ճիւղը:


Թերեւս այս յօդուածը կարդալով այսօր շատեր յուսախաբ եղան, իրենց միլիոնատէր ըլլալու գաղտնիքը տուած չըլլալու համար: Բայց իւրաքանչիւր անհատ կեանքի փորձառութիւն մը ձեռք բերած է, որմէ կրնան թերեւս օգտակար դասեր հանել ուրիշներ:

Մի՛ մոռնաք մէկ բան: Մարդս որքան ալ երկար ապրի, մինչեւ իր կեանքին վերջին ժամը նոր բան կրնայ սորվիլ: Ամէն մէկերնիս իրարու փորձառութենէն կրնանք օգտուիլ:

Ահա այս յօդուածիս դրդապատճառը:

ԱԼՊՈՄ





Սարուխանի ծննդավայր, Արտանուշ



Սարուխանի ընտանիքը




Ալեքսանտր Սարուխան
աջին և իր եղբայրը՝
Լևոն



Սարուխանի
հօրեղբայրը՝
Առաքել Սարուխան,
մտաւորական



*Ձախէն աջ՝ Հերմա Աւետիսեան, Տէր և Տիկին Օննիկ
Աւետիսեան, Սիրվարդ Աւետիսեան , մանուկ
Արա Աւետիսեան և Ալեքսանտր Սարուխան.
Վիեննա, 1923*



*Կիզէյի բուրգերը և Սֆինքս, ձախին Ապտէլբատէր
ԷլՇեննաուի և Ալեքսանտր Սարուխան, 14 Օգոստոս, 1924*



*Տէր և Տիկին Ալեքսանտր և Սիրվարդ Սարուխան,
Գահիրէ, 1929*




*Տէր և Տիկին Ալեքսանտր Սարուխան և դուստրը՝ Սեդա,
1936*



*Տէր և Տիկին Ալեքսանտր
Սարուխան Տը Լեսեփսի
արձանին առջև, Փորթ
Սահտ, 1932*



*Վիլլա Սարուխան,
Հելիոպոլիս,
կառուցուած 1934-ին*



*Ալեքսանտր Սարոյիսան՝
Երկորդ Համաշխարհային
պատերազմի լուրերուն
հետևելու ժամանակ,
1942*




*Ալեքսանտր Սարոյիսան
և իր դուստրը՝ Սեդա,
1937*



*Տէր և Տիկին Ալեքսանտր Սարուխան և Օննիկ Աւետիսեան,
1935*



*Տէր և Տիկին Ալեքսանտր Սարուխան,
Տորթ. և Տիկին Պերճ Հաճօլեան*



*Ալեքսանտր Սարուխան և
Արա Աւետիսեան,
1937*



*Զախէն աջ՝ Սեդա
Սարուխան, Սիրվարդ և
Ալեքսանտր Սարուխան,
1951*



*Ալեքսանտր Սարուխան,
Սեդա և Կարո Ներեւտեան-
ներ, Լուքսոր, 1958*



*Ընտանեկան նկար:
Ոտքի, Ջախէն աջ՝
Սեդա և Կարո
Ներեւտեաններ,
Սիրվարդ Սարուխան:
Նստած՝
Անահիտ Աւետիսեան,
Սօսի և Սիլվա
Ներեւտեաններ,
Օննիկ Աւետիսեան և
Ալեքսանտր Սարուխան,
1965*



*Ալեքսանտր Սարուխան իր երկու թոռներուն՝
Սօսի և Սիլվա ներետեաններուն հետ,
1966*



*Ալեքսանտր Սարուխան իր թոռնիկին՝
Սիլվա ներետեանին հետ, 1970*



Ախրըր Սաայի անձնակազմը՝ Մոհամմէտ Էլթապի-ի շուրջ:
 Աջէն ձախ՝ Շաֆիք Բիգբալլա, Եուսէֆ Էլ Սիպայի,
 Ֆարակ Կուպրան, Սարուխան, Ապտէլ Բահման Նասր, Մոսթաֆա
 Ամին, Մոհամմէտ Ալի Ղարիպ և Դաուֆիք Թըրրատ: Նկարէն կը
 բացակային՝ Ալի Ամին և Քասէմ Ֆարհատ



Ալէքսանտր Սարուխան և Մոհամմէտ Ապտէլ Մէնէմ Բախա,
 Ախպար Էլ Եօմի աշխատասենեակը, 1949



*Ալեքսանտր Սարուխան, հռչակաւոր լրագրող եղբայրներ
Ալի և Մոսթաֆա Ամինին հետ*




*Ալեքսանտր Սարուխան Յորդանանի թագաւոր՝ Հիւսէյնի գծած
պահուն: Ամման, 1955*



Ալեքսանդր Սարուխան , Եգիպտոսի Հանրապետության առաջին նախագահ Մոհամմէտ Նակիպի հետ:
Գահիրէ, 1952



Ալեքսանդր Սարուխան՝ ստեղծագործութեան պահուն



Ալեքսանտր Սարուխան՝ ստեղծագործութեան պահուն





Ալեքսանտր Սարուխան իր՝ «Արշակ Չոպանեան» նկարի կողքին



Ալեքսանտր Սարուխան՝ բանաստեղծներու իշխան Վահան Թէքէեանի հետ, Գահիրէ, 1938



*“L’Art Pour Tous”ի կողմէ կազմակերպուած Եգիպտահայ
նկարիչներու ցուցահանդէսի բացումին օրը,
24 Յունուար, 1962*

*Նստած, ձախէն աջ՝
Հրանդ Անդրանիկեան, Շուշան Էղօյեան և
Ալեքսանտր Սարուխան*

*Ոտքի՝
Յակոբ Յակոբեան,
Այծեմնիկ Պօյաճեան (քանդակագործուհի)
Բիւզանդ Կոճամանեան, իր ետևը՝ Ճօ Էղօյեան,
Օննիկ Աւետիսեան, վարը՝ Շաքէ Ալպան,
վերը՝ Նորա Իփէքեան, Աշոտ Զօրեան և Սիմոն Սամսոնեան*



Զախէն աջ՝
Օննիկ Աւետիսեան,
Գառզու և
Ալեքսանտր Սարուխան,
Հելիոպոլիս,
Գահիրէ, 1945




Ալեքսանտր Սարուխան՝
մտաւորական Միքայէլ
Կիրճեանին հետ



*Ալեքսանտր Սարուխան բանախօսութեան մը ժամանակ:
Կոկանեան Սրահ, Հելիոպոլիս, 1972*

ՆՄՈՅՇՆԵՐ
ԱԼԵՔՍԱՆՏՐ ՍԱՐՈՒԽԱՆԻ ԳՈՐԾԵՐԷՆ

Պահուած Սարուխանի ընտանիքին մօտ
Հեղիոպոլիս - Գահիրէ




Ինքնանկար, յուղաներկ կտաւի վրայ, 1950



«Այս Պատերազմը» «Cette Guerre» գիրքէն



«Այս Պատերազմը» «Cette Guerre» գիրքին



«Այս Պատերազմը» «Cette Guerre» գիրքին



«Այս Պատերազմը» «Cette Guerre» գիրքին











Կողքի ձեւաորում՝ Վրէժ Քասունի
Էջադրում՝ Շահէ Լուսարարեան

مذكرات صاروخان (باللغة الأرمنية)	اسم الكتاب
سيلفا جرابت يعقوب نارديان	المؤلف
جمعية الصندوق الأرمني الأهلي	الناشر
الثانية ٢٠٢٤	الطبعة
نوبار ديجيتال	المطبعة
٢٠١٨/١٧٧٥٦	رقم الأيداع
٩٧٨-٩٧٧-٩٠-٥٧٣٠٩	

